



Williams Morgan

Ուիլյամ Մարտոյան

Անուն Արամ է



Վնասադրություն

1915.info

**Ուիլյամ Սարոյան**

**Անոնս Արամ Է**



Անտառի  
Երևան

William Saroyan  
MY NAME IS ARAM

Անգլերենից թարգմանեց  
ՆՈՒՏԵ ԹՈՐՈՍՅԱՆԸ

ԽՄԲԱԳԻՐ՝  
ԶԱՎԵԼ ԲՈՅԱԶՅԱՆ

թվայնացրէ 5 1915.info Տայտա

**Սարոյան Ուիլյամ**

Անոնս Արամ Է: Պատմվածքներ/Ուիլյամ Սարոյան.- թարգմ.  
Նունե Թորոսյան: Եր.: Անտարես, 2019.- 132 էջ:

«Անոնս Արամ Է» պատմվածքների շարքը Սարոյանի մանկական ու պատանեկան հիշողությունների արձագանքն է՝ յոթնամյա տղայի բացահայտումներից մինչև տասնյոթամյա պատանու ներաշխարհը: Ծայրից ծայր զուտ սարոյանական՝ զարմանալի խանդավառությամբ, խրոխսությամբ ու գաղտնախորհուրդ թախսիծով շաղախաված, նույր հոմորով ներծծված պատմություններ՝ հարազատ փոքրիկ քաղաքի զավեշտալի մարդկանց և դրանց դիմակայող՝ Սարոյանների հերստու ու հպարտ ընտանիքի մասին:

Պատմվածքները թարգմանված են գրքի երկրորդ՝ հեղինակի լրամշակումներով հրատարակությունից:

ISBN 978-9939-76-349-1



Անտարես

MY NAME IS ARAM Copyright  
© William Saroyan, 1940  
Cover © William Saroyan's painting "#21  
Saturday October 17, 1964 Fresno  
Provided by courtesy of William Saroyan Foundation  
© «Անտարես», 2019

## ԳԵՂԵՑԻԿ ՍՊԻՏԱԿ ԶԻՈՒ ԱՄԱՌԸ

Հին լավ օրերից մի օր, երբ ինը տարեկան էի, ու աշխարհը լիքն էր ամեն տեսակ երևակայելի բերկրանքներով, իսկ կյանքն էլ դեռ սքանչելի ու խորհրդավոր երազ էր, զարմիկս՝ Մուրադը, որին, ինձնից բացի, բոլոր ճանաչողները խենթ էին ասում, գիշերվա ժամը չորսին մեր տուն եկավ ու սենյակիս պատուհանը թակելով՝ արթնացրեց:

Արա՞մ, ասաց:

Ես անկողնուց վեր թռա ու պատուհանից նայեցի:

Աչքերիս չհավատացի:

Դեռ առավոտ չէր, բայց ամառ էր, լուսաբացն աշխարհի անկյունը հասել, ուր որ է պիտի շրջանցեր, ու բավական լույս էր, որպեսզի հասկանայի, որ երազ չեմ տեսնում:

Գլուխս պատուհանից հանեցի ու աչքերս տրորեցի:

Հա՛, հայերեն ասաց, ձի է: Երազ չի: Եթե հեծնել ես ուզում, շուն արա:

Գիտեի, որ Մուրադ զարմիկս երբևէ սխալմամբ էս աշխարհ եկածներից ամենախելառն էր: Բայց սա նոյնիսկ ի՞նձ ապշեցրեց:

Նախ ասեմ, որ ինչքան ինձ հիշում էի, ձիերի մասին էի մտածել, ու առաջին երազանքներս ձի հեծնելու մասին էին եղել:

Սա հարցի լավ կողմն էր:

Մեկ էլ ասեմ, որ աղքատ էինք:

Սա էլ հարցի էն կողմն էր, որ հիմա թույլ չէր տալիս  
աչքերիս հավատալ:

Մենք աղքատ էինք: Փող չունեինք: Մեր ամբողջ ցեղն  
էր չքավոր: Ղարօղանյանների գերդաստանի բոլոր  
շառավիղները զավեշտալիության հասնող ծայրա-  
տիճան աղքատ էին ապրում: Ոչ ոք չէր հասկանում, թե  
որտեղից էինք փող ճարում, որ փորներս գոնե մի բան  
մտներ. անգամ ընտանիքի տարեցները: Բայց ամե-  
նակարևորն էն էր, որ մեր ազնվությունն էլ էր բոլորին  
հայտնի: Մեր ազնվությունը, կլիներ տասնմեկ դար,  
բոլորին հայտնի էր: Դեռ էն ժամանակներից, երբ, գոնե  
մեր կարծիքով, աշխարհի ամենահարուստ ընտանիքն  
էինք եղել: Նախ հպարտ էինք, հետո՝ ազնիվ, ապա և  
հավատում էինք խղճով ապրելուն: Մեզնից ոչ մեկը  
երբեք իրեն թույլ չէր տա ուրիշ մեկին խարել: Էլ չասած՝  
գողանալ:

Հետևաբար, ինչքան էլ որ ձիուն դեսնեի՝ էնքա՞ն  
վեհասքանչ, ինչքան էլ որ հոգն առնեի՝ էնքա՞ն դու-  
րեկան, ինչքան էլ որ շնչառությունն ականջիս հասներ՝  
էնքա՞ն ցանկալի, քնած թե արթուն հավաքս չէր գա,  
որ իմ Մուրադ զարմիկի կամ մեր գերդաստանից որևէ  
ուրիշի հետ ինչ-որ կապ ունի, որովհետև գիշեի. Մու-  
րադ զարմիկս ձի գնել չէր կարող, իսկ եթե չէր գնել,  
ուրեմն պիտի գողացած լիներ, բայց էդ մի բանին երբեք  
չէի հավատա:

Ղարօղանյանների ցեղից ոչ ոք չէր կարող գող  
լինել, էն էլ ձիու գող:

Երկա՞ր զարմիկիս նայեցի, հետո՝ ձիուն: Երկուսի  
մեջ էլ մի տեսակ բարեպաշտ խաղաղություն ու զվար-  
թություն կար, որ մի կողմից ինձ դուր եկավ, մյուս կող-  
մից՝ վախեցրեց:

Մուրադ, ասի, ձին ումի՞ց ես գողացել:

Դե թոի՛ր, ասաց, թե հեծնել ես ուզում:

Այսինքն՝ ճիշտ էր: Զին հեց էլ գողացել էր: Էլ ի՞նչ կասկած: Հիմա եկել առաջարկում էր, որ հեծնեմ: Կամ չիեծնեմ՝ ոնց կուգեի:

Բայց մի պտույտի համար ձի գողանալը հո ուրիշ բան, ասենք՝ փող գողանալ չէր, չէ՞: Ինձ հարցնեիք՝ երևի ոչ էլ գողություն էր: Իմ ու Մուրադի պես ձի պաշտողների համար գողություն չէր: Քանի դեռ վաճառել չեինք ուզել, գողություն չէր դառնա, իսկ եղ մեկը հո հաստա՛տ չեինք անի:

Թող հագնվեմ, ասացի:

Լավ, ասաց, բայց շու՛տ:

Շորերս մի կերպ վրաս քաշեցի:

Հետո պատուհանից դուրս թօռա ու ցատկեցի ձիու գավակին՝ Մուրադի հետևը:

Եղ տարի քաղաքի ծայրին՝ Ընկուզենիների փողոցում էինք ապրում: Մեր տնից հետ խաղողի այգիներ էին, մրգաստաններ, առուներ ու ճանապարհներ: Երեք րոպե չանցած՝ Զիթենիների ծառուղի էինք հասել, ու ձին վարգի անցավ: Օդը թարմ էր, ու շնչելը՝ անուշ: Ձիու վարգն էլ՝ հեքիաթային: Մուրադ զարմիկս, որին մեր ընտանիքում խենթ էին ասում, սկսեց երգել: Ավելի ճիշտ՝ սկսեց գոռալ:

Ամեն ընտանիք նախնիներից ժառանգած մի խենթություն ունի: Մեր ցեղի ամբողջ խենթությունը Մուրադ զարմիկիս էր անցել: Նրանից առաջ Խոսրով քեռիս էր՝ սև, բաշի նման մազերով ու Սան Խոսկին հովտի ամենաթափ՝ երևելի բեղով մի ահրելի հսկա, էնքան անզուսաց ու բռնկվող, էնքան անհամբեր, որ մարդու խոսքը կեսից կկտրեր գոռալու համար. բան չկա՛, զլիսիցը հանի՛:

Էսքանը. ով ինչից խոսեր՝ ասածը սա էր: Մի անգամ նրա հարազատ որդին՝ Առաքը, ութ թաղ վազելով

անցել, վարսավիրանոց էր հասել, որ բեղը հարդարելու եկած հորն ասի, թե տունը կրակ է ընկել: Էս Խոսրով քեռիս նստած տեղը ձգվել էր ու բղավել. բան չկա՛, գլխիցդ հանի՛ր: Սափրիչը մեջ էր ընկել, թե՛ ախր տղադ ասաց, որ տունդ վառվում է: Խոսրովը ոռնացել էր. հերի՛ք, ասում եմ: Գլխիցդ հանի՛ր:

Մուրադ զարմիկիս էս մարդու շառավիղն էին համարում, թեև նրա հայր Զոհրաբն ընդամենը պարզ գործունյա մարդ էր: Մեր գերդաստանն էղպես էր: Մարդը կարող էր իր որդու մարմնեղեն հայրը լինել, բայց պարտադիր չէր, որ ոգեղեն հայրն էլ լիներ: Գերդաստանի տարբեր խառնվածքները խառն ու անկանոն էին բաշխված:

Մենք վարգում էինք, Մուրադը երգում էր: Մեզ թվում էր, թե դեռ մեր իին երկրում ենք, այսինքն՝ ինչպես հարևանները կասեին, էնտեղ, ուր մեր տեղն էր: Զիուն թողնում էինք, որ վազի, քանի վազելը գալիս էր:

Վերջապես Մուրադ զարմիկս ասաց՝ իջի՛ր, թող մենակ վարգեմ:

Կթողնե՞ս ես էլ մենակ վարգեմ:

Ես ի՞նչ, թողնողը ձին է:

Զին կթողնի:

Տեսնենք: Չմոռանաս, ես ձիերի հետ վարվելու ձևը գիտեմ:

Ինչքան դու գիտես, էնքան էլ՝ ես:

Ապահովությանդ համար, ասաց, հույս ունենանք, որ գիտես: Իջի՛ր:

Լավ, ասացի, բայց չմոռանաս, որ ինձ էլ ես թողնելու փորձեմ:

Ես իջա, իսկ Մուրադ զարմիկս կրունկները ձիու կողերը խրեց ու գոռաց. վազի՛ր, Վեզիր, քե՛զ տեսնեմ: Զին ծառս եղավ, փնչացրեց ու էնքան արագ սուրաց, որ

շունչս կտրվեց: Մուրադ զարմիկս, ձին հեծած, խանձ-ված դաշտը հատեց, հասավ առվին, ցատկեց անցավ ու հինգ րոպեից հետ եկավ, քրտնաթաթախ առաջս կանգնեց:

Արևը բարձրացել էր, ու չորս կողմը պայծառ շողում էր, ձին՝ ամենից պայծառ:

Իմ հերթն է, ասի:

Մուրադ զարմիկս վար ցատկեց:

Հեծնի՛ր, ասաց:

Ես ձիու մեջքին թռա ու մի պահ զարհուրելի սար-սափ ապրեցի: Զին տեղից չշարժվեց:

Կրունկներդ կողերին խփիր, ասաց Մուրադը, ու՞մ ես սպասում: Քանի մարդիկ չեն զարթնել, պիտի հետ տանենք, չէ՞:

Կրունկներս կողերին խփեցի: Զին էս անգամ էլ ծառս եղավ ու փնչացրեց: Հետո վազեց: Չգիտեի՛ ինչ անեմ: Առվի կողմը վազելու փոխարեն Տիգրան Հալաբյանի խաղողի այգու ճամփով սլացավ ու սկսեց տունկերի վրայով ցատկել: Յոթերորդ տունկից հետո ես ընկա: Ինձ թողեց ու փախսավ:

Մուրադ զարմիկս վազեվագ իմ կողմը եկավ:

Իմ հոգը դու չես, գոռաց: Ձիուն պիտի բռնենք: Դու էս կողմը գնա, ես՝ էն: Որ տեսնես՝ չխրտնեցնես: Ես կգամ, կհասնեմ:

Ես ճամփով վազեցի, Մուրադը դաշտը կտրեց, վազեց առվի կողմը:

Կես ժամ անցավ, մինչև ձիուն գտավ ու հետ բերեց:

Դե լավ, ասաց, գավակին թռիր: Մեկ է՛ բոլորը զարթ-նել են:

Բա ի՞նչ անենք, հարցրի:

Ի՞նչ պիտի անենք, ասաց, կամ հետ կտանենք, կամ կպահենք մինչև վաղն առավոտ:

Ոնց որ հանգիստ էր: Հասկացա, որ հետ չի տանի՝ կպահի: Դեռ կպահի:

Բայց որտե՞ղ ենք պահելու:

Ես տեղը գիտեմ:

Զին ե՞րբ ես գողացել, հարցրի:

Հանկարծ գլխի ընկա, որ առաջին հեծյալ պտույտը չէր, ու էս առավոտ ինձ մոտ գալու պատճառն էն էր, որ գիտեր, թե ո՞նց եմ երազում ձի հեծնել:

Ո՞վ ասաց, թե գողացել եմ:

Լավ, քանի՞ առավոտ ես էսպես պտույտի գնում:

Էսօր առաջին անգամ:

Ճի՞շտ ես ասում:

Իհարկե չէ, բայց որ քեզ հարցնեն, եղանական կասես: Հո երկուսս էլ սուտ չե՞նք ասի: Ինչքան գիտես՝ էսօր առաջին անգամ ենք գնացել:

Լավ, ասի:

Նա առանց խոսելու ձիուն լքված խաղողի այգու ամբարը տարավ: Այգին ժամանակին Վահան Ֆետվաջյան անունով ագարակատիրոց հպարտությունն էր եղել: Ամբարում վարսակ ու առվույտ կար:

Հետո տան կողմը քայլեցինք:

Հեշտ բան չէ, ասաց, ձիուն ընտելացնելը: Սկզբում չէր լսում, բայց արդեն ասել եմ, ձիերի հետ վարվելու ձևը գիտեմ, չէ՞: Ինչ ուզեմ՝ ձին ուզածս կանի: Զիերն ինձ հասկանում են:

Ո՞նց ես գլուխ հանում, հարցրի:

Նոյն լեզվով ենք խոսում:

Հա, բայց ի՞նչ լեզվով:

Պարզ ու հասկանալի:

Երանի ես էլ իմանայի ձիու հետ նոյն լեզվով խոսել:

Դեռ փոքր ես, ասաց: Այ, որ տասներեք տարեկան դառնաս, դու էլ կիմանաս:

Գնացի տուն ու մի կուշտ նախաճաշեցի:

Եղ օրը Խոսրով քեռիս մեր տուն եկավ մի բաժակ սուրճի ու մի գլանակ ծխելու: Սենյակում նստած՝ սուրճ էր խմում ու ծխում ու մեր հին երկիրը հիշում: Հետո մի հյուր էլ եկավ՝ Զոն Բայրո անունով մի ասորի ազարակատեր, որ պարապությունից հայերեն էր սովորել: Մայրիկս հյուրին էլ սուրճ ու ծխախոտ քերեց: Սա էլ գլանակ փաթաթեց ու սկսեց ծխելով սուրճ խմել, հետո տիսուր հոգոց հանեց ու ասաց. մի ամիս է՝ սպիտակ ձիս գողացել են, ու դեռ չեմ գտել: Բան չեմ հասկանում:

Խոսրով քեռիս էլի բռնկվեց ու գոռաց, թե բան չկա, եղածը ձի չի: Հայրենիք ենք կորցրել, մարդ է՞լ ձիու համար լաց լինի:

Զեզ ի՞նչ, դուք քաղաքում եք ապրում: Իմ սայլն առանց ձիու է մնացել: Առանց ձիու սայլն ի՞նչ անեմ:

Գլխիցդ հանի՛ր, թնդաց Խոսրով քեռիս:

Տասը մղոն քայլել եմ, որ ձեր տուն հասնեմ:

Ոտքերդ ինչի՞ համար են:

Զախ ոտքս ցավում է:

Բանի տեղ մի՛ դիր:

Վաթսուն դողար փող արժեր, ասաց Զոն Բայրոն:

Թքա՛ծ փողի վրա, պատասխանեց քեռիս:

Հետո վեր կացավ, տնից դուրս գնաց ու դուռը շրիսկացրեց:

Մայրս փորձեց բացատրել:

Բարի սիրտ ունի, ասաց: Ուղղակի աժդահա է ու հայրենիքը շատ է կարոտում:

Ազարակատերն էլ գնաց, ու ես Մուրադ զարմիկիս մոտ վազեցի:

Նա, դեղձենու տակ նստած, մի կեռնեխի հետ խոսելով՝ վիրավոր թևն էր փորձում բուժել, որ թռչել կարողանա:

Հը՛, ի՞նչ կա, հարցրեց:

Զո՞ն Բայրոն՝ ագարակատերը, մեր տուն էր եկել: Զի՞ն էր փնտրում: Մի ամիս մոտող է: Խոսք տուր, որ քանի հեծնել չեմ սովորել, իետ չես տանի:

Մինչև սովորես՝ մի դարի կանցնի:

Ի՞նչ կլինի, որ մի տարի պահենք:

Մուրադ զարմիկս տեղից վեր թռավ:

Ի՞նչ, որոտաց: Չլինի՝ առաջարկում ես, որ Ղարօղ-լանյանը գող դառնա: Զի՞ն պիտի տիրոջը վերադարձ-նենք:

Ե՞րբ:

Ամենաուշը կես տարուց:

Նա կեռնեխին օդ նետեց: Թռչունը ճիգ արեց, երկու անգամ քիչ մնաց ընկնի, բայց վերջը ճախրեց ու թռավ գնաց:

Երկու շաբաթ ամեն առավոտ ծեզին Մուրադ զար-միկս ու ես ձիուն լքված այգու թաքստոցից հանում եինք ու արշավում, և երկու շաբաթ ամեն առավոտ, հենց հեծնելու իմ հերթն էր գալիս, ծին խաղողի վա-զերի ու մատղաշ ծառերի վրայով ցատկում էր, ինձ մեջքից գցում ու փախչում: Չնայած սրան, հոյս ունեի, որ օրը կգա, ու Մուրադ զարմիկս պես ես էլ ձի հեծնել կսովորեմ:

Մի առավոտ Վահան Ֆետվաջյանի լքված այգու ճանապարհին Զո՞ն Բայրոյին պատահեցինք. քաղաք էր գնում:

Թող ե՞ս հետը խոսեմ, ասաց Մուրադ զարմիկս: Ազա-րակատերերի իետ խոսելու ձևը գիտեմ:

Բայրոն շունչը պահած ձիուն էր նայում:

Բարի լոյս, իմ բարեկամների զավակնե՛ր, ասաց: Զեր ձիու անունն ի՞նչ է:

Հոգիս, հայերեն ասաց Մուրադը:

Սիրուն ձիու սիրուն անուն է: Ազնիվ խոսք, ոնց որ շաբաթներ առաջ գողացած ձիս լինի: Կթողնե՞ք ատամ-ները նայեմ:

Ի՞նչ կա որ, ասաց Մուրադը:

Ագարակատերը ձիու բերանը բացեց ու նայեց:

Մեկը մեկին, ասաց: Ազնիվ խոսք, ծնողներիդ շճա-նաշեի՝ պիտի երդվեի, որ ձիս է: Ձեր ընտանիքի ազնվու-թյունը լավ գիտեմ: Բայց ոնց որ ձիուս երկվորյակը լինի: Կասկածամիտ մեկը սրտին հավատալու տեղ աչքերին կիավատար: Բարով մնաք, փոքրիկ բարեկամներ:

Բարով գնաս, Զո՞ն Բայրո, ասաց զարմիկս:

Մյուս առավոտ կանուխ ձին Զոն Բայրոյի այգին տարանք ու ամբարում թողեցինք: Ծները հետևներիցս կպած՝ ձայն չեին հանում:

Մուրա՛ն, ասի, Վախենում էի, թե շները կիաչեն:

Մեր տեղն ուրիշը լիներ՝ կիաչեին: Բայց ես շների հետ վարվելու ծևը գիտեմ:

Մուրադ զարմիկս ձիու գլուխը գրկեց, քիթը դնչին հպեց, շոյեց, ու գնացինք:

Էդ օրը Զոն Բայրոն սայլով մեզ հյուր եկավ, որ մայ-րիկիս իր գողացած ու հետ բերած ձին ցոյց տա:

Չգիտեմ՝ ինչ մտածեմ, ասաց: Զիս առաջվանից խնամված ու հեզ է դարձել: Փա՛ռք Աստծու:

Խոսրով քեռիս, որ սենյակում նստած չեր երևում, բղավեց. հանգիստ, այ մարդ: Զիդ հետ են բերել: Գլխիցդ հանի՛ր:

## ՄԵՐ՝ ՀԱՆՁՈՐԴ ԳՆԱԼՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Մի տարի մի օր էնպես ստացվեց, որ ժորժի հորեղ-քայրս պիտի հեծանիվն առներ ու քսանյոթ մղոն հեռու՝ Հանֆորդ գնար. ասում էին, իբր էնտեղ գործ կա: Ես էլ հետը գնացի, չնայած ինձնից առաջ զարմիկիս՝ Վազգին ուղարկելու մասին էին խոսում:

Ընտանիքը չէր ուզում բողոքել, որ ժորժիի նման հիմար անդամ ունի, բայց և ուզում էր, որ ամառվա ընթացքում միառժամանակ նրան մտքից հաներ: Եթե Հանֆորդ գնար ու գործ ճարեր՝ ձմերուկ հավաքեր, բոլորը գոհ կմնային: Ժորժին գումար կվաստակեր, համ էլ ոտքի տակ չէր ընկնի: Հիմնական կարևոր բանն էն էր, որ ոտքի տակ ընկնի:

Գրողը տանի դրան էլ, դրա քանոնն էլ, ասաց պապս: Թե մի տեղ կարդաք, որ օրերով ծառի տակ նստած քանոն նվագող մարդը մեծ մարդ է, խոնակ լսեք. գրողը սուս է խոսում: Բանը փողն է: Թող քանոնն առնի ու գնա, մի քիչ քրտինք թափի:

Ասում ես, էլի, պատասխանեց տատս: Մի շաբաթ անցնի, նվագի կարիք զգաս, տեսնեմ ինչ ես ասելու:

Հիմար-հիմար մի՛ խոսիր, ասաց պապս: Թող գնա: Քսանյոթ մղոնը խելքին մոտ հեռավորություն է:

Հիմա ես էղպես ասում, վրա բերեց տատս, բայց երեք օրից կարոտելու ես: Վանդակն ընկած վագրի նման տեղի չես գտնելու: Ու տեսնողը ես եմ լինելու: Մի լավ վրադ կծիծաղեմ:

Եղածդ կին չի՝, պատասխանեց պապս: Թե մի հաստափոր մանրատառ գրքում կարդաք, որ կինը արարման հրաշքն է, չհավատաք. գրողը կնոջից երեսը թեքած երազող մեկն է: Թող գնա:

Ուղղակի ջահելությունդ անցել է, ասաց տատս: Դրա համար էլ ձենդ գլուխդ ես գցել:

Բերանդ փակի՛ր, ասաց պապս: Բերանդ փակիր, քանի ապտակ չես կերել:

Հետո սենյակում հավաքված զավակներին ու թռներին նայեց:

Ասում եմ, որ պիտի հեծանիվն առնի ու Հանֆորդ գնա: Ի՞նչ կասեք:

Ոչ ոք ձայն չհանեց:

Ուրեմն որոշեցինք, ասաց պապս: Հիմա տեսնենք, թե հետն ում ենք ուղարկելու: Մեր անպիտան տղաներից որի՞ն պատժի տեղ ժորժիի հետ Հանֆորդ ուղարկենք: Թե մի տեղ կարդաք, որ ջահելի համար հեռու քաղաք գնալը հետաքրքիր արկած է, խոնս լսեք. գրողը հաստատ ութսուն-իննսուն տարեկան մեկն է, որ երեխա ժամանակ սայլով մի երկու մղոն ճանապարհ է անցել: Լավ, ու՞մ պատժենք: Վազգի՞ն: Վա՞զգն է պատժին արժանի: Առաջ արի, տղա՛:

Զարմիկս՝ Վազգը, գետնից բարձրացավ ու պապիս առաջ կանգնեց: Սա հոնքերը կիտած վրան նայեց, թավ բերդը ոլորեց, կոկորդը մաքրեց ու ձեռքը երեսին դրեց: Համարյա ամբողջ գլուխը ձեռքն առավ: Վազգը տեղից չշարժվեց:

Հորեղբորդ հետ Հանֆորդ կգնա՞ն, հարցրեց պապս:

Եթե պապս ուզի, կգնամ, ասաց Վազգը:

Ծեր մարդը դեմքը խոժողուց ու սկսեց մտածել:

Թող մտածեմ, ասաց: Ժորժին մեր ցեղի ապուշն է: Մի ապուշն էլ դու ես: Երկու ապուշի մի տեղ ուղարկելը խելո՞ք բան է:

Նստածներին դարձավ:

Ձեր կարծիքն եմ ուզում լսել: Հասակ առած ապուշին հասակ առնող ապուշի հետ տեղ ուղարկելը խելո՞ք բան է: Ո՞վ կշահի: Խոսեք՝ տեսնեմ:

Շատ էլ խելքին մոտ է, ասաց քեռի Զոհրաբը: Երկու ապուշ իրար հետ: Մեծն աշխատի, փոքրը եփի-թափի:

Միգուցե, ասաց պապս: Թող մտածեմ. ապուշն ու ապուշը: Մեկն աշխատի, մյուսը՝ եփի-թափի: Եփել գիտե՞ս, տղա՛:

Բա ո՞նց չգիտի, ասաց տատս: Փլավ եփել հո գիտի՞:

Հը, ճիշտ է ասում. երկու բաժին ջրին մի բաժին բրինձ ու մի թեյի գոլալ աղ: Գիտե՞ս ոնց անես, որ փլավդ ուտելու լինի՝ լափ չդառնա:

Բա ո՞նց չգիտի, ասաց տատս:

Ձեռքս քոր է գալիս, հա՛, սաստեց պապս: Թող տղան խոսի: Լեզու ունի: Հը, գիտե՞ս: Թե մի տեղ կարդաք, որ ջահել տղան ծերունուն խելացի պատասխան է տվել, խո՞սքս հիշեք. գրողը Հին կտակարանն է կարդացել ու չափազանցել է սիրում: Գիտե՞ս ոնց անես, որ փլավդ լափ չդառնա:

Առաջ էլ եմ եփել, ասաց Վազգը, ու լափ չեր՝ ուտելու էր:

Աղը տե՞ղն էր: Սուտ չասես, թե չէ ձեռքս քոր է գալիս, հա՛: Վազգը մի պահ վարանեց:

Հասկանում եմ, ասաց պապս, ամաչում ես: Ուրեմն փլավիդ մի բանը տեղը չէր: Ի՞նչն էր պակաս: Ուզածս են է, որ ճիշտն ասես: Մի՛ վախեցիր: Առանց վախենալու ճիշտն ասա, ավել բան չեմ ուզում: Փլավիդ ի՞նչը տեղը չէր:

Աղի էր, ասաց Վազգը: Հետո ամբողջ օրն ու գիշերը ջուր էինք խմում:

Մի՛ երկարացրու, ասաց պապս: Ինչ եղել է՝ է՞ն ասա. փլավն աղի էր: Պարզ է, որ պիտի ամբողջ օրն ու

գիշերը ջուր խմեիք: Բոլորս էլ աղի փլավ կերած կանք: Ինչ է՝ մինչև մյուս օրը ջուր ես խմել, չկարծես, թե աղի փլավ կերած առաջին հայն ես: Ուղղակի ասա, որ շատ աղի էր: Նոր չեմ սովորելու: Գիշեմ: Ասա՝ աղի էր, ու թող որոշեմ. արժի՞ քեզ ուղարկել:

Պապս էլի նստածներին դարձավ: Էլի դեմքը խոժոնեց:

Կարծեմ ճիշտը սրան ուղարկելն է, ասաց, բայց թե ասելիք ունեք՝ խոսե՞ք: Աղին լափից լավ է: Բրինձը հատիկ-հատիկ էր, տղա՛:

Հատիկ-հատիկ էր, ասաց Վազգը:

Կարծեմ ճիշտը սրան ուղարկելն է, ասաց պապս: Զուրը փորին օգուտ է: Հիմա ի՞նչ. Վազգ Ղարօղլանյանի՞ն ուղարկենք, թե՞ ում:

Մյուս կողմից, ասաց Զոհրաբ քեռին, երկու ապուշ իրար հե՞տ: Փլավը՝ փլավ, բայց երսի ճիշտ չի լինի: Ես ասում եմ՝ Արամին ուղարկենք: Թող Արամը գնա. նա էլ է պատժի արժանի:

Բոլորն ինձ նայեցին:

Արամը, հարցրեց պապս, մեր Արամի մասի՞ն ես ասում:

Բա էլ ու՞մ, ասաց տատս: Ինքդ էլ գիտես՝ ում մասին է ասում:

Պապս դանդաղ շրջվեց ու մի կես րոպե տատիս էր նայում:

Թե մի տեղ կարդաք, որ մեկը մի աղջկա է սիրահարվում ու ամուսնանում, խո՞սք լսեք. գրողը շատ ջահել է ու չի էլ պատկերացնում, որ աղջկը հետո՝ մինչև իննսունյոթ տարեկան, մինչև գերեզմանի դուռ ամբողջ կյանքը մեջ է ընկնելու ու խոսի:

Արամ Ղարօղլանյա՞նը, հարցրեց:

Հա, ասաց Զոհրաբ քեռին:

ինչո՞վ է ես դաժան պատժին արժանացել:

*Ինքը գիտի:*

Արա՛մ Դարօղլանյան, ասաց պապս:

Ես վեր կացա ու պապիս առաջ կանգնեցի: Նա երեսս  
իր մեծ ձեռքն առավ ու շոյեց:

Ի՞նչ ես արել, հարցրեց:

Ո՞ր մեկն ասեմ, հարցրի:

Պապս Զոհրաբ քեռուս դարձավ:

Տղային ասա, թե մեղքերից ո՞րը խոստովանի:  
Երևում է՝ մեկից շատ են:

Ինքը գիտի, ասաց Զոհրաբ քեռիս:

Են, որ հարևաններին ցույց էի տալիս, թե ատամ-  
ներդ ո՞նց ես փորում: Ու մյուս ձեռքով էլ բերանդ ծած-  
կում ես, որ չերևա”:

Քեռիս պատասխան չտվեց:

Թե՞ որ քայլելով խոսելդ էի ցույց տալիս. թե ոնց ես  
քայլում ու խոսում:

Ժորժիի հետ ես տղա՛ն պիտի գնա, ասաց Զոհրաբը:

Փլավ եփել գիտե՞ս, հարցրեց պապս:

Զոհրաբ քեռուս ծաղրելու մասին խոսել չուզեց: Եթե  
փլավ եփել գիտեի, ուրեմն ժորժիի հետ ես էի Հան-  
ֆորդ գնալու: Էսքանը պարզ էր: Իհարկե ուզում էի գնալ,  
անկախ էն գրողի ասածից, որ տղայի համար ճամփոր-  
դելը հետաքրքիր արկած է: Ինձ ապուշ ասեին, ստա-  
խոս ասեին, ուրիշ ինչ էլ ասեին՝ ուզում էի գնալ:

Փլավ եփել գիտեմ, ասի:

Փլավդ աղի՞ է լինում, լա՞փ, թե՞ ինչ:

Մեկ-մեկ աղի, մեկ-մեկ լափ, մեկ-մեկ էլ՝ հատիկ-  
հատիկ:

Թող մտածեմ, ասաց պապս:

Մեջքը պատին դեմ տվեց ու սկսեց մտածել:

Երեք բաժակ ջուր բեր, ասաց տատիս:

Տատս գնաց խոհանոց ու խսկույն սկուտեղով երեք  
մեծ բաժակ լիքը ջուր բերեց: Պապս մեկը մյուսի հե-  
տևից երեքն էլ խմեց, հետո նստածներին դարձավ ու  
էլի խոժոռովեց:

Մեկ-մեկ աղի, ասաց: Մեկ-մեկ՝ լափ, մեկ-մեկ՝  
հատիկ-հատիկ: Կարծում եք՝ սրա՞ն պիտի ուղարկենք:

Հա, ասաց Զոհրաբ քեռիս: Հենց սրան:

Լավ, էդպես էլ կանենք, ասաց պապս: Որոշեցինք:  
Հիմա ինձ մենակ թողեք:

Շրջվեցի, որ ես էլ գնամ: Պապս վզիցս բռնեց:

Դու մնա, ասաց:

Երբ մենակ մնացինք, ասաց. Զոհրաբ քեռուդ պես  
քայլելով խոսիր:

Ցոյց տվեցի, ու պապս փորդ բռնած քրքչաց:

Դե Հանֆորդ կգնաս, ասաց: Ապուշ ժորժիի հետ դու՝  
կգնաս՝ փլավդ կուզի աղի լինի, լափ լինի, թե հատիկ-  
հատիկ:

Էսպես էլ որոշվեց, որ ժորժի հորեղբորս Հանֆորդ  
ուղեկցողը ես եմ լինելու:

Մյուս առավոտ լոյսը չբացված՝ ճանապարհ ըն-  
կանք: Ժորժի հորեղբայրս հեծանվի թամբին նստեց,  
ես՝ առջևի երկաթե ձողին, բայց հենց հոգնեցի, իշա  
ու ոտքով քայլեցի: Հետո ժորժի հորեղբայրս իշավ, ես  
նստեցի, իսկ ինքը քայլեց: Մինչև Հանֆորդ հասանք,  
համարյա երեկո էր:

Հանֆորդում պիտի էնքան մնայինք, մինչև ձմերուկ  
հավաքելը վերջանար: Էդպես էր որոշված: Սկսեցինք  
քաղաքով շրջել, որ մնալու տեղ գտնենք՝ մի տուն, որ  
վառարան, գագ ու ջուր ունենար: Հոսանքը կարևոր  
չէր, էնքան որ գագ ու ջուր լիներ: Մի վեց թե յոթ տուն  
նայեցինք, վերջը մեկը տեսանք, որ ժորժի հորեղբորս  
դուր եկավ, ու հենց նոյն օրը վարձեցինք: Տասնմեկ

սենյականոց տուն էր: Գազօջախ կար, հոսող ջրով լվացարան կար, ու սենյակ կար, մեջը՝ մի բազմոց, մի մահճակալ: Մյուս սենյակները դափ-դատարկ էին: Ժորժի հորեղբայրս մոմ վառեց, քանոնը հանեց, նստեց հատակին ու սկսեց նվագելով երգել: Ի՞նչ սիրուն էր: Տեղ-տեղ թախծոտ, տեղ-տեղ՝ զվարթ, բայց միշտ սիրուն: Զգիտեմ, թե ինչքան ժամանակ անցավ, մինչև հասկացավ, որ սոված է, բայց մեկ էլ տեղից վեր թռավ ու ասաց. Արա՞մ, փլավ եմ ուզում:

Մի աման փլավ եփեցի, որ հա՞մ աղի էր, հա՞մ լափի նման, բայց հորեղբայրս ասաց. ի՞նչ համով է, Արա՞մ:

Լուսաբացին թռչունների ծլվլոցից զարթնեցինք:

Բա գո՞րծը, ասացի: Չե՞ս մոռացել, Էսօր գործի ես գնալու:

Էսօ՞ր, հառաչեց Ժորժի հորեղբայրս:

Ի՞նքը դատարկ տնից դուրս եկավ, իսկ ես սկսեցի ավելը փնտրել: Ավել չկար, ու ես գնացի՝ շեմքի աստիճանին նստեցի: Լույսով ես տեղը աշխարհի սիրուն անկյուններից մեկը թվաց: Ընդամենը չորս տնով փողոց էր: Դիմացը՝ երկու տուն էն կողմ, եկեղեցու զանգակատունը տեսա: Էսպես մոտ մի ժամ մնացի նստած: Ժորժի հորեղբայրս հայտնվեց՝ անթաքույց հրճվանքը դեմքին, հեծանիվը գլոր-գլոր քշելով:

Փա՛ռք Աստծու, ես տարի չատացվեց, ասաց:

Ի՞նչը:

Փա՛ռք Տիրոջը, ես տարի էլ գործ չկա:

Ի՞նչո՞ւ:

Բերքահավաքը վերջացել է:

Սուտ ես ասում:

Բերքահավաքը արել, վերջացրել են, էլ գործ չկա:

Հայրդ գլուխդ կշարդի:

Աստծուն փառք, ինչքան ձմերուկ կար՝ հավաքել են:

Ի՞նչ իմացար:

Ագարակատերն իր բերնով ասաց:

Բան է՝ ասել է: Չի ուզել, որ տխրես: Ուղղակի տեսել է, որ սիրտդ գործին կպած չի:

Բերքահավաքը վերջացել է, Աստծուն փառք: Բոլոր քաղցր հասած ձմերուկները հավաքել պոծել են:

Բա ի՞նչ անենք: Այսի բերքահավաքը նոր պիտի սկսվի:

Վերջացել է: Մի ամիս էս տանը կապրենք ու հետ կգնանք: Վեց դոլար վարձ ենք տվել, դեռ բրնձի փող ունենք: Մի ամիս հանգիստ կապրենք, հետո կգնանք:

Անփող, ասի:

Բայց ողջ-առողջ, պատասխանեց: Աստծուն փառք տանք, որ էս տարի ձմերուկը շուտ է հասել:

Ժորժի հորեղբայրս ուրախ-զվարթ տուն մտավ, ու չէի հասցել մտածել, թե ինչ ենք անելու, որ քանոնն առած՝ սկսեց նվագել ու երգել: Երգն ու նվագն էնքան սիրուն էին, որ չփորձեցի էլ, թե տեղից շարժվեմ ու տնից դուրս անեմ: Շեմքին նստած՝ նվագն էի լսում:

Մի ամիս ապրեցինք ու հետ դարձանք: Առաջինը տատս մեզ տեսավ:

Լավ էր՝ եկաք, ասաց: Կանդակն ընկած վագրի պես տեղ ու դադար չէր գտնում: Փողը տվեք տեսնեմ:

Փող չունենք, ասի:

Բայց աշխատե՞լ է:

Չէ: Մի ամիս քանոն է նվագել ու երգել:

Փլավդ ո՞նց էր ստացվում:

Մեկ-մեկ՝ աղի: Մեկ-մեկ՝ լափի պես: Մեկ-մեկ՝ հատիկ-հատիկ: Բայց ինքը չէր աշխատում:

Մենակ թե հայրը չիմանա: Ես մի քիչ փող ունեմ:

Փեշը բարձրացրեց, վարտիքի գրավանից փող հանեց ու ձեռքս դրեց:

Որ պապդ գա, Էս փողը նրան կտաս:

Հետո աչքերիս նայեց ու ավելացրեց. Արամ Ղարօղյան:

Ոնց ասեցիր՝ Էղապես կանեմ:

Պապս տուն եկավ թե չէ՝ սկսեց գոռալ:

Հը՛, արդեն եկա՞ք: Բերքահավաքը շուտ չվերջացա՞վ:

Զեր փողը տեսնե՞մ:

Փողը տվեցի:

Չեմ թողնելու, որ պարապ երգի, բղավեց պապս: Ամեն բան չափ ու սահման ունի: Թե մի տեղ կարդաք, որ հայրը ապուշ տղային խելոքից շատ է սիրում, խո՛սք հիշեք. Էդ գրողն ամուրի է:

Բակում՝ նշենու ծառի տակ, ժորժի հորեղբայրս նվազեց ու երգել սկսեց: Պապս պապանձվեց ու սկսեց լսել: Նստեց թախտին, կոչիկները հանեց ու խոժոռվեց:

Ես խոհանոց գնացի՝ երեք-չորս բաժակ ջուր բերելու, որ նախորդ օրվա փլավից հետո ծարավս հազեցնեմ: Երբ հետ եկա, պապս թախտին մեկնված քնած էր, դեմքին ժպիտ, իսկ նրա որդի ժորժին իր գեղեցիկ, թախծոտ ձայնը գլուխը գցած երգում, տիեզերքն էր փառաբանում:

## ՆՈՆԵԼԻՆԵՐԸ

Մելիք հորեղբայրս երևի աշխարհի ամենաձախողակ ագարակատերն էր: Սեփական երևակայության ձեռքը կրակն էր ընկել: Սիրտը գեղեցկություն էր ուզում. ուզում էր, որ ծառ տնկի ու աճելը տեսնի: Ես իմ ձեռքով հարյուրից ավելի նոնենի եմ տնկել: Ես էլ հորեղբորս պես «Զոն Դիրի» տրակտոր եմ քշել: Սա հողագործություն չէր՝ զուտ արվեստ էր: Հորեղբորս դուր էր գալիս ծառեր տնկել ու նայել, թե ոնց են աճում:

Հակառակի պես չէին աճում: Պատճառը հողն էր: Չոր էր: Ոնց որ անապատ: Հորեղբայրս, ձեռքը իր գնած վեց հարյուր քառասուն ակր տափաստանի կողմն անելով, երբևէ արտաքերած ամենահուզական հայերենով ասել էր. Էստեղ, էս ահավոր անապատում ծաղկանոց կրացվի, հողի տակից սառն աղբյուրներ կրիւն, ու մի սքանչելի հեքիաթային գեղեցկություն կսարքենք:

Հա, հորեղբայր, ասացի:

Մեր ընտանիքից հողակտորը տեսած առաջին ու միակ անդամն էի: Գիտեր, որ կիասկանայի, թե նրան ի՞նչ ուժ էր սնանկացման մղում: Հասկանում էի: Գիտեի, ու ինքն էլ գիտեր, որ գնածը գրողի ծոցում՝ Սիեռա Նևադայի ստորոտում, մի անպետք անապատ էր՝ չոր ցամաք հողից դուրս պրծած բոլոր տեսակի բուսականությամբ ծածկված, մեջը վխտացող մարգաշներ, սկյուռներ, քարադրողներ, օձեր ու հազար ու մի անապատային

արարածներ: Վերի Երկինքը բազեներից, ճուռակներից ու արծիվներից բացի, ուրիշ ներկայություն չեր իմացել: Լոռության, մենության, ունայնության, շիտակության ու արժանապատվության տարածք էր՝ բնությունն իր ամենից հպարտ, ամենից չոր և ամենից գեղեցիկ պարզությամբ:

Հորեղբորս հետ մեր երկտեղ ֆորդից դուրս եկանք ու քայլեցինք պապակ հողի վրայով:

Էս հողն իմն է, ասաց հորեղբայրս:

Ոտքով չոր հողը բոթբոթելով՝ կամաց քայլեց: Ոտքերի տակից մի մողես դուրս թռավ: Հորեղբայրս ուսս բռնեց ու գամվեց տեղում:

Էս արարածն ի՞նչ էր:

Էս պստիկ մողե՞սը:

Հա, ի՞նչ էր:

Հաստատ չգիտեմ, բայց դրանց քարադրող ենք ասում:

Քարադրողը մեզնից երեք ոտնաչափ հեռու կանգ առավ ու գլուխը շրջեց:

Հորեղբայրս պստիկ արարածին նայեց:

Թունավո՞ր է, հարցրեց:

Ուտե՞լը, հարցրի, թե՞ կծելը:

Էն էլ, էն էլ:

Չէ, ուտելու չի: Բայց ոնց որ անվնաս է: Էնքա՞ն եմ բռնել: Որ բռնում ես՝ տրտմում են, բայց չեն կծում: Կուզե՞ն բռնեմ:

Լավ կանեիր:

Կամա՞ց մոտեցա ու հանկարծակի վրան ընկա: Հորեղբայրս նայում էր:

Զգույշ, ասաց: Հաստա՞ն թունավոր չի:

Շատ եմ բռնել:

Մողեսին մոտ տարա: Փորձեց վախը ցույց շտալ:

Ինչ լավ պստիկ արարած է, չէ: Բայց ձայնը դողում էր:  
Կուզե՞ն բռնել:

Չէ, դու բռնիր: Ոչ մի անգամ սրա նման արարած  
մոտիկից չէի տեսել: Ոնց որ աչքեր ունի: Երևի մեզ  
կտեսնի:

Քեզ է նայում:

Հորեղբայրս ուղիղ քարադրոշի աչքերին նայեց:  
Քարադրոշն ուղիղ հորեղբորս աչքերին նայեց: Էսպես  
կես րոպէ իրար աչքերի էին նայում, վերջը մողեսը  
գլուխը շրջեց ու նայեց գետնին: Հորեղբայրս թեթևա-  
ցած շունչ քաշեց:

Հազարով լինեն՝ վայ թե մարդ էլ կսպանեն, ասաց:

Էդքան շատ մի տեղ չեն հավաքվում: Մի տեղում  
դժվար մեկից ավելի տեսնես:

Դրանց մեծը վայ թե կծելով մարդ էլ կսպանի:

Էդքան չեն մեծանում: Սրանց չափն էս է:

Փոքր չափի համեմատ ի՞նչ էլ մեծ աչքեր ունի: Հաս-  
տատ գիտե՞ս, բռնելուց հո չե՞ն կատաղում:

Հեսց ցած դրեցիր, մոռանում են:

Հաստա՞տ գիտես:

Չեմ կարծում, թե երկար հիշողություն ունեն:

Հորեղբայրս, ծանր շնչելով, մեջքն ուղղեց:

Պստիկ արարածին ցած դիր, ասաց: Ամենակարող  
Աստծու անմեղ արարածների հանդեպ բարի լինենք:  
Թե թունավոր չի ու մկան չափի է մնում ու հազարներով  
մի տեղ չես տեսնի, ու հիշողությունը կարճ է, խեղճու-  
կրակին տեղը դիր: Մեր կողքին ապրող էս պստիկ  
արարածներին պիտի սիրենք:

Հա՛, սը՛ր:

Քարադրոշին ցած դրեցի:

Կամաց: Իմ հողի էս տարօրինակ բնակչին չվնասես:

Քարադրոշը ծլկեց, փախավ:

Էս պուճուր արարածները հազար տարի էս հողերում են ապրել, ասացի:

Հազա՞ր, ասաց հորեղբայրս, հաստա՞տ գիտես:

Չէ, ասացի, բայց կարծում եմ: Ի՞նչ որ է, հիմա էստեղ են:

Հորեղբայրս շուրջը նայեց՝ իր հողին, դեսուդեն աճած կալտուսներին, թիզ-թիզ խոտին ու վեր՝ կապույտ երկնքին:

Եսքան տարի սրանք ի՞նչ են կերել, հարցրեց:

Երևի միջատներ:

Ի՞նչ միջատներ:

Պստիկ բգեզներ:

Շարունակեցինք չոր հողով քայլել: Գետնի մեջ ինչ-որ անցքերի հասանք, հորեղբայրս դրանց գլխին կանգնեց ու հարցրեց. սրանց մեջ ո՞վ է ապրում:

Մարգաշները:

Դրա՞նք ինչացու են:

Առնետի պես բան են՝ կրծողների դասից:

Էս բոլոր արարածներն իմ հողում ի՞նչ գործ ունեն:

Ի՞նչ իմանան՝ ում հողն է: Ապրում են, էլի:

Տեսնես էն քարադրողն առաջ մարդու աչքերի նայած կա՞ր:

Չեմ կարծում:

Հո չվախեցա՞վ:

Ի՞նչ իմանամ:

Թե վախեցրել եմ, դիտմամբ չեմ արել: Մի օր էստեղ տուն եմ սարքելու:

Չգիտեի:

Մի հոյակապ շքեղ տուն եմ սարքելու:

Մի քիչ հեռու չի՞:

Քաղաքից կես ժամվա ճանապարհ է:

Եթե ժամում հիսուն մղոն անցնես:

Մինչև քաղաք հիսուն մղոն չկա. Երեսունյոթ է:

Հայ բայց էս ճանապարհով արագ չես գնա:

Աշխարհի ամենասիրուն տունն եմ սարքելու: Էստեղ ուրիշ ապրողներ կա՞ն:

Մի երեք-չորս տեսակի օձեր:

Թունավո՞ր, թե՞ չէ:

Մեծ մաս՝ չէ: Բացի բոժոժավոր օձերից:

Չլինի՞ ուզում ես ասել, որ էստեղ բոժոժավոր օձեր կա՞ն:

Բոժոժավոր օձերը սովորաբար էս հողերում են ապրում:

Քանի՞ սը կլինեն:

Մի ակրի՞ վրա, թե՞ վեց հարյուր քառասունի՝ միասին վեղոցրած:

Մի ակրի վրա:

Մոտավոր ասած՝ երևի երեքը:

Ամեն ակրին՝ երեք հա՞տ: Մոտավոր ասա՞ծ:

Կամ երկուսը:

Այսինքն՝ բոլորն իրար հետ քանի՞ սը կանեն:

Հիմա հաշվեմ. մի ակրին՝ երկու, անգամ վեց հարյուր քառասուն: Համարյա հազարուկես:

Հազարուկես բոժոժավոր օ՞ձ:

Ակրը մեծ է: Մի ակրի վրա երկու օձը շատ չի: Հազիվ աշքովդ ընկնեն:

Ուրիշ ի՞նչ թունավոր արարածներ կան էս կողմերում:

Ուրիշ չգիտեմ: Մյուսները վտանգավոր չեն: Բոժոժավոր օձն էլ վտանգավոր չի, եթե վրան չկանգնես:

Լավ, ասաց հրեղբայրս: Առաջ անցիր, բայց ոտքերիդ տակ նայիր: Բոժոջավոր օձ տեսնես՝ վրան չկանգնես: Չեմ ուզում, որ տասնմեկ տարեկանում մեռնես:

Հա՛, սը՞ր, զգույշ կլինեմ:

Շուր եկանք ու հետ գնացինք: Ճանապարհին ոչ մի բոժոժավոր օձ աչքովս չընկավ: Հորեղբայրս նստեց մեքենան ու գլանակ վառեց:

Էս անկենդան անապատն այգի պիտի դարձնեմ:  
Հա՛, սը՛ր:

Դժվարություններս գիտեմ ու դրանց հախից գալու ձևն էլ գիտեմ:

Ո՞նց:

Քարադրոշների մասի՞ն ես ասում, թե՞ օձերի:

Դժվարությունների:

Հըմ: Նախ մեքսիկացիներ կվարձեմ ու գործի կդնեմ:

Որ ի՞նչ անեն:

Հողը մաքրեն: Հետո ջրիոր փորեն:

Ջրիորը որտե՞ղ են փորելու:

Հողի մեջ: Հետո՝ հենց ջուր ունեցանք, կասեմ, որ հողը վարեն: Հետո կակսեմ աճեցնել:

Ցորե՞ն:

Ցորե՞ն, գոռաց հորեղբայրս: Ցորենն ինչի՞ն է: Հացի եղածը հիսուն սենթ չի՞: Նու՞ն եմ աճեցնելու:

Բա նու՞ն ինչ արժի:

Ի՞նչ իմանամ: Էս երկրում ո՞վ է նուռ տեսել: Հատը՝ տասը, տասնիինգ, քսան սենթ:

Էլ ուրիշ բան չե՞ն աճեցնելու:

Մի քանի ուրիշ պտուղներ էլ եմ մտքիս ոդրել:

Դե՞ղձ:

Հա, մի տասը ակր:

Ծիրան է՞լ:

Անպայման: Ծիրանը շատ անուշ պտուղ է: Ինքը՝ սիրուն, բույրը՝ փառավոր, կորիզը՝ քաղցր: Մի քսան ակր էլ ծիրանենի կտնկեմ:

Երանի մեքսիկացիները ջուրը գտնեն: Էս հողի տակ ջուր կլինի՞:

Անպայման, ասաց հորեղբայրս: Կարևորը՝ գործը սկսենք: Կասեմ, որ օձերից զգույշ մնան: Նուռ, դեղձ, ծիրան...Ե՞լ ինչ:

Թու՞զ:

Մի երեսուն ակր էլ թուզ:

Բա թթի՞ն ինչ կասես:

Թթենին շատ սիրուն ծառ է, ասաց հորեղբայրս: Մեր երկրում դրանք շատ էին աճում: Հը, ինչքա՞ն տնկեմ, որ լավ լինի:

Մի տասը ա՞կր:

Լավ, Ե՞լ ինչ:

Զիթենիներն էլ են սիրուն:

Հա, սիրուն են: Մի տասը ակր էլ ձիթենիներ: Ե՞լ:

Վախենամ էս հողում խնձորենի չաճի:

Երևի, բայց խնձոր չեմ էլ սիրում:

Նա շարժիչը միացրեց, ու չոր հողից չոր ճանապարհ դուրս եկանք: Մեթենան, թափ տալով, կամաց առաջ էր գնում, մինչև հարթ տեղ հասանք, ու ավելի արագ ընթացավ:

Տե՛ս, ասաց հորեղբայրս, որ տուն հասնենք, էս ագարակիս մասին մերոնց մոտ չխոսես:

Հա՛, սը՛ր: (*Ազարակի*, մտածեցի: Ի՞նչ ագարակ):

Թող անակնկալ լինի, թե չէ տատիդ գիտես: Ինչ որ մտքիս դրել եմ, կանեմ, հետո, որ գործն անենք, բոլորին ագարակ կրերեմ, թող զարմանան:

Հա՛, սը՛ր:

Տես՝ ոչ մի շունչ չիմանա:

Հա՛, սը՛ր:

Մի խոսքով, մեքսիկացիները գործի անցան ու հողը մաքրեցին: Համարյա տասը ակրը՝ համարյա երկու ամսում: Յոթ հոգով էին: Քլունգներով ու բահերով էին աշխատում: Ոչ մի բան չէին հասկանում: Տարօրինակ

գործ էր, բայց չէին բողոքում: Կարևորը, որ իրենց վարձը ստանում էին, ել ի՞նչ էր պետք: Երկու եղբայր էին իրենց որդիներով: Մի օր եղբայրներից մեծը՝ Դիեգոն, հորեղբորս քաղաքավարությամբ հարցրեց, թե արածի նպատակն ինչ էր:

Սենյո՛ր, ասաց, հազա՞ր ներողություն, կակտուսներն ինչո՞ւ ենք կտրում:

Ուզում եմ ես հողը մշակել, ասաց հորեղբայրս:

Մյուս մեքսիկացիներն իրենց լեզվով Դիեգոյին հարցրին, թե հորեղբայրս ինչ ասաց, ու սա թարգմանեց:

Սրանք մտածեցին, թե չարժի նեղություն քաշել ու հորեղբորս բացատրել, որ ուզածն անօգուտ է: Ուղակի շարունակեցին կակտուսները կտրել:

Ինչևէ, կակտուսները երկար կտրած չմնացին. մաքրած հողը շատ շուտով նորից կտրածի տեղն աճած կակտուսներով ու մացառներով ծածկվեց: Հորեղբորս էս բացահայտումը, կասեի, ապշեցրեց:

Երևի կակտուսից ազատվելու համար հողը խոր պիտի փորվի, ասացի: Երևի ճիշտ կանես՝ վարես:

Հորեղբայրս խնդիրը Ռայանի հետ քննարկեց, որը գյուղատնտեսական մեքենաների գործ էր անում: Ռայանն ասաց՝ մեր օրերում ճիերի վրա հույս չեն դնի. ճիշտը տրակտոր աշխատեցնելն է, որ մի տարվա գործը մի օրում անի:

Մի խոսքով, հորեղբայրս «Զոն Դիրի» տրակտոր գնեց: Շա՛տ սիրուն էր: Ռայանի մեխանիկներից մեկը Դիեգոյին տրակտոր վարել սովորեցրեց, և մյուս օրը հողամաս հասնելով՝ ես ու հորեղբայրս հեռվում անապատի քար լուսաթյան մեջ դղոդացող տրակտորը տեսանք: Ասես խենթություն լիներ: Խենթություն էր, որ կար: Հորեղբորս կարծիքով հրաշալի էր:

Առաջընթաց եմ ասել, վրա բերեց: Ես էլ քեզ նոր ժամանակները: Տասը հազար տարի առաջ հարյուր հոգով մի շաբաթում էնքան գործ չէին անի, ինչքան տրակտորը մի օրում է արել:

Տասը հազար տարի առաջ՝ Ուզում էիր ասել՝ Երե՞կ:

Ինչ որ է: Ես նոր հարմարանքներին ոչինչ չի հասնի:

Տրակտորը հարմարանք չի:

Բա ի՞նչ է, առարկեց հորեղբայրս: Վարորդը նստած է:

Ո՞նց պիտի կանգներ:

Հենց որ գործը նստած ես անում, ուրեմն հարմարանք է: Սովել գիտե՞ս:

Հա, հորեղբայր: Ի՞նչ մեղեղի կուզես սովեմ:

Ոչ մի մեղեղի էլ չեմ ուզի: Տրակտոր վարող մեքսիկացուն սովիր:

Ինչի՞ համար:

Կարևոր չի, դու սովի՞ր: Թող իմանա, որ Էստեղ ենք ու արած գործից գոհ: Երևի մի քսան ակր վարած կիխի:

Երկու ձեռքիս ցուցամատն ու միջնամատը բերանս դրի ու ինչքան ուժ ունեի՝ փչեցի: Լավ, բարձր սովեցի: Բայց Դիեգոն ոչ մի նշան ցույց չտվեց, թե լսել է: Սիազին հեռու էր: Չհասկացա, թե սովելը հորեղբորս ինչին էր պետք, մեկ է՝ նրա կողմն էինք գնում:

Ելի, ասաց հորեղբայրս:

Ելի սովեցի, բայց Դիեգոն էլի չլսեց:

Մի քիչ էլ ուժեղ:

Երրորդ անգամ՝ թոքերում ինչքան շունչ կար՝ սովեցի, էնպես, որ հորեղբայրս ականջները փակեց: Երեսս կաս-կարմիր կտրեց, բայց սովոցս մեքսիկացուն հասավ: Սա ընթացքը դանդաղեցրեց, տրակտորը շրջեց ու հողը մեջտեղից վարելով՝ դեպի մեզ շարժվեց:

Ուզում էիր, որ էսպես վարի՞:

Կապ չունի:

Ռոպեուկես շանցած՝ տրակտորն ու մեքսիկացին  
մեզ հասան: Մեքսիկացին երջանիկ էր: Փոշի-քրտինքը  
դեմքից սրբեց ու ցած իջավ:

Սենյո՞ր, ասաց, հրաշալի է:

Ուրախ եմ, որ հավանեցիր, ասաց հորեղբայրս:

Կուզե՞ք մի պտույտ տալ:

Հորեղբայրս հեշ չէր ուզում: Ինձ նայեց:

Հը՛, ասաց, նստի՞ր: Մի պտույտ տուր:

Դիեգոն մեքենան բարձրացավ ու օգնեց, որ ես էլ  
բարձրանամ: Ինքը նստեց վարորդի մետաղե աթո-  
ռակին, ես, նրանից բռնած, հետևում կանգնեցի: Տրակ-  
տորը ցնցվեց ու տեղից շարժվեց: Մեքսիկացին մի մեծ  
շրջան արեց ու հորեղբորս կանգնած տեղը վերա-  
դարձավ: Ցած իջա:

Լավ, ասաց հորեղբայրս: Գործիդ գնա:

Մեքսիկացին վարած տեղը հետ գնաց:

Ամիսներն անցնում էին, բայց հորեղբայրս ջուրը չէր  
գտնում: Չորսրուրը հորեր էին փորել, բայց ոչ մեկում  
ջուր չկար: Պոմպեր տեղադրել տվեց, բայց ջուրը չկար  
ու չկար: Տեխասից Ռոյ անունով ջրի մասնագետ եկավ,  
ու եղբայրների հետ սկսեցին տեղանքը հետազոտել:  
Վերջը հորեղբորս ասացին, որ ջուրը կգտնեն: Երեք  
ամիս տևեց: Ջուրը ցեխոտ էր ու սակավ: Մասնագետն  
ասաց, որ ժամանակի հետ կարգի կընկնի, ու Տեխաս  
վերադարձավ:

Երբ հողի կեսն արդեն մաքրած էր, ջուրը՝ գտնված,  
տնկելու ժամանակը եկավ:

Նոնենիներ տնկեցինք: Ամենալավ տնկիներն էինք  
առել ու շատ թանկ: Ընդհանուր առմամբ յոթ հարյուր  
ծառ տնկեցինք, մի հարյուրը՝ ես, հորեղբայրս՝ ութ թե

ինը իատ: Պապակ անապատում կորած՝ քսան ակր նոնենիների այգի ունեինք: Հորեղբորս խելքն իրենը չէր: Մենակ մի խնդիր կար. փողը վերջանալու վրա էր: Ու փոխանակ գործը շարունակելու՝ ամբողջ վեց հարյուր քառասուն ակրը այգի դարձնելու, հորեղբայրս որոշեց ժամանակը, փողն ու եռանդը միայն նոնենիներին նվիրել:

Առաջմ, ասաց: Մինչև սկսենք նուոր ծախել ու փող վաստակենք:

Հա՛, սը՛ր:

Հաստատ չգիտեի, բայց ինձ թվում էր՝ եդ փոքրիկ ծառերից գոնե դեռ մի երկու-երեք տարի կարգին բերք չենք ստանալու, թեև բան չասացի: Հորեղբայրս մեք-սիկացի բանվորներին ազատեց, ու ագարակը երկու-սիս մնաց: Տրակտորը մերն էր, հողը՝ մեծ, և ժամանակ առ ժամանակ գնում էինք տրակտորն աշխատեցնելու, որ կակտուսները հանենք ու նոնենիների արանքի հողը փխրեցնենք:

Ինչևէ, ժամանակի հետ ջրի խնդիրը կարգի չընկավ: Մեկ էլ տեսար՝ հանկարծակի առատ աղբյուր կրիսեր՝ համարյա մաքուր, ու հորեղբորս քեֆին քեֆ չէր հաս-նի, բայց մյուս օրը ջուրն էլի ցեխոտ ու նվազ կդառնար: Ծառերն արմատ էին գցել ու ամրացել, բայց ծարավ էին մնում:

Երկու տարուց ծաղկեցին: Հորեղբորս համար իսկական ցնծություն էր, բայց էդակես էլ պտուղ չտվեցին: Ուղղակի գեղեցիկ էին. մեջը բան չկար:

Եդ տարվա բերքը երեք փոքրիկ նուու էր:

Մեկը ես կերա, մյուսը՝ հորեղբայրս, իսկ երրորդը նրա սենյակում դրեցինք:

Հաջորդ տարի տասնչորս տարեկան դարձա: Տարվա ընթացքում ինձ մի շարք լավ բաներ էին

պատահել հասկացել էի, որ գրել եմ սիրում ու հորեղբորս չափ հասակ էի առել: Նոնենիներն էդպես էլ մեր գաղտնիքն էին մնացել: Հորեղբորս թանկ էին արժեցել, բայց նա շարունակում էր հավատալ, թե շուտով մեծ բերք պիտի հավաքի, վաճառքից փողը հետ բերի ու անցնի անապատի մեջտեղը այգի սարքելու իր երազին:

Ծառերը մի փոքր մեծացան՝ համարյա աննկատ: Մի մասը չորացավ ու մեռավ:

Թույլատրելի կորուստն է, ասաց հորեղբայրս: Ակրից քսան ծառը թույլատրելի կորստի չափն է: Բայց հիմա նորերը չենք տնկի: Հետո:

Դեռ շարունակում էր հողի վարկը վճարել:

Հաջորդ տարի մի երկու հարյուր նուու բերք հավաքեցինք: Սիրուն արկերի մեջ շարեցինք ու առաքեցինք Զիկագո՞՝ մի մեծածախ ընկերության: Տասնմեկ արկդ եղավ:

Մի ամիս մեծածախ ընկերությունից ոչ մի լուր չունեինք, ու հորեղբայրս միջքաղաքայինով զանգ տվեց: Ընկերության տերը՝ Դ'Ագոստինո անունով մի մարդ, հորեղբորս ասաց, որ նուու չի ծախվում:

Արկդը քանիսո՞վ ես տալիս, գոռաց հորեղբայրս:

Մի դոլարով՝ ի պատասխան գոռաց Դ'Ագոստինոն:

Քի՞չ է, գոռաց հորեղբայրս: Արկդը հինգ դոլարից մի սենթ պակաս չտաս:

Մի դոլարով էլ չեն առնում, գոռաց Դ'Ագոստինոն:

Ի՞նչո՞ւ, գոռաց հորեղբայրս:

Չգիտեն ինչ է, գոռաց Դ'Ագոստինոն:

Հետո կասես՝ գործարար ես, գոռաց հորեղբայրս: Նու՞ն են, ի՞նչ են: Հինգ դոլարից պակաս չե՞մ տալիս:

Չի՞ վաճառվում, գոռաց մարդը: Մի հատու ինքս կերա ու ոչ մի երևելի բան չտեսա:

Գի՞ծ ես, գոռաց հորեղբայրս: Նոան պես պտուղ աշխարհում չկա: Հինգ դոլարը կես գինն է:

Ի՞նչ անեմ, գոռաց Դ'Ագոստինոն: Զե՞ն վաճառվում: Պետքս չեն:

Եղավ, կամաց ասաց հորեղբայրս: Հետ ուղարկիր: Արագ առաքումո՞վ:

Տասնմեկ արկղերը ստացանք:

Ամբողջ ձմեռ ես ու հորեղբայրս ազատ ժամանակ նոր էինք ուտում:

Հաջորդ տարի հորեղբայրս հողի վարկը չկարողացավ վճարել: Փաստաթղթերը նախկին տիրոջը վերադարձեց: Իմ ներկայությամբ:

Պարո՞ն Գրիֆիթ, ասաց, ստիպված եմ ձեր ունեցվածքը ձեզ վերադարձնել, բայց մի փոքրիկ խնդրանք ունեմ: Քսան ակր նոնենի եմ տնկել ու շատ երախտապարտ կլինեի, եթե թույլ տայիք ծառերը խնամել:

Խնամե՞լ, զարմացավ Գրիֆիթը, ինչի՞ համար:

Հորեղբայրս փորձեց բացատրել, բայց չկարողացավ: Ո՞նց բացատրես մեկին, որ կարեկից չի:

Մի խոսքով, հորեղբայրս հողը կորցրեց, ծառերն էլ հետը:

Մի քանի տարի անց միասին էդ հողամասը գնացինք ու քայլեցինք նոնենիների այգու կողմը: Ծառերը մեկի պես չորացել էին: Հողը էլի կակտուսներով ու տափաստանային մացառներով էր ծածկվել: Չորացած նոնենիները չհաշված՝ տեղանքը աշխարհի արարումից ի վեր ունեցած՝ առաջվա տեսքն էր ստացել:

Մեռած այգու մեջ մի քիչ պտտվեցինք ու մեքենան վերադարձանք:

Նստեցինք ու քաղաք քշեցինք:

Ոչինչ չասացինք, որովհետև էնքա՞ն ասելիք կար, որ ոչ մի լեզվով չէիր ասի:

## ՄԵՐ ԱՊԱԳԱ ՊՈԵՏՆԵՐԻՑ ՄԵԿԸ՝ ԿԱՍԵՒ

Ես Էմերսոնի դպրոցի երրորդ դասարանում էի: Մի օր հոգաբարձուների խորհուրդը խորհուրդ գումարեց:

Ութ տարիս բոլորել, ինչի մեջ էի կամ ամենաշատը՝ իննս բոլորել, տասի մեջ էի ու բարեհոգի:

Են օրերին խորհուրդները սովորաբար փոքր քաղաքի երեխաների հանդեա խստապահանց չեին, ու եթե ինչ-որ երեխաներ խելքով չեին փայլում, համարվում էր, որ նորմալ է, բան չկա, ու չեին միջամտում:

Բայց որոշ բողոքական քարոզիչներ, մեկ էլ տեսար, առջևը հավաքված փոքրիկ դեմքերին կնայեին ու կասեին. դուք Ամերիկայի ապագա առաջնորդներն եք, արդյունաբերության առաջատարները, ապագա քաղաքական գործիչները, ապագա պոետները՝ կասեինք... Ես տեսակ խոսքերն ինձ դուր էին գալիս, քանի որ սիրում էի պատկերացնել, թե ընկերներս՝ Ալ Վիտսորեն, Դիք Բասմաջն ու Ֆրանքի Ազնեղոն ոնց են արդյունաբերության ապագա առաջատարներ դառնալու:

Ես տղաներն ընտիր բեյսբոլ խաղացող էին, բնավորությամբ՝ անհոգ ու զվարթ. առողջ էին, ամրակազմ ու միամիտ: Եթե մեկը հարցներ, թե ինչ են երազում դառնալ, անկեղծ կպատասխանեին. չգիտեմ, երևի ոչինչ:

Հրապարակված ու աղյուսակած փաստացի տեսության համաձայն մեր թաղի բոլոր բնակիչները պիտի

որ դանդաղաշարժ ու թուլակազմ լինեին, գլխի սխալ կառուցվածքով, կուրծքը՝ ներս ընկած, ուկրերը՝ ծուռումուռ, ձայնը՝ խուլ, ու սրանց նման մի քանի այլ խախտումներով:

Մինչդեռ ըստ դպրոցական ուսուցիչների աչքով տեսածի՝ աղքատ թաղերի էս նվաստ արարածների գլխի ձևը կանոնավոր էր, կուրծքը՝ առողջ, մարմնի կառուցվածքը՝ գեղեցիկ, ձայնը՝ զնգուն, եռանդը՝ անսպառ, իրենք՝ չարաճճիության ծարավ:

Մի տեղ մի բան սխալ էր:

Մեր դպրոցի խորհուրդը որոշել էր սխալը պարզել:

Եվ պարզեց:

Պարզեց, որ սխալը հրապարակված ու այսուսակած փաստացի տեսությունն էր:

Հենց էս ժամանակ էլ առաջին անգամ հրճվանքով ու ցնծությամբ իմացա, որ պոետ եմ: Հիշում եմ, կեսօր էր, ու վեց հարյուր ուրիշ ապագա քաղաքական գործիչների հետ դահլիճում էինք հավաքվել: Հիշում եմ ծեր օրիորդ Օգիլվիի զնգուն հիստերիկ սոպրանոն, որ իմ անունը կանչեց ըստ այբբենական կարգի:

Հերթն իմն էր, որ տասնյոթ աստիճան բարձրանայի, բեմի մեջտեղը կանգնեի, մինչև գոտկատեղս հանվեի, շնչեի, արտաշնչեի ու թողնեի, որ ինձ չափշիեն:

Առաջին պահի շփոթմունքս ու վարանումն արագ տեղի տվեցին, և ի սարսափ խորհրդի, երեք տարեց թիշկների, մի քանի մասնագետ բուժքույրերի ու արդյունաբերության վեց հարյուր ապագա առաջատարների՝ արժանապատիվ ներկայանալու մի գերբնական մղում ունեցաւ:

Փոխանակ տասնյոթ աստիճանը բարձրանալու՝ ես բեմ ցարկեցի:

Հիշում եմ, որ օրիորդ Օգիլվին հանրակրթության տեսուց պարոն Ռիքենբաքերին դարձավ ու վախվորած շնչաց.

Արամ Ղարօղլանյանն է՝ մեր ապագա պոետներից մեկը՝ կասեի:

Պարոն Ռիքենբաքերը վրաս հայացք նետեց, ու ինքն էլ շնուկով հարցրեց.

Ումի՞ց է հերսոտած:

Աշխարհից:

Ես ել, ասաց պարոն Ռիքենբաքերը, բայց Աստված Վկա, եղախի ցատկ չեի կատարի: Լավ, ինչ որ է:

Ծապիկս դեն նետեցի ու ցից-ցից մազերը կրծքին՝ մինչև գոտոկատեղը մերկացած կանգնեցի:

Տեսա՞ք, ասաց օրիորդ Օգիլվին: Գրո՞ն է:

Շունչ քաշիր, ասաց պարոն Ռիքենբաքերը:

Ինչքա՞ն, հարցրի:

Ինչքան կարողանաս, ասաց պարոն Ռիքենբաքերը:

Սկսեցի շունչ քաշել: Չորս րոպե անց դեռ ներշնչում էի: Բնական է, որ հանձնաժողովն ապշել էր: Նրանք տեղում խորհուրդ գումարեցին, իսկ ես շարունակում էի ներշնչել: Երկու րոպե բորբոքված բանավիճելուց հետո որոշեցին խնդրել, որ էլ չներշնչեմ: Օրիորդ Օգիլվին բացատրել էր, որ քանի դեռ չեն ասել, ով գիտի՝ մինչև երեկո չդադարեմ:

Լավ, առաջմ բավական է, ասաց պարոն Ռիքենբաքերը:

Ո՞նց, արդե՞ն: Նոր եմ սկսել:

Հիմա արտաշնչիր:

Ինչքա՞ն:

Տե՛ր Աստված, տնքաց պարոն Ռիքենբաքերը:

Լավ կանեք ասեք, շնչաց օրիորդ Օգիլվին, թե չէ մինչև երեկո կարտաշնչի:

Երեք-չորս րոպե, ասաց պարոն Ռիքենբաքերը:

Երեք րոպե արտաշնչելուց հետո ինձ խնդրեցին, որ հազնվեմ ու գնամ:

Հը՛, ո՞նց էր, հարցրի հանձնաժողովին: Առողջությունս տե՞ղն է:

Արի չխոսենք, ասաց պարոն Ռիքենբաքերը, ի՞նչ կլինի, հեռացի՞ր:

Հաջորդ տարի խորհուրդը որոշեց ինձ բժշկական քննությունից ազատել: Արդյունաբերության ապագա առաջատարներին ու ապագա քաղաքական գործիչներին, ինչ խոսք, պետք էր, բայց ապագա պոետների դեպքում փոքր-ինչ շփոթություն էր առաջացնում:

## ՀԻՍՈՒՆ ՅԱՐԴ ՎԱԶՔԸ

Մի անգամ Նյու Յորքից նամակ ստացա, որից հետո որոշեցի, որ մեր կողմերի ամենազորեղ մարդն եմ դառնալու: Նամակը Լայոնել Սթրոնգֆորթ անունով ընկերոջիցս էր: Ես «Արգոսի» հանրամատչելի գրական հանդեսից մի կտրոն էի կտրել, ստորագրել, ծրաբը դրել ու նրան ուղարկել: Խսկոյն պատասխանել էր՝ համարյա անթաքոյց իրճվանքի հասնող խանդավառությամբ: Դու, գրել էր, անկասկած, արտակարգ խելքի տեր, ականավոր դառնալու նախադրյալներով մարդ ես՝ ի տարբերություն աշխարհը լցրած միջակությունների, որոնք, թող թույլ տրվի ասել, կյանքից կտրված դատարկ երազողներ են: Ու մարդիկ դեռ անունդ կլսեն:

Իմ մասին ունեցած նրա կարծիքն իմ սեփականից քիչ էր տարբերվում: Բայց մեկ է՝ հաճելի էր էսքան խանդավառ համախոհ ունենալը, են էլ՝ Նյու Յորքից, են էլ՝ երբ համախոհ աշխարհի ամենահզոր կրծքավանդակն ունեցող մեկն էր: Նամակի հետ պարոն Սթրոնգֆորթի լուսանկարները կային. կիսամերկ, վրան ընձառյուծի մորթի գցած: Էս աժդահայի ասելով՝ ժամանակին փոքրամարմին ու տկար էր եղել: Հիմա ուտքից գլուխ էնպիսի պիրկ մկաններ ուներ, որ երկտեղ ֆորդը հեշտ ու հանգիստ կբարձրացներ ու շուտ կտար:

Էսպիսի մարդու ընկեր լինելը մեծ պատիվ էր:

Մի խնդիր կար՝ փող չունեի: Չեմ հիշում, թե մեր ծանոթության առաջին օրերին խոսքն ինչ գումարի մասին էր, մենակ գիտեմ, որ ինձ աստղաբաշխական թվաց: Շատ էի ուզում պարոն Ստրոնգֆորթին ջերմ խոսքերի համար շնորհակալություն հայտնել, միայն թե ոչ մի կերպ փող չունենալուս մասին գրելու էն բառերը չեի գտնում, որ ինձ էլ մի զարկով դատարկ երազող միջակություն չդարձնեին: Եսպես՝ ամեն օր վաղվան թողնելով, շուրջս տակնուվրա անելով, որ մեր ընկերությանը չսպառնացող ու ինձ նվաստ միջակության չվերածող բառեր գտնեմ, հոգս հորեղբայր Գիքոյին պատմեցի, որ էն օրերին արևելյան փիլիսոփայությամբ էր տարվել: Տարօրինակ փափագիս վրա զարմացավ, բայց գոհ մնաց: Ըստ յոգայի, ասաց, մեծության գաղտնիքը բոլորիս ներսում եղած խորհրդավոր կենսական ուժերին ազատություն տալու մեջ է:

Էս ուժը, ասաց անգլերեն, որին սիրում էր դիմել ինձ հետ խոսելիս, ու ձայնավորները ձգելով, Աստծոց է գալիս: Այնո՞ւ, Արա՞մ, ասաց, հրաշալի ուժ է:

Պատասխանեցի, որ մինչև պարոն Սթրոնգֆորթին փող չուղարկեմ, ուզածս զորեղ մարդը չեմ կարենա դառնալ:

Փողը, ասաց արհամարհանքով, քեզ ասեմ, Արա՞մ, փուչ բան է: Աստծուն չե՛ս կաշառի:

Հորեղբայր Գիքոն, իհարկե, փոքրամարմին ու տկար չեր, բայց Լայոնել Սթրոնգֆորթին չեր հասնի: Համարյա չեի կասկածում. որ ըմբշամարտի բռնվեհն՝ պարոն Սթրոնգֆորթը հորեղբորս մեջքը գետնով կտար կամ թևը կոլորեր, կամ մի այլ հնարքով կատիապեր հանձնվել, կամ էլ կճզմեր, մինչև շունչը փշի: Հա, բայց մյուս կողմից, թեկուզ հորեղբայրս պարոն Սթրոնգֆորթի չափերը չուներ, ոչ էլ պարոն

Սթրոնգֆորթը հորեղբորս վայրի կատաղությունն ուներ: Մտածեցի՝ հեզ որ չիներ, պարոն Սթրոնգֆորթը, հորեղբորս դեմ դուրս գալով, իր համար անսպասելի լուրջ փորձանքն էր ընկնելու. Նկատի ունեմ են խորհրդավոր կենսական ուժը, որին հորեղբայրս միշտ ազատություն էր տալիս, ու շատ հաճախ նրա նետած մի հայացքից աժդահան կերերար ու շուր կգար կամ եթե խոսելիս լիներ՝ տեղնուտեղը կպապանձվեր:

Պարոն Սթրոնգֆորթին փող չունենալուս մասին բացատրելու խոսքեր դեռ էդաքս էլ զգտած՝ նրանից երկրորդ նամակը ստացա: Ես մեկն էլ առաջինի պես ջերմ էր, կասեի՝ մի բան էլ ավելի ջերմ: Հրճվանքս չափ չուներ. խորհրդավոր կենսական ուժիս ազատություն տալով՝ սկսեցի վազվզել, գլուխկոնծի տալ, ծառերը մագլցել ու ցատկուել, փորձեցի երկտեղ ֆորդեր շրջել, ամեն պատահածի հետս կռվելու էի կանչում և զանազան ուրիշ ձևերով հարազատներիս վախեցնում ու հարևաններիս գրգռում:

Պարոն Սթրոնգֆորթը ոչ միայն չէր նեղացել, այլև դասընթացի գինը գեղչել էր: Ճիշտ է, անհրաժեշտ գումարը դեռ հնարավորություններիցս մեծ էր: Ես ամեն օր թերթեր էի վաճառում, բայց էղ փողը հացի ու մյուս բաների համար էր: Մի որոշ ժամանակ սկսեցի առավոտ լույսը չբացված վեր կենալ ու քաղաքում թափառել, որ փողով լիքը պայուսակ գտնեմ: Խիզախումներս վեց օր տևեցին և պսակվեցին մեկ հինգինսանոց ու երկու մեկփենսանոց կարողությամբ: Բացի դրանից, մի կանացի պայուսակ էի գտել առանց մի դրամի, ինչ-որ զզվելի կոսմետիկ պարագաներով ու թղթի պատառիկով, որի վրա տառասիսալներով գրված էր. Սթիվ Հերթվիգ, Վենտուրա պող. 3764:

Երկրորդ նամակս ստանալուց երեք օր անց երրորդը եկավ: Էս պահից մեր նամակագրությունը դարձավ միակողմանի: Այսինքն՝ ես առհասարակ ոչ մի նամակ չեմ գրում: Պարոն Սթրոնգֆորթի նամակները նեղն էին գցում, ու առանց փողի դրանց պատասխանելն էնքան էլ հեշտ չէր: Փաստորեն համարյա ասելիք չկար:

Առաջին նամակը ձմռանն էր եկել, ու հենց ձմռանն էլ որոշել էի, որ մեր թաղի, իսկ վերջիվերջո, ըստ իմ պատկերացման, աշխարհի ամենահզոր մարդկանցից մեկն էի դառնալու: Դրան հասնելու սեփական գաղափարներն ունեի, համ էլ լյու Յորքի պարոն Սթրոնգֆորթի ջերմ բարեկամությունն ու հարգանքն ունեի, իսկ տանը՝ հորեղբայր Գիքոյի խորհրդավոր ու մոլեգին հովանավորությունը:

Ամբողջ ձմեռ ու գարուն շարունակում էի երկու-երեք օրը մեկ պարոն Սթրոնգֆորթից նամակ ստանալ: Հիշում եմ, են օրը, որ ծիրանները հասել՝ գողանալու պատրաստ էին, նյույորքցի բարեկամիցս մի սքանչելի նամակ եկավ: Նամակը ձռն էր աշխարհի զարթոնքին, գարնան գալստյանը, ջահել սրտերին, նոր կյանքին, նոր ուժին, նոր խիզախումներին ու շատ ուրիշ բաների: Գրավոր խոսքի գեղեցիկ նմուշ էր, երևի նոյնքան գեղեցիկ, որքան Պողոս առաքյալի նամակը հոռմեացիներին կամ ցանկացած մեկին: Համակված էր առասպելական ոգով, աշխարհի շնչով ու բիբլիական ժամանակներին բնորոշ արժանապատիվ զորությամբ: Գեղեցիկ ձռնի վերջին պարբերությունը՝ մի փոքր երկշոտ, դրամական գուեհիկ հարցերին էր դառնում: Գումարը վեց կամ յոթ անգամ սկզբնականից քիչ էր, իսկ ինձ անհայտ մեկից դյուցազնական ուժի տեր և կանաց համար անդիմադրելի հմայքով անձնավորություն

դարձնելով՝ պարոն Սթրոնգֆորթի ծրագրում նոր տարրեր էին հայտնվել: Որոշել էր, գրում էր նա, որ ամեն ինչ մի թափից կամ մի զարկով կամ դրա պես մի ձևով կսովորեցնի: Մի խոսքով, երեք դոլարով, ասում էր, մեկ նամակով իր բոլոր նվիրական գաղտնիքները կուղարկի, իսկ մնացածը թող ե՞ս որոշեմ:

Սուաջարկը հորեղբայր Գիբոյին պատմեցի, որն էդ միջոցին ծոմ պահելու, խորհելու, ժամերով քայլելու և մարմինն ու միտքը կարգավորելու մյուս հնարքների մակարդակին էր հասել: Ամբողջ ձմեռ շաբաթը երկուերեք անգամ զրույցներ էինք վարել, ու իր անկրկնելի կոտրված անգլերենով ինձ պատմել էր բոլոր գաղտնիքները, որ ինքն էր յոգայից սովորել:

Քեզ բան եմ ասում, Արա՞մ, ինչ ուզե՞ս՝ կարող եմ անել: Այո՞ո, հրաշք է:

Ու ես հավատում էի, թեկուզ անասելի նիհարել էր, քունը կորցրել, աչքերում էլ տարօրինակ տենդագին փայլ էր հայտնվել: Նա սկսել էր աշխարհը հոգով-սրտով արհամարհել ու ահավոր խղճմտանքով էր լցված խեղճ անխոս կենդանիների հանդեպ, որոնց մարդը շահագործում է, սպանում, ուսում, ձեռնասուն դարձնում ու սովորեցնում իր քմահաճույքները կատարել:

Քեզ բան եմ ասում, Արա՞մ, ձիերին չարչարելը հանցանք է: Կովերին մորթելն էլ: Շներին հետևի թաթերին քայլել ստիպելն էլ, կապիկների բերանը ծխամորճ խցկելն էլ:

Ես պարոն Սթրոնգֆորթի նամակը պատմեցի:

Էլի փո՞ղ, ասաց, հենց մենակ փող է ուզում: Էդ մարդուն չե՞մ հավանում:

Հորեղբայրս իր բաժին «թմրանյութը» ձրի էր ստանում՝ հանրային գրադարանի «Աստվածաբանություն-փիլիսոփայություն-աստղաբաշխություն և

այլն» վերնագրած դարակից, թեկուզ ինքը համոզված էր, որ ուղիղ Աստծուց է ստանում: Նախքան յոգայով հրապուրվելը ասող-խոսող, քեֆչի, օղի խմող տղա էր: Բայց լրացավորյալ դարձավ թե չէ՝ խմելը թողեց: Ասաց, որ հիմա օղուց ու ամեն խմիչքից շատ ավելի լավ խմիչք ունի:

Էդ ո՞րն է, հարցրի:

Արա՞մ, ասաց, խմատությունն է, այո՞ն:

Ինչ որ է, պարոն Սթրոնգֆորթին չէր հավանում ու ասաց, որ խարեբայի մեկն է:

Չէ, կարգին մարդ է, ասացի:

Մրանից հորեղբայրս կատաղեց, խորհրդավոր կենսական ուժին ազատություն տվեց ու բղավեց՝ գլուխը կշարդեմ, որ մեկ էլ փոքր երեխաներին հիմարացնել չփորձի, այո՞ն:

Չի՛ հիմարացնում, ասացի: Ասում է՝ Երեք դոլարով բոլոր գաղտնիքները կպատմի:

Քեզ բան եմ ասում, Արա՞մ, ոչ մի գաղտնիք էլ չունի: Խարեբայի մեկն է, այո՞ն:

Չգիտեմ: Ուզում եմ փորձել:

Խարդախություն է, ասաց Գիքո հորեղբայրս, բայց լավ, Երեք դոլարդ կտամ:

Անհրաժեշտ երեք դոլարը տվեց, ու ես պարոն Սթրոնգֆորթին ուղարկեցի: Նյու Յորքից պարոն Սթրոնգֆորթի գաղտնիքներով լի ծրարը եկավ: Տարօրինակ ձևով պարզունակ էին: Բաներ էին, որ առանց էդ էլ գիտեի, բայց ծովությունից ուշադրություն չէի դարձրել: Ամբողջը հանգում էր առավոտ կանուխ զարթնելուն ու մի ժամի չափ տարբեր մարմնամարզական վարժանքներ անելուն, որոնք մանրամասն նկարագրել էր: Մեկ էլ պետք էր շատ ջուր խմել, մաքուր օդ շնչել, կարգին ուտել ու սպասել, մինչև հսկա դառնաս:

Մի տեսակ հուսախար եղա ու պարոն Սթրոնգֆորթին հենց էդպես էլ գրեցի: Չպատասխանեց. էլ նրանից նամակ չստացա: Մինչդեռ ես էդ ընթացքում հետևում էի կանոններին ու օր օրի ամրանում: «Էդ ընթացքում» ասած չորս օր էր. չորս օր հետևում էի կանոններին: Հինգերորդ օրը որոշեցի, որ լավ է քնեմ ու առավոտ կանուխ վեր չկենամ, չաղմկեմ ու տատիս հանգիստը չխանգարեմ: Թե չէ տատս մութնովուսին զարթնում էր ու գոռում, որ անբան իհմարի մեկն եմ ու երբեք փողի տեր չեմ դառնա: Հետո էլի մի հինգ րոպե քնում էր, զարթնում ու գոռում, որ երբեք օգուտով առևտոր անել չեմ սովորի, ու էլի քնում: Նորից զարթնում էր ու բրավում, թե ժամանակով մի թագավոր է եղել, որ երբեք որդի է ունեցել. մեկը՝ հոր պես խելացի, մյուսի ուշքումխքն աղջիկներն էին, իսկ երրորդը հավի խելք ուներ: Հետո վեր էր կենում, որ քանի վարժանքներս էի անում, ամբողջ պատմությունը բրավելով ինձ պատմեր:

Պատմության իմաստը սովորաբար ինձ զգուշացնելն էր, որ խելքս գլուխս հավաքեմ ու իմ աղմուկով ամեն օր՝ լուսը չբացված, իրեն տեղից չհանեմ: Իմաստը միշտ քիչ թե շատ նույն էր, թեև ինքը՝ պատմությունը, մեկ թագավորի երեք որդիների մասին էր, մեկ երեք երբոր, որոնք բոլորն էլ շատ հարուստ էին ու որպես կանոն՝ ազահ, մեկ երեք դուստրերի, կամ երեք առածի, կամ երեք ճամփաների, կամ դրանց պես բաների մասին:

Իգուր էր չարչարվում, քանի որ վաղորդյան մարգանքս ինձ ավելի մեծ հաճույք չէր պատճառում, քան իրեն: Մի բան էլ ավելի. ինձ էլ էր սկսում թվալ, թե ապուշություն է, ու որ հորեղբայր Գիքոն էն գլխից ճիշտ էր ասել պարոն Սթրոնգֆորթի մասին:

Մի խոսքով, պարոն Ստրոնգֆորթի ծրագիրը մի կողմ թողեցի ու սեփական ծրագրիս անցա, որը մոտավորապես սա էր. հանգիստ մեծանալ և առանց ջանքի ու չարչարանքի սպասել, որ մեր կողմերի ամենազորեղ մարդը դառնամ: Էդպես էլ արեցի:

Էդ գարուն Լոնգֆելոյի դպրոցը որոշեց մրցում կազմակերպել: Երկու դպրոց պիտի իրար հետ մրցեին: Բոլորի մասնակցությունը պարտադիր էր:

Վերջապես, մտածեցի, առիթը եկել է: Համոզված էի, որ ամեն տեղ առաջինն եմ լինելու:

Չգիտեմ ոնց՝ մրցումների մասին շարունակ մտածելս վերածվեց մոլեգին սպասողականության, որը գիշեր-ցերեկ չէր դադարում, ու մինչ օրը կգար, հասցրի հիսուն յարդ վազքը հարյուրավոր անգամներ վազել, թափավագքով ու առանց հրման հեռացատկերը ուստանել, թոհչք բարձրությունը հաղթահարել՝ սրանցից ամեն մեկում մրցակիցներիս խեղճուկրակ վիճակում թողնելով:

Իսկը յոգին վայել էս անսպառ ներքին եռանդս մրցման օրը տեսնի վերածվեց:

Պահը հասավ, որ ես ու երեք ուրիշ մարզիկներ, որոնցից մեկը՝ հոյն, պիտի դիրքավորվեինք ու զգա՞ստ, պատրա՞ստ, վա՞զք հրահանգը կատարեինք: Ես կատարեցի մոլեգին արագությամբ, որպիսին, գիտեի, սպորտի պատմությունը դեռ չէր տեսել:

Ինձ թվում էր, թե որևէ մարդ արարած երբեւ էսքան արագ պլացած չկար: Մտքումս հիսուն յարդն արդեն հիսուն անգամ վազել վերջացրել էի, երբ աչքերս բացեցի ու տեսա, թե մյուսներից ո՞նց եմ հետ ընկել: Տեսածս ինձ ապշեցրեց:

Երեք դողա, ինձնից չորս յարդ առաջ ընկած, շարունակ հեռանում էին:

Անպատկերացնելի էր: Անհավատալի էր, բայց ակնհայտ փաստ: Ինչ-որ սխալ պիտի լիներ, բայց սխալ չկար: Տեսնում էի՝ առջևս էին ու շարունակում էին հեռանալ:

Լավ, ուրեմն ընդամենը պիտի աչքերս բաց նրանցից առաջ անցնեի, որ վազքը հաղթեի: Ու գործի անցա: Բայց նրանք զարմանալիորեն, ի հեճուկս ինձ, շարունակում էին հեռանալ: Ես բարկացա ու որոշեցի, որ հանդգնության համար դրանց պիտի տեղը դնեմ, և սկսեցի ներսիս ամբողջ կենսական ուժին ազատություն տալ: Չգիտես ինչո՞ւ չմոտեցա, ու սկսեց թվալ, թե մի անհասկանալի ձևով ինձ դավաճանել են: Որ էդպես է, մտածեցի, հենց ի հեճուկս դավաճանության՝ պիտի վազքում հաղթեմ, որ ամոթով մնան: Եվ վազքիս նոր թափ ու շունչ տվեցի: Վազքուղու մեծ մասն անցել էինք, բայց գիտեի, որ կկարողանամ:

Հետո իմացա, որ չեմ կարողանա:

Վազքն ավարտվեց:

Ես վերջինը հասա՝ տասը յարդ հետ:

Առանց չնշին իսկ վարանելու բողոքարկեցի ու պահանջեցի, որ էլի՛ վազենք. նույն տարածությունը՝ հակառակ ուղղությամբ: Նրանք առաջարկս բանի տեղ չդրեցին, ինչը, անշուշտ, ապացուցում էր, որ վախենում էին հետս մրցել: Լավ էլ գիտեք, որ կպարտվեք, ասացի:

Մյուս բոլոր մարզաձևերում քիչ թե շատ նույն բանը կրկնվեց:

Երբ տուն հասա, ճակատս վառվում էր, ու բարկությունից դողում էի: Ամբողջ գիշեր զառանցեցի ու երեք օր հիվանդ պառկեցի: Տասու ինձ մեծ հոգատարությամբ խնամեց, ու երևի դրա շնորհիվ չմեռա: Հորեղբայր Գիքոն հիվանդատես եկավ. էլ առաջվա պես հյուծված չէր: Երևում էր՝ երկարատև, քառասուն օր, թե մի էդքան

տևած ծոմը վերջացել էր: Խորհելուն էլ էր վերջ տվել,  
քանի որ փաստորեն խորհելու նյութ չէր մնացել: Նորից  
առաջվա ասող-խոսող, խմել սիրող, գիշեր լուսացնող  
ու կանանց սիրահետող մարդն էր դարձել:

Քեզ ասեմ, Արամ, մենք հզոր ընտանիք ենք: Ինչ  
*ուզենք՝* կարող ենք անել:

## ԻՍԿԱԿԱՆ ՀՆԱԾՈՅ ՍԻՐԱՎԵՊ ՍԻՐԱՅԻՆ ՔԱՌՅԱԿՆԵՐՈՎ ՈՒ ՄՅՈՒՄ ԲԱՆԵՐՈՎ

Իմ զարմիկ Առաքն ինձնից տարիուկես փոքր էր, կլոր դեմքով, թուխ ու զարմանալիորեն բարեկիրթ վարքով: Զն չէր թափում. ի բնե վայելուց շարժուձն ուներ, ոնց որ ես՝ ի բնե անշնորհք: Դպրոցում թե մի խնդիր ծագեր, իսկոյն կիարթեր. առջևի հեռու-հեռու ատամները բաց՝ մեղմ կժպտար, ու մեր ուսուցչուհու՝ օրիորդ Դաֆնիի քար սիրտը կիավեր: Մինչդեռ ես կփորձեի վերլուծել, աղմկոտ եռանդով օրիորդ Դաֆնիին կամ ով էլ լիներ՝ ապացուցել, որ մեղավորն ինքն է, ու գործը Գերագոյն դատարան հասցնել անմեղ լինելս ապացուցելու համար:

Որպես կանոն՝ ինձ տնօրենի մոտ էին տանում: Առիթառիթ մտրակ էի ուսում տնօրենի՝ պարոն Դերինչերի հետ վիճելու համար, որը հե՛շ բանավիճել չգիտեր: Նեղը գցեի, թե չէ՝ գոտին ձեռքն էր առնում:

Առաքն ուրիշ էր. պետքն էլ չէր, թե արդարության համար կոիվ տար: Խելքով ինձ չէր հասնի, ու թեկուզ տարիուկես էլ փոքր էր, նոյն դասարանում էինք սովորում: Ուսուցիչներիս հետ բոլոր վեճերը սովորաբար ես էի շահում, բայց փոխանակ ուզենալու ինձնից պրծնել, նրանք ինձ նոյն դասարանում էին թողնում, երևի (գոնե ես հոյս ունեի), որ հաջորդ տարի վեճն իրենք շահեն ու ոչ-ոքի անեն: Սա էր պատճառը, որ հինգերորդ դասարանի ամենատարիքով աշակերտն էի:

Մի օր օրիորդ Դաֆնին ի լուր աշխարհի հայտարեց, թե գրատախտակի ոտանավորը, որն ասում էր, իբր ինքն անճռոնի է, հետն էլ պարոն Դերինջերին սիրահարված, ես եմ գրել: Ոտանավորի հեղինակը ես չեմ, զարմիկ Առաքն էր: Ես որ գրեի, օրիորդ Դաֆնիի մասին չեմ գրի, այլ մի արժեցող բանի: Ինչ որ է, օրիորդ Դաֆնին առանց անուններ տալու, բայց քանոնն առած, եկավ, կողքիս կանգնեց ու ասաց, որ գրատախտակի խայտառակ վրդովեցուցիչ խզբզոցի հեղինակին կգտնի, ու ամեն ինչ կանի, որ անպիտան տղան արժանի պատիժը ստան:

*Տղա՞ն, ասացի: Ինչի՞ց իմացաք, որ անողը տղա է, ոչ թե աղջիկ:*

Օրիորդ Դաֆնին քանոնը տուր թե կտաս մատներիս: Ես տեղիցս թռա ու ասացի՝ անտեղի մատներիս խփելու իրավունք չունե՞ք: Կրողոքե՞մ:

*Տե՛ղդ նստիր, ասաց օրիորդ Դաֆնին:*

*Նստեցի: Նա աջ ականջս բռնեց, որն արդեն իր ու մյուս ուսուցիչների հաճախ քաշելուց սկսել էր ձևը կորցնել:*

*Ես տեղս նստեցի ու շատ կամաց, համարյա անլսելի, ասացի՝ դեռ կտեսնե՞ք:*

Լեզուի, ասաց օրիորդ Դաֆնին, ու թեև կատարվածից շատ բարկացած էի, լեզուս հանեցի ու էդաբս մնացի, իսկ մյուս՝ մեքսիկացի, ճապոնացի, հայ, հույն, իտալացի, պորտուգալացի ու պարզ ամերիկացի տղաներն ու աղջիկները, որոնք սպասում էին, թե երբ եմ իրենց ուրախացնելու, սկսեցին հոհոալ: Օրիորդ Դաֆնին քանոնով ձեռքիս վրա հարձակվեց, բայց ես անգամ քիթս քերծեց: Սա ինձ համար մահացու վիրավորանք էր, քանի որ էն օրերին, ինչպես և հիմա, մեծ քիթ ունեի: Փոքր լիներ՝ քանոնը չեր դիաչի, ու ես օրիորդ Դաֆնիի

արարքը որպես քթիս մեծությանն արված ակնարկ ընդունեցի:

Կապտած մատներս կարմրած քթիս դրի ու նորից ոտքի կանգնեցի:

Դուք չասացիք՝ լեզու՛ղ, գոչեցի՝ ուզելով պնդել, որ ոչ մի վատ բան չեմ արել՝ ընդամենը ուսուցչիս հրահանգն եմ կատարել, հետևաբար անմեղ եմ ու բոլորովին չեմ արժանացել ոչ մատներիս հարվածին, ոչ քիթս քերծելուն:

Խելոք մնա, ասաց օրիորդ Դաֆնին: Էլ արարքներդ չեմ հանդուրժելու: Խելոք մնա:

Ձեռքս քթից ցած բերի ու սկսեցի խելոք մնալ: Նրան անուշ խնձոր բերող տղայի պես քաղցր ժպտացի: Հանդիսարահս որոտընդոստ քրջաց, իսկ օրիորդ Դաֆնին քանոնը գցեց, Վրաս հասավ, փովեց նստարանին, ոտքի կանգնեց ու սենյակով մեկ հետևիցս ընկավ:

Ըհը, նորից, օրիորդ Դաֆնիի հետապնդումից փախչելով՝ ասում էի ինքս ինձ: Ըհը, նորից փորձանքն ընկա, ու վերջս գալու է, իսկ ես ամենի մեղավորը՝ Առաք զարմիկս, նստած ժպտում է: Չէ, ես աշխարհում արդարություն չկա:

Երբ օրիորդ Դաֆնին ինձ բռնեց, ինչպես և պիտի լիներ, եթե ուզում էի պարոն Դերինչերի ավելի զարհուրելի պատժից խուսափել, մի բուռն ըմբշամարտ սկսվեց, որի ընթացքում ուսուցչուիհս փորձում էր աչքերս հանել, ականջներս, մատներս ու թևերս պոկել, իսկ ես, փաստարկի ուժով, փորձում էի նրան բարեկիրթ տիկնոջը վայել վիճակի բերել:

Երբ հալից ընկավ, ես տեղս նստեցի, ու նորից օրվա գլխավոր ոճրին վերադարձաք. ո՞վ էր գրատախտակի սիրային տողերի հեղինակը:

Օրիորդ Դաֆնին մազերը հարդարեց, շորերն ուղղեց, շունչը տեղը բերեց, լռություն պահանջեց և ուզածին հասավ ու մի քանի վայրկյան լռությունից հետո, որի ընթացքում ճանճի տզգոցը կլսվեր, սկսեց խոսել:

Հիմա մեկ-մեկ բոլորիդ կիարցնեմ, թե ով է ես... Ես զզվելի ոտանավորը գրել, ու լավ կանեք ճիշտն ասեք: Եթե ստեք, մեկ է՝ կպարզեմ ու շատ ավելի չարաչար կպատժեմ:

Սկսեց տղաներին ու աղջիկներին հարցնել, բայց, իհարկե, գրողը նրանք չեին: Հետո Առաքին հարցրեց, ու սա էլ ասաց, թե ինքը չի գրել: Հետո ինձ հարցրեց, ու ես էլ ճիշտն ասացի, որ ես չեմ գրել:

Տնօրենի սենյակը գնա, ստախո՞ւ:

Ես ոչ մի գրատախտակի ոչ մի քառյակ չե՞մ գրել, ասացի, ու ոչ մի ստախոս էլ չեմ:

Պարոն Դերինչերն ինձ գրկաբաց չընդունեց: Երկու րոպեից Սուզի Կոկոմոտոն եկավ դասարանից՝ հանցանքիս մասին երկտողը ձեռքին: Ավելի ճիշտ՝ արտագրած քառյակը: Պարոն Դերինչերը գրությունը կարդաց, դեմքը մի քանի անգամ ծամածոեց, հետո ժպտաց, տաբատակալը ճտտացրեց, հազար ու ասաց.

Ես փոքրիկ ոտանավորդ ինչո՞ւ ես գրել:

Ես չեմ գրել:

Պարզ է, որ պիտի ասես, թե դու չես գրել, բայց պատճառն ի՞նչ է:

Ես չե՞մ գրել:

Մի՛ համառիր, ասաց պարոն Դերինչերը: Շատ վտանգավոր բամբասանք ես տարածել: Ինչի՞ց իմացար, որ օրիորդ Դաֆնին ինձ սիրում է:

Իրո՞ք սիրում է:

Համենայն դեպս էստեղ էդպես է գրված: Ինչի՞ց ես էդ տպավորությունը ստացել: Նկատել ես, որ հիացա՞ծ է ինձ նայում, թե՞ ինչ:

Ձեզ ոչ մի ձևով նայելիս էլ չեմ նկատել: Չինի՞ դուք եք նրան սիրում, թե՞ ինչ:

Կարևոր չի, ասաց պարոն Դերինջերը: Ինչ որ իմաստով վատ ոտանավոր չէ: Իսկապե՞ս մտածում ես, որ օրիորդ Դաֆնին անճռռնի է:

Քառյակը ես չեմ գրել ու կարող եմ ապացուցել: Ես էդպես չեմ գրում:

Ուզում ես ասել, որ ձեռագիրդ գրատախտակի ձեռագրից տարբե՞ր է:

Հա, ու մեկ էլ, որ ես էդպիսի ոտանավորներ չեմ գրում:

Այսինքն՝ ոտանավորներ գրելդ ընդունու՞մ ես:

Ես ոտանավորներ գրում եմ, բայց *ուրիշ* տեսակի ոտանավորներ:

Էսպիսի բամբասանք... Հուսով եմ՝ հասկանում ես, թե ինչ ես արել:

Հասկանում եմ, թե ինչ չեմ արել. չե՞մ գրել:

Անձամբ ես, ասաց պարոն Դերինջերը, օրիորդ Դաֆնիին ոչ միայն անճռռնի չեմ համարում, այլ հակառակը՝ կարծում եմ, որ հմայիչ է:

Դեմ չեմ: Ուզածս էն է, որ չարածս բանի համար իզուր փորձանքը չընկնեմ:

Բայց կարող էիր դու գրած լինել, ասաց պարոն Դերինջերը:

Ո՛չ էդ ոտանավորը: Իմ գրածը լավը կլիներ:

Լավն ասելով՝ ի՞նչ ես հասկանում. գեղեցի՞կ, թե՞ ավելի վիրավորական:

Գեղեցիկ եմ հասկանում: Ու օրիորդ Դաֆնիի մասին չեր լինի:

Մինչև էս պահը, ասաց պարոն Դերինջերը, փորձում էի կասկած ունենալ, թե միգուցե քառյակի հեղինակը դու չես, բայց է՛լ չունեմ: Վատահ եմ, որ դու ես գրել: Հետևաբար պիտի քեզ պատժեմ:

Ես կանգնեցի ու սկսեցի բանավիճել:

Փորձե՛ք չարածս բանի համար ծեծել. դեռ կփոշմանե՛ք:

Ծեծեց, ու լուրը դպրոցով մեկ տարածվեց: Ես կաղալով դասարան գնացի: Ոտանավորը ջնջել էին: Ամեն ինչ առաջվա պես էր: Մեղավորը պատժված էր, ոտանավորը՝ ջնջված, հինգերորդ դասարանում՝ կարգուկանոնը վերականգնված: Զարմիկ Առաքը սուսուփուս Ալիս Բովարդի շագանակագույն խոպոպներով էր զմայլվում:

Հենց զանգը տվեց, նրան գետին գցեցի ու մեջքին հեծնեցի:

Քո մեղքով ծեծ կերա, ասացի: Մեկ էլ դրանցից չգրե՞ս:

Չնայած սրան, մյուս առավոտ գրատախտակին նոր սիրային քառյակ էր հայտնվել զարմիկ Առաքի քաջ ծանոթ ձեռագրով ու զարմիկ Առաքի քաջ ծանոթ ոճով, և էս անգամ էլ օրիորդ Դաֆնին որոշեց, որ մեղավորին մոլախոտի պես կքաղիանի ու արժանի պատիժը կտա: Երբ դասարան մտա ու ոտանավորը և տիրող իրավիճակը տեսա, էլ չդիմացա: Զարմիկ Առաքը չափն անցել էր: Սկսեցի հայերեն հայիոյել: Բայց նա քարի պես նստել՝ խոլ էր ձևանում, ու օրիորդ Դաֆնիին թվաց, թե իրեն եմ ասում: Դե՛, դե՛, ասաց: Ասելիք ունես՝ հասկանալի լեզվով ասա, որ բոլորն իմանան:

Ասելիքս էն է, որ քառյակը ես չեմ գրել: Ոչ էլ երեկվանն էի ես գրել: Եթե դրանց պատճառով էլի փորձանքն եմ ընկնելու, անողը կփոշմանի:

Նստի՞ր, ասաց օրիորդ Դաֆնին:

Հետո ներկա-բացակա արեց ու գրելուն անցավ: Մի ամրող էջ գրեց՝ նոր քառյակը ներառյալ, ու կարգադրեց, որ տնօրենին տանեմ:

Ինչո՞ւ ես: Քառյակը ես չեմ գրել:

Քեզ ինչ ասում են՝ արա՞:

Մոտեցա սեղանին, ձեռքս պարզեցի, որ գրությունը վերցնեմ, իսկ օրիորդ Դաֆնին քանոնով տուր թե կտաս մատներիս: Ես երեք ոտնաշափ հետ ցատկեցի ու գոռացի, որ սիրային նամակներ տանել-բերելու միտք չունեմ:

Էստեղ համբերության բաժակը լցվեց: Ամեն ինչ չափ ու սահման ունի: Օրիորդ Դաֆնին վրաս հարձակվեց: Ես իմ հերթին, զարմիկիս արածից կատաղած, նրա՝ վրա հարձակվեցի: Նա անմեղ ձևացավ ու բոլորովին չդիմադրեց: Բայց ճարպիկի մեկն էր, ու հարձակումս վրան թանկ նստելու փոխարեն էժան նստեց, իսկ ես փովեցի գետնին, ու օրիորդ Դաֆնին վրաս նետվեց: Փրկվելու ճար չունեի: Տնօրենի սենյակ հասա՛ երեսս ու ձեռքերս ճանկոած, ոտքից գլուխ կապտած, օրիորդ Դաֆնիի գրությունը՝ ճմռթված ու ծվեն-ծվեն:

Ի՞նչ է պատահել, ասաց պարոն Դերինչերը: Գրությունդ տեսնե՞մ: Է՞լ ինչ նոր չարություն ես արել:

Թուղթը վերցրեց, հարթեց ու դանդաղ կարդաց: Երեք-չորս անգամ: Նրան դուր եկավ, ու ինձ թվաց, որ սիրահարված է: Ականջից ականջ ժպտալով ինձ դարձավ, որ օրիորդ Դաֆնիին անճոռնի ասելու համար ամոթանք տա:

Քառյակը ես չեմ գրել, ասացի: Երեկ էլ ես չէի գրել: Ուզածս էն է, որ թողնեն սովորեմ ու հանգիստ ապրեմ ու ոչ մեկին չխանգարեմ:

Հանգիստ, հանգիստ, ասաց պարոն Դերինչերը:

Գոհունակ տեսք ուներ:

Եթե իրար սիրում եք, ասացի, ձեր գործն է, ես ի՞նչ կապ ունեմ:

Ընդամենը ասում եմ, որ օրիորդ Դաֆնիի տեսքը խիստ չդատես, ասաց: Թեզ տգեղ է թվում, բայց գուցե մի ուրիշին տգեղ չի թվում:

Սիրտս խառնեց: Չէ, օգուտ չկար:

Լավ, ասացի: Վաղը խիստ չեմ դատի:

Ապրես, ասաց պարոն Դերինչերը: Բայց մեկ է՝ պիտի պատժեմ:

Ձեռքը տարավ, որ դարակից մտրակը հանի:

Չէ՛ մի, ասացի: Եթե պատժեք, խիստ կդատեմ:

Էսօրվա քայլակի մասին ենք խոսում: Դրա համար պիտի պատժվես: Վաղն ուրիշ:

Չէ, սը՛ր, եղանակ չի լինի:

Լավ, լավ, ասաց պարոն Դերինչերը: Բայց տե՛ս, հա՛, խիստ չդատես:

Կարո՞ղ եմ գնալ:

Հա, գնա՞:

Շրջվեցի, որ գնամ:

Մի րոպե՛, ասաց: Եթե գոռոցներդ չլսեն, մտքներով հազար ու մի բան կանցնի: Լավ կլինի տասը անգամ ցավից ոռնաս, հետո գնա:

Ցավից ոռնա՞մ: Եթե չի ցավում, չեմ կարողանա:

Լավ էլ կկարողանաս, ասաց պարոն Դերինչերը: Ուղղակի սրտառուց ոռնա: Կտեսնես, որ կստացվի:

Չէ, չեմ կարողանա:

Ես մտրակը տասն անգամ աթոռին կխփեմ, իսկ դու ոռնա:

Պարոն Դերինչերը մտրակը տասն անգամ աթռնին խփեց, իսկ ես փորձեցի նախորդ օրվա պես ցավից

ոռնալ, բայց բնական չէր ստացվում: Ոնց որ մի տեսակ կեղծ լիներ:

Էսպես ձև էինք անում, մեկ էլ հանկարծ օրիորդ Դաֆնին ինքն իր ոտքով ներս մտավ: Ի՞նչ մտքներովս անցներ, թե ձայնի վրա կգա:

Տասներորդ հարվածի վրա շուռ եկա, որ պարոն Դերինջերին ասեմ՝ տասը լրացավ:

Ու օրիորդ Դաֆնիին տեսա: Բերանը բաց՝ պապանձվել էր:

Մի քիչ էլ, տղա՛ս, ասաց պարոն Դերինջերը: Որ հավաստի թվա:

Չհասցրի ասել՝ օրիորդ Դաֆնին սենյակում է, որ էլի սկսեց աթոռը ձաղկել, ու ես էլի ոռնացի:

Գժանոց էր:

Օրիորդ Դաֆնին հազաց. պարոն Դերինջերը շրջվեց ու իր սիրեցյալին տեսավ:

Օրիորդ Դաֆնին ձայն չհանեց. չկարողացավ: Պարոն Դերինջերը ժպտաց: Սարսափելի շփոթված էր, ու սկսեց մտրակը դեսուդեն թափահարել:

Իմ դպրոցում ոչ մի աշակերտի թույլ չեմ տա իրեն հանդուգն պահել, ասաց:

Գժի պես սիրահարված՝ մտրակը դեսուդեն էր թափահարում ու փորձում էր իրեն արժանապատիվ տեսք տալ: Մինչդեռ օրիորդ Դաֆնին բոլորովին չտպավորվեց էս տեսակ պատժից, երբ տնօրենը մտրակն աթոռին է խփում, տղան ոռնում է, իսկ երկուսով միասին անարգում են արդարության վեհ գաղափարն ու իսկական սերը: Հայացքով պարոն Դերինջերին շանթափահարեց:

Ա՞հ, ասաց պարոն Դերինջերը: Աթոռին խփե՞լն է զարմացնում: Փորձ էինք անում, չէ՞, տղա՛ս:

Ոչ մի փորձ էլ չէինք անում, ասացի:

Օրիորդ Դաֆնին կատաղեց ու սենյակից դուրս  
վազեց: Պարոն Դերինջերը նստեց:

Տեսա՞ր՝ ինչ արեցիր, ասաց:

Եթե ուզում եք սիրահարվել, սիրահարվեք, բայց ինձ  
էդ բաներին մի՛ խառնեք:

Ի՞նչ արած, ասաց պարոն Դերինջերը, խոսք չունեմ:

Շատ էր տխրել:

Լավ, ասաց, դասարան գնա:

Ուզում եմ՝ իմանաք, որ քառյակները ես չեմ գրել:

Ի՞նչ կապ ունի:

Մտածեցի՝ լավ կլիներ իմանայիք:

Էլ ի՞նչ: Ուշ է: Էլ իմ կողմը չի նայի:

Գուցե ինքնե՞րդ նրան մի ոտանավոր գրեք:

Ես ոդանավոր գրել չգիտեմ, ասաց պարոն Դերին-  
ջերը:

Դե մի բան մտածեք:

Երբ դասարան եկա, օրիորդ Դաֆնին շատ քաղա-  
քավարի էր: Ես էլ: Գիտեր, որ գիտեմ, ու գիտեր, որ մի  
բան թարս գնար՝ կամ սիրավեային վերջ կդնեի, կամ  
կստիպեի ամուսնանալ, դրա համար էլ շատ սիրալիր  
էր: Երկու շաբաթից ամառային արձակուրդը սկսվեց,  
իսկ հաջորդ տարի օրիորդ Դաֆնին է՛լ չերևաց: Կամ  
պարոն Դերինջերը ոտանավոր չէր գրել, կամ գրել էր,  
բայց դուր չէր եկել, կամ եղան էլ չէր ասել, որ սիրում  
է, կամ ասել էր, բայց նրա պետքը չէր եղել, կամ առա-  
ջարկություն էր արել ու մերժում ստացել, որովհեքու ես  
գիտեի, և ուրիշ դպրոց էր տեղափոխվել, որ կոտրած  
սիրտն ամոքի:

Սրա պես մի բան:

## ԻՄ ԶԱՐՄԻԿ ՀՈԵՏՈՐ ՏԻԳՐԱՆԸ

Սրանից քսան տարի առաջ Սան Խովակին հովտի հայերի համար հոետորությունը ամենից վեհ, ամենից ազնիվ, ամենից նշանակալի, կասեի՝ միակ արվեստն էր: Ֆրեզնոյի կողմերում խաղողագործների իննսուներկու տոկոսը (փաստացի հաշվարկով) համոզված էր, որ եթե մարդ ճառ ասել գիտի, ուրեմն կրթված է: Պատճառը, կարծում եմ իիմա՝ տարիներ անց, են էր, որ խաղողագործներն իրենք սարսափելի խեղճանում էին խոսք ասելիս, կաշկանդվում էին, շփոթվում, և հրապարակախոսները, որ կարող էին համարձակ բեմ բարձրանալ, ակնոցը դնել, գրպանի ժամացույցը հանել, քաղաքավարի հազար և խոսքը կամաց սկսելով՝ ձայնը որոտի հասցնել ու ագարակատերերին մինչև հոգու խորքը ցնցել, նրանց կրթված էին թվում:

Ի՞նչ լեզու ունի, ի՞նչ եռանդ, ի՞նչ խմաստություն, ի՞նչ աննման բամբ ձայն, իրար մեջ ասում էին նրանք:

Երեք եկեղեցիներից մեկում կամ հանրային լսարանում հավաքված՝ ակնածանքից դողդոջում էին, աչքերի արցունքը սրբում, քիթը մաքրում ու ազդված՝ հնարավորությունների ներածի չափով հանգանակություն անում: Մեկ-մեկ, օրինակ, ինչ-որ նվիրական նպատակի համար դրամահավաք անելիս մի ագարակատեր ոտքի կկանգներ ու կբղավեր. «Մկրտիչ Ղասաբյանից, կնոշից՝ Արաքսիից ու զավակներից՝ Գուրգենից, Սիրաքից և Թումասից, հիսուն սենթ» , ու

կնատեր որոտընդուստ ծափահարությունների ներքո, որոնք ոչ էնքան հանգանակած գումարին էին վերաբերում, որքան վեհաջուն խոսքին ու մեր հին լավ երկրի անունների՝ Մկրտիչ, Արաքսի, Գուրգեն, Սիրաք, Թումաս, գերազանց ու հոգեցունց արտասանությանը:

Խոսք ասելու ու հանգանակություն անելու հարցում ագարակատերերն ասես մրցեին իրար հետ: Եթե նրանցից մեկը տղամարդու պես ոտքի չկանգներ ու հրապարակավ իր խոսքը չասեր՝ վայ խեղճին. որեւմն ոչ փող ուներ, ոչ քաջություն, որ կանգներ ու հոգու թրթիռից ազատվեր: Էս մրցման պատճառով ագարակատերը, որն ի վիճակի չէր հանգանակություն անել (թեկուզ հոգով-սրտով տենչում էր օգնել), տարեցտարի եղանակությունը պատճառով ամոթով կնատեր, մինչև լավ օրերը հասնեին, ու էն ժամանակ տեղից վեր կթռչեր, կայծակուտ հայացքով շուրջը կնայեր ու կգոռար. «Պանծալի Տիգրանակերտ քաղաքից սերող մեր ցեղի աղքատ օրերի վերջը եկա՞վ. Փամփալոնյան հինգ եղբայրներից՝ քանի սենթ», ու գլուխը վեր, սիրտը ցնծալից կանար տուն: Աղքա՞ն: Հին օրերում, հա՛, քայց ո՛չ այլսա: (Իսկ հինգ հաղթանդամ տղամարդիկ ընտանեկան հպարտությամբ մեկմեկու կնայեին ու զավակներին առաջ կանեին՝ գորովանքով իհարկե, Մերձավոր Արևելքի էն յուրատեսակ գորովանքով, որ գալիս է իր երկրացիների աչքում այլսա նվաստ չերևալու բերկրանքից):

Բայց ոչ մի ագարակատիրոջ համար չկար ավելի մեծ պարծանք, քան իր որդին, որը դպրոցում թե եկեղեցում, քեֆին կամ ուրիշ առիթով ոտքի կկանգներ ու խոսք կասեր:

Տղա՛ն է, կգոռար ութսունութ տարեկան հոր ականջին: Լսիր: Վահանն է՝ տղաս է, քո թո՛ն է, տասնմեկ տարեկա՛ն է: Եվրոպայի մասին է խոսում:

Պապը գլուխը թափ կտար ու կզարմանար. ի՞նչ է կատարվում: Տասնմեկ տարեկան տղան է՛լ Էնքան բանհմաց ու լրջմիտ լինի, որ Եվրոպայի մասին խոսք ասի: Պապն ինքը հազիվ Եվրոպայի տեղն իմանար, թեկուզ գիտեր, որ Ամերիկա գաղթելիս Հավրում եղել է՝ Ֆրանսիայի Հավր քաղաքում. Երևի Եվրոպան էդ էր: Բայց էս Հավրին հանկարծ ի՞նչ պիտի պատահեր, որ տղային էսպես խանդավառեր: Մին, կտնքար պապը, բան չեմ հասկանում: Չեմ հիշում: Ծովի ափին սիրուն քաղաք էր նավերով:

Կանայք կցնծային ու որպես մայր՝ իրենք իրենց վրա կզարմանային: Չորս կողմը մեկը մյուսին կնայեին, գլուխները կօրորեին ու տղայի անգլերեն խոսքը, որը չեին հասկանում, տասը րոպե լսելուց հետո հիացմունքից լուս կլացեին. ախր Էնքա՛ն հրաշալի էր ու Էնքա՛ն զարմանալի. փոքրիկ Պերճուկը, որ դեռ երեկ իսկի հայերեն խոսել չգիտեր, ուր մնաց՝ անգլերեն, կանգնած խոսք է ասում, ձեռքն է թափ տալիս, մատը՝ մեկ վեր, մեկ արևմուտք, մեկ հարավ, մեկ հյուսիս, մեկ-մեկ էլ սեփական սրտին տանելով:

Էսպիսի հանգամանքներում Ղարօղլանյաններն էլ, անշուշտ, պիտի հռետոր ունենային, ինչքան էլ որ մեծ պապս ճառ ասողներին հիմար պոռոտախոսներ համարեր:

Թե լսեք, որ ակնոցավոր փոքրամարմին մի մարդ կոկորդ է պատռում, լավ իմացեք, էդ մարդը կամ էշի մեկն է, կամ ստախոս:

Պապն առհասարակ խոսողների չեր սիրում, բացառությամբ եթե խոսքը շիտակ էր ու տեղին: Ուղղակի շիմացածն էր ուզում իմանալ, Էնքան բան: Միշտ բոլոր հավաքներին գնում էր ու միշտ հետո օձիք թափ տալիս: Ամեն ճառ ասող նրա դեմքին էր նայում, որ հասկանա,

թե որքան է դժգոհ, ու իենց նկատում էին, որ շրջունք-ներն անձայն շարժելով՝ հայիոյում է, աշխատում էին զուր չծեծել: Կամ եթե առաջուց հետը խոսած կային ու տեղյակ էին, որ իրենց հիմարի մեկն է կարծում, փորձում էին հաշիվ մաքրել՝ ձայնը առավել բարձրացնելով ու բղավելով. «Գիտենք, որ մեր մեջ ումանք մեզ վրա ծիծաղում են, մեր ջանքերը հեգնում, նույնիսկ մեծամիտ գոռողությամբ մեզ դատարկախոս են համարում, բայց սա մեր հավերժական խաչն է, որ պիտի տանենք, ու կտանե՞նք»:

Էստեղ պապս ձեռքը որդիների գլխին կդներ, սրանք՝ իրենց հերթին ձեռքներն իրե՞նց որդիների գլխին կդնեին, որդիների որդիները միմյանց կրոթեին, կանայք շուրջը կնայեին, ու Ղարօղլանյանները միասին՝ երեսունյոթ թե երեսունութ հոգով, տեղներից կելնեին ու դուրս կգային պապի գլխավորությամբ, որը ճանապարհին խեղճ ագարակատերերի վրա շանթ ու կրակ նետելով՝ կասեր. «Ելի խա՛չ են տանում: Գնացի՞նք»:

Ու չնայած էս ամենին, մեկ է՝ անխոսափելի էր, որ Ղարօղլանյաններն ել իրենց հոետորն ունենային: Ժամանակի պահանջն էր, մարդկանց պահանջն էր, և Ղարօղլանյաններից մեկը պիտի ուզեր էս դաշտը մուտք գործել ու մարդկանց ցոյց տալ, թե հոետորություն ասածն ի՞նչ կարող է լինել, կամ եթե ճիշտն եք ուզում, թե հոետորություն ասածն ի՞նչ է:

Էս Ղարօղլանյանն իմ կրտսեր զարմիկը եղավ՝ Զոհրաբ քեռուս երկրորդ որդին, որը պատերազմի ավարտին ինը տարեկան էր՝ ինձնից մի տարով փոքր, բայց էնքան փոքրամարմին, որ բանի տեղ չէի դնում:

Էս տղան էն գլխից պայծառ միտք ունեցող, բայց շատ բան չհասկացող տղաներից էր. առանց մի կաթիլ

հումորի զգացման ու ամոթալի վիրավորական համոզմամբ, որ իմաստությունը ձեռքբերովի է: Ամոթալի էր հատկապես Ղարօղլանյանների պարագայում, որոնց իմաստությունը դարեր շարունակ բնածին է եղել՝ ոչ ձեռքբերովի: Մեր մեծ պապի հպարտությունն էր, որ իսկական Ղարօղլանյանը խարդախին մի հայացքից կմերկացնի ու բնատուր ողջամտությամբ հետը վարվելու ձևը կգտնի:

Թե կտեսնեք, որ մարդը աչքներիդ շիտակ չի նայում, կասեր, իմացե՛ք, լավ մարդ չի՝ կամ լրտես է, կամ սրիկա: Իսկ թե մեկը կասի՝ եղրայր, եղրայրներ ենք, զգուշ կացեք. Էդ մարդը ծոցում դանակ է պահում:

Համարյա թե ծննդյան օրից սրա նման խրատներ լսելով՝ բնական էր, որ ամեն Ղարօղլանյան աշխարհի ու դրա տարօրինակ բնակիչների իմաստությամբ լցված մեծանա:

Միակ Ղարօղլանյանը, որին էս ամենը փաստորեն տեղ չէր հասել, Տիգրան անունով զարմիկս էր: Բացառապես գիրք կարդացող էր՝ մարդ տեսակի էն նմուշներից, որոնց պապս հոգով-սրտով արհամարհում էր, չհաշված՝ եթե պարզ տեսներ, որ կարդացողի՝ երեխայի, իհարկե, - թե չէ էլ ո՞վ էր գիրք կարդալու, - բնավորությունը դեպի լավն է փոխվում: Տիգրանի մեջ նման փոփոխություն չէր նկատում: Ընդհակառակը. հետզհետե ավելի դժվար ըմբռնող էր դարձել, ու մի օր էլ, երբ տասնմեկ տարեկան էր, պապիս ասացին, որ Լոնգֆելո դպրոցի ամենափայլուն աշակերտն է՝ ուսուցիչների պարծանքն ու կատարյալ հոետոր:

Երբ տղայի մայրն էս լուրջ պապիս հասցրեց, պապս, հյուրասենյակի բազմոցին պառկած, դեմքը պատին արեց ու տնքաց՝ ափսո՞ն, ի՞նչ ափսոս: Էս տղային ի՞նչ պատահեց:

Ո՞նց թե, ամբողջ դպրոցի ամենափայլուն աշակերտն է, ասաց մայրը:

Պապը տեղում նստեց ու ասաց. «Թե լսես, որ տասնմեկ տարեկան տղան իինգ հարյուր աշակերտ ունեցող դպրոցի ամենափայլունն է, բանի տեղ մի՛ դիր: Աստված սիրես, փայլունը ո՞րն է: Եղածը տասնմեկ տարեկան չի՞: Ի՞նչ փայլուն: Ու՞մ է պետք, որ երեխան սեփական կարևորության բեռի տակ ճկի: Քեզ ասեմ՝ լավ մայր չե՞ս: Խեղճ տղային դուրս արա, թող դաշտերը գնա: Թող եղբայրների հետ լողալու գնա: Խեղճը չգիտի՝ ծիծաղն ինչ է: Իսկ դու եկել, ասում ես՝ փայլուն է: Գնա գործի՛դ»:

Նույնիսկ չնայած սրան, ասեմ, տղան շարունակում էր առաջադիմել ու գիշեր-ցերեկ կարդում, հա՛ կարդում էր՝ կիրակի լիներ, տոն թե բացօթյա խնջույքի օր, մինչև, եղածը քիչ էր, հիմա էլ պիտի ակնոց դներ, ինչից տեսքն է՛լ ավելի թշվառ դարձավ: Ու ամեն անգամ ընտանեկան հավաքներին պապս շուրջը կնայեր, տղային կտեսներ ու հոգոց կհաներ. տե՛ր Աստված, փիլիսոփայիս տեսեք: Էստեղ արի, տղա՛ս:

Տղան ոտքի կելներ ու կկանգներ պապի առաջ:

Ասում ես՝ գրքեր ես կարդում, կասեր պապս: Լավ է: Փառք Աստծու, արդեն տասնմեկ տարեկան ես: Ասա, տեսնեմ, ի՞նչ ես սովորել:

Չգիտե՞մ՝ հայերեն ոնց ասեմ, կպատասխաներ տղան:

Պարզ է, կասեր պապս: Ոչի՞նչ, անգլերեն ասա:

Այ էստեղ կսկավեր: Ես իմ փոքր, տասնմեկ տարեկան զարմիկը մի էնպիսի՛ ելույթ կունենար գրքում կարդացած զարմանալի բաների մասին. իրոք զարմանալի: Բոլոր թվականները, անունները, տեղերը գիտեր, բոլոր պատճառներն ու հավանական հետևանքները գիտեր:

Շատ գեղեցիկ էր, բայց մի տեսակ տխուր:

Մեկ էլ պապս խոսքը կընդհատեր ու կգոռար. թութա՞կ ես, ի՞նչ ես:

Բայց մեկ է՝ ինձ թվում էր, որ պապիս դուր է գալիս Ղարօղլանյանների ընտանիքում սրա նման տարօրինակ մեկի հայտնվելը: Գիրք կարդացողները հիմարի մեկն էին, ինչպես և հոետորները, բայց մեր գիրք կարդացողը շարքային կարդացող ու հոետոր չէր: Մեկ է՝ մերը տարբեր էր: Նախ մյուս կարդացողներից ու գրքերից ամեն բան սովորած կարծողներից երիտասարդ էր, երկրորդ՝ մյուսներից շատ ավելի պարզ էր խոսում:

Ես բաների ու սեփական հակումներին հետամուտ լինելու ակնհայտ վճռականության համար ընտանիքը նրան ընդունեց որպես Ղարօղլանյանների ուսյալն ու հոետորը և թոյլ տվեց ժամանակը տրամադրել իր բնածին հակումները, ինչպիսիք որ էին, ուզած ձևով զարգացնելուն:

1920-ին էր. Լոնգֆելոյի դպրոցն իր երեկոյթի ծրագիրը հրապարակեց, որի մեջ մտնում էր՝ 1) երգախմբի ելույթը, 2) «Հովհուս Կեսար» բեմադրությունը, 3) Տիգրան Ղարօղլանյանի ելույթը՝ «Իզու՞ր էր արդյոք համաշխարհային պատերազմը» թեմայով: Ղարօղլանյանների ընտանիքը ժամանակին եկավ ու դպրոցի դահլիճում տեղավորվեց, երգախմբի բաղաձայն երգը լսեց, «Հովհուս Կեսար» խեղճուկրակ ներկայացումը նայեց և սկսեց միակ ու անկրկնելի Ղարօղլանյան հոետորին՝ Զոհրաբի երկրորդ որդի Տիգրանին լսել:

Անթերի ելույթ էր՝ հուզիչ, գեղեցիկ արտասանված, խելացի ու շատ համոզիչ, որի եզրակացությունը հետևյալն էր. համաշխարհային պատերազմն իզուր չէր: Ժողովրդավարությունն աշխարհը փրկել էր: Լարանը, ակնածանքով լցված, որոտընդոստ ծափահարեց:

Բայց ոնց որ մի քիչ չափն անց էր: Այսինքն՝ պապիս համար: Որոտընդուստ ծափահարության կեսից պապս փորը բռնեց ու սկսեց քրքջալ. որոշ առումով հոյակապ ելույթ էր: Իր տեսակի մեջ լավագույնն էր՝ վատագույն երևոյթի լավագույն կատարում: Նույնիսկ հպարտանալու տեղ էր տալիս:

Երեկոյան պապս տղային մոտ կանչեց ու ասաց. ճառդ լսեցի, վատը չէ՞ր: Հասկացա, որ մի քանի միլիոն կյանքեր տարած պատերազմի մասին էր խոսքը: Հասկացա՝ ապացուցեցիր, որ մարդիկ իզուր չեն կռվել: Քեզ ասեմ՝ գոհ մնացի: Սրա պես երկար ու սիրուն խոսքը հենց էլ տասնմեկ տարեկան՝ ասածին հավատացող տղայի բերնից պիտի գար: Չափահաս մեկից՝ ասածի սարսափին դժվար դիմանայի: Շարունակի՛ր աշխարհի մասին գրքերից սովորելու: Գիտեմ. թե ջանասեր լինես ու աչքերդ դիմանան, վաթսունյոթ տարեկանում երգեցիկ սիրուն անգլերնով ասածդ էսօրվա միամիտ խոսքերի անասելի ապուշությունը կհասկանաս: Հիմա ասեմ, որ քեզնով էլ մյուս Ղարօղլանյանների պես հպարտանում եմ: Է՛հ, գնացեք, քունս տանում է: Տասնմեկ տարեկան չեմ, վաթսունյոթ եմ:

Բոլորը վեր կացան ու գնացին, բացի ինձնից: Ես ոտքս կախ գցեցի ու պապիս կոշիկները հանելը տեսա և նրա հառաջը լսեցի՝ իմ խելառ սիրուն ընտանիքի խելառ սիրուն երեխս՝քը...

## ԵՐԻՑԱԿԱՆ ԵՐԳՉԱԽՄԲԻ ԵՐԳԻՉՆԵՐԸ

Մեր երկրի անհամար հետաքրքիր ու դուրեկան բաներից մեկն էն է, որ մեր բարի ժողովուրդը կարող է մի կրոնից մյուսին անցնել կամ առհասարակ ոչ մի կրոնից առաջին պատահած կրոնին դառնալ առանց մի բան կորցնելու կամ շահելու ու հետն էլ շարունակել անմեղ մնալ:

Ես ինքս, օրինակ, մի տեսակ կաթոլիկ եմ ծնվել, չնայած մինչև տասներեք տարեկան մկրտված չեմ, ու էս հանգամանքը, լավ եմ հիշում, քահանային շատ էր բարկացրել և ստիպել էր, որ մերոնց հարցնի, թե ին չե՞ն գծվել, ինչին մերոնք պատասխանել էին՝ էստեղ չեինք:

Տասներեք տարեկան ու դեռ չմկրտվա՞ծ, գոռացել էր քահանան: Դուք ի՞նչ մարդ եք:

Հիմնականում հող մշակող, պատասխանել էր Մելիք հորեղբայրս, թեև ցեղում նշանավոր մարդիկ էլ են եղել:

Շաբաթ կեսօրից հետո էր, ու ամբողջ արարողությունը յոթ րոպեից ավելի չտևեց: Բայց մեկ է՝ մկրտվելուց հետո մեջս ոչ մի փոփոխություն չզգացի:

Հը՝ ասաց տատս, արդեն մկրտվեցիր: Հիմա լա՞վ ես:

Կարծում եմ, որ պիտի բացատրեմ: Քանի ամիս էր՝ ինձ խելացի էի զգում, ինչից տատս սկսել էր կասկածել, թե ինչ-որ անհայտ վարակի զոհ եմ ու սկսել եմ խելքս թոցնել:

<sup>1</sup> Բողոքականության ուղղություններից մեկն է:

Ոնց որ առաջվա պես, ասացի:

Հիմա հավատո՞ւմ ես, գոռաց, թե՝ առաջվա պես  
կասկածներ ունես:

Ուզում ես՝ ասեմ, որ հավատում եմ, բայց հաստատ  
չգիտեմ: Իհարկե ուզում եմ քրիստոնյա լինել:

Ուրեմն հավատա ու շարունակիր գործովդ գբաղ-  
վել:

Գործս ինչ-որ իմաստով սովորական էր, ինչ-որ  
իմաստով՝ անհասկանալի: Թուլերի փողոցի երի-  
ցական եկեղեցու երգչախմբում էի երգում: Ես գործի  
համար շաբաթական մեկ դոլար փող էի ստանում  
Բալեյֆալ ազգանունով մի քրիստոնյա տիկնոջից,  
որը վշտի ու միայնության մեջ ապրում էր իմ ընկեր  
Պանդրո Քոլխոզյանենց կողքի փոքրիկ բաղեղապատ  
տանը:

Ես ընկերս ինձ պես լեզվանի էր: Այսինքն՝ երկուսս  
էլ շատ էինք հայինում (իհարկե, առանց մեր մեղքը  
գիտակցելու), ինչից օրիորդ թե տիկին Բալեյֆալն  
էնքան էր վշտանում, որ ուզում էր, քանի ուշ չէ,  
մեզ փրկել: Փրկությունը մի բան էր, որին անձամբ  
ես դիմադրելու, կամ որից սրտնեղելու ոչ մի առիթ  
չունեի:

Օրիորդ Բալեյֆալը (սրանից հետո եսպես կան-  
վանեմ, քանի որ ինչքան գիտեի՝ հաստատ մենակ էր  
ապրում, ու ոչ էլ գիտեի, թե երբևէ ամուսնացած էր  
եղել կամ գոնե մտքով անցել էր, որ ամուսնանա, ոչ  
էլ անգամ, որ սիրահարվել էր կյանքի երիտասարդ  
տարիներին, իհարկե, ու անկասկած, մի սրիկայի, որն  
էս ամենին լուրջ չեր վերաբերվել)... Օրիորդ Բալեյֆա-  
լը, ուզում էի ասել, բարեկիրթ կին էր՝ Ուրբերտ Բրաու-  
նինգի բանաստեղծությունները կարդացող ու նուրբ  
հոգու տեր, որովհետև մի անգամ, երբ շեմին կանգնած

լսել էր, թե ոնց ենք խոսում, երկար չեր դիմացել: Համբերությունը շուտ հատել էր, ու մեզ ձայն էր տվել. «Տղանե՞ր, տղանե՞ր, հերիք հայիոյեք: Չի՛ կարելի»:

Պանդրո Քոլխոզյանը մի կողմից անտաշի մեկն էր թվում, մյուս կողմից (ու հենց էս բնավորության համար էլ սիրում էի)՝ իրականում վերին աստիճանի քաղաքավարի էր ու նրբանկատ:

Հա, օրիորդ Բալեյֆամ, պատասխանել էր նա:

Բալեյֆալ, ուղրել էր տիկինը: Մո՛տ եկեք, խնդրում եմ: Երկուսո՞վ:

Սոտեցել էինք, ու Պանդրոն հարցրել էր, թե ուզածն ինչ է:

Ի՞նչ կուզեիք, օրիորդ Բալեյֆամ, հարցրել էր:

Օրիորդ Բալեյֆալը ծեռքը գրպանն էր տարել, գրքույկներ հանել ու առանց նայելու երկուսիս մեկական տվել: Իմը վերնագրած էր «Մի հարբեցողի պատմություն. հատուցում», Պանդրոյինը՝ «Մի հարբեցողի պատմություն. և ի վերջո խաղաղություն»:

Մրանք ինչո՞ւ եք մեզ տալիս, հարցրել էր Պանդրոն:

Ուզում եմ, որ կարդաք, տղանե՞ր, ու փորձեք ուղղվել: Ուզում եմ, որ չհայիոյեք:

Բայց էստեղ հայիոյելու մասին ոչինչ գրված չի, ասել էր Պանդրոն:

Էս գրքույկներում երկուսիդ համար էլ լավ խրատ կա: Կարդացեք ու էլ մի՛ հայիոյեք:

Լավ, տիկին, ասացի, հենց էդքա՞նը:

Մի բան էլ որ խնդրեմ, կօգնե՞ք երգեհոնը ճաշասենյակից հյուրասենյակ տանել:

Իհա՛րկե, օրիորդ Բալեյֆամ, ասաց Պանդրոն, երբ ուզեք:

Ու մենք տիկնոց տուն մտանք, և մինչ ինքը ղեկավարում էր, որ գործիքը կամ ինքներս մեզ չվնասենք,

կամաց-կամաց երգեհոնը տեղափոխեցինք՝ ճաշասեն-յակից հյուրասենյակ տարանք:

Դե, իհմա գրքույկները կարդացեք, ասաց օրիորդ Բալեյֆալը:

Հա, տիկի՞ն, Էլ ինչ-որ բան կուզեի՞ք:

Դե, ասաց տիկինը, կուզեի, որ ես նվազեմ, դուք՝ երգեք:

Ես երգել չեմ կարող, օրիորդ Բալեյֆամ:

Վե՛րջ տուր, լավ էլ կարող ես, Պե՛ղրո:

Պանդրո: Պեղրոն զարմիկս է:

Ճիշտն ասած, Պանդրոյի իսկական անունը Պանդուխտ էր, որ հայերեն «վտարանդի» է նշանակում: Երբ դպրոց էր գնացել, ուսուցչին էդ անունը դուր չէր եկել կամ անսովոր էր թվացել, ու մատյանում գրել էր Պանդրո: Իսկ զարմիկի անունն էլ Պետրոս էր. սա էլ, իր հերթին, Պեղրո էր դառել: Մեծ բան չէր, իհարկե. ոչ ոք չէր տուժել:

Տարեց կինը չպատասխանեց. աթոռակին նստեց, ոտքերը երգեհոնի ոտնակներին դրեց ու առանց մի խոսք ասելու սկսեց ինչ-որ եղանակ նվազել, որը, միալարությունից դատելով, եկեղեցական էր: Հետո ինքն էլ սկսեց հետը երգել: Պանդրոն մեղմ ձայնով մի գռեհիկ բան ասաց. լավ էր, որ օրիորդ Բալեյֆալը չսեց: Տիկնոց ձայնը, – մյուս բաները մի կողմ, – հեշ տպավորիչ չէր: Ունակների ճռճռոցը ձայնից բարձր էր, երգեհոնի հնչյունները՝ աղճատված, բայց մեկ է՝ պարզ էր, որ օրիորդ Բալեյֆալը լավ ձայն չունի:

Գալիլեա, չքնա՞ն Գալիլեա, երգում էր նա:

Հետո մեզ դարձավ ու ասաց՝ դե երգե՛ք, տղաներ, երգե՛ք:

Մենք ոչ բառերը գիտեինք, ոչ մեղեղին, բայց կարծես քաղաքավարությունը պահանջում էր, որ գոնե

փորձեինք: Էդաւես էլ արեցինք՝ հնարավորինս ջանք թափելով, որ աշխատենք երգեհոնի հնչյուններից ու տիկնոց արտաքերած բառերից հետ չմնալ:

Այն ժամանակ վեր կացավ, սասպեց ծովին ու քամուն, Ու խաղաղություն եղավ... երգում էր տիկինը:

Էսաւես երեք երգ երգեցինք: Ամեն երգից հետո Պանդրոն ասում էր՝ շնորհակալ ենք, տիկին, կարո՞ղ ենք գնալ:

Վերջապես աթոռակից ելավ ու ասաց՝ կարծում եմ՝ օգնեց: Եթե վատ ընկերները ձեզ խմեցնել ուզեն, կմերծե՛ք:

Կմերժենք, օրիո՞րդ Բալեյֆամ, ասաց Պանդրոն: Չե՞,  
Արամ:

Ես կմերժեմ, ասացի:

Ես էլ, ասաց Պանդրոն: Կարելի՞ է գնանք, օրիո՞րդ  
Բալեյֆամ:

Գրքոյկները կկարդաք, ասաց, քանի ուշ չէ:

Կկարդանք, ասաց Պանդրոն: Հենց ժամանակ լինի:

Տիկնոց տնից դուրս եկանք, էլի Պանդրոյենց բակը գնացինք ու սկսեցինք գրքոյկները կարդալ: Հազիվ էինք կեսին հասել՝ տիկինը դուրս եկավ ու ահավոր այլայլված բարձր ձայնով հարցրեց. ո՞ր մեկդ էր:

Ի՞նչն էր որ մեկս, հարցրեց Պանդրոն:

Շատ էր շփոթվել:

Երգողը ո՞ր մեկդ էր, հարցրեց օրիորդ Բալեյֆալը:

Երկուս էլ երգում էինք, ասացի:

Չե, ասաց օրիորդ Բալեյֆալը, մենակ մեկդ էր երգում: Երկուսիցդ մեկը գեղեցիկ եկեղեցական ձայն ունի:

Հաստատ ես չի, ասաց Պանդրոն:

Դո՛ էիր, ինձ դարձավ օրիորդ Բալեյֆալը: Դու էիր,  
չէ՞, Յուջին:

Ես Արամն եմ, ասացի, Յուջինը չեմ: Չէ, երևի ես էլ չի:

Տղաներ, մո՛տ եկեք, ասաց օրիորդ Բալեյֆալը:

Ո՞ր մեկս, հարցուց Պանդրոն:

Երկուսով, ասաց տիկինը:

Երբ ներս մտանք, ու օրիորդ Բալեյֆալն էլի երգեհոնի մոտ նստեց, Պանդրոն ասաց. «Չե՛ն ուզում երգել: Ես երգել չե՛մ սիրում»:

Դու՛ երգիր, ինձ դարձավ տիկինը:

Երգեցի:

Օրիորդ Բալեյֆալը տեղից վեր թռավ:

Դու՛ էիր, ասաց: Պիտի եկեղեցում երգես:

Չե՛ն երգի:

Չզազրախոսե՛ս:

Ես չեմ զազրախոսում ու ազնիվ խոսք, էլ կյանքումս ոչ մի անգամ չեմ զազրախոսի, բայց եկեղեցում չե՛մ երգելու:

Զայնդ կյանքումս լսած ամենագեղեցիկ եկեղեցական ձայնն է:

Հեշ էլ չէ՛:

Հենց էլ այո՛:

Մեկ է՛ չե՛մ երգելու:

Պիտի երգե՛ս, պիտի երգե՛ս:

Շատ շնորհակալ ենք, օրիո՞րդ Բալեյֆամ, ասաց Պանդրոն: Կարելի՞ է գնանք: Չի ուզում եկեղեցում երգել:

Այսր պիտի երգի՞:

Ինչո՞ւ:

Հոգու խաղաղության համար:

Պանդրոն էլի քթի տակ հայինեց:

Ասա տեսնեմ՝ անունդ ի՞նչ էր:

Ասացի:

Քրիստոնյա ես, չե՞:

Ուս որ հա՞:

Երիցական, իհարկե:

Եղ մեկը չգիտեմ:

Կլինես, հաստա՞ւ կլինես: Ուզում եմ, որ Թովերի փողոցի երիցական եկեղեցու երգչախմբում երգես: Մյուս կիրակի:

Ինչո՞ւ, նորից հարցրեց Պանդրոն:

Մեզ ձայներ են պետք: Զահել տղայական ձայներ են պետք: Երգիշներ: Մյուս կիրակի պիտի երգի:

Այս երգել չեմ սիրում: Ոչ էլ եկեղեցի գնալ եմ սիրում:

Տղանե՞ր, նստեք: Խոսելու բան կա:

Նստեցինք: Օրիորդ Բալեյֆալը առնվազն կես ժամ հետևերս խոսեց:

Ոչ մի խոսքին չհավատացինք, թեև քաղաքավարությունից բոլոր հարցերին պատասխանում էինք, մեր կարծիքով իր ուզածի պես, բայց երբ ասաց՝ ծնկենք, որ աղոթեմ, չարեցինք: Օրիորդ Բալեյֆալն ինչ-որ ժամանակ փորձում էր համոզել, իետո որոշեց, որ առաջմ մեզ հանգիստ թողնի: Հետո էլի փորձեց, ու մենք էլի մերժեցինք: Պանդրոն ասաց, որ ինչքան ուզի՝ երգեհոնը կտեղափոխենք կամ դրա պես բաներ կանենք, բայց ծնկի չենք իջնի:

Դե լավ, ասաց օրիորդ Բալեյֆալը, գոնե աչքներդ կփակե՞ք:

Ինչո՞ւ, հարցրեց Պանդրոն:

Սովորություն է. երբ մեկն աղոթում է, մարդիկ աչքերը փակում են:

Ո՞վ է աղոթում:

Էս պահին՝ ոչ ոք: Բայց որ խոստանաք աչքներդ փակել, ես կաղոթեմ: Մենակ խոստացեք, որ կփակեք:

Ինչի՞ համար եք աղոթելու:

Ձեզ համար, տղանե՞ր:

Ինչու՞:

Մի փոքրիկ աղոթքը ձեզ չի վնասի, ասաց օրիորդ Բալեյֆալը: Աշքներդ կփակե՞ք:

Ու՞՛ֆ, լավ, ասաց Պանդրոն:

Մենք մեր աշքերը փակեցինք, ու օրիորդ Բալեյֆալը սկսեց աղոթք ասել:

Ոչ մի փոքրիկ էլ չէր:

Ամե՞ն, վերջապես ասաց: Հը՛, տղանե՞ր, ավելի լավ եք զգում, չէ՞:

Ճիշտն ասած, հեչ էլ ավելի լավ չէինք զգում:

Հա, ասաց Պանդրոն: Հիմա կթողնե՞ք գնանք, օրիորդ Բալեյֆամ: Հենց երգեհոնը տեղափոխել ուզեք, կգանք:

Մի՛ զլանա, երգի՛ր, ինձ ասաց օրիորդ Բալեյֆալը, ու հեռու մնա ընկերներիցդ, որ քեզ խմել կառաջարկեն:

Հա, տիկի՞ն:

Գիտե՞ս եկեղեցին որտեղ է:

Ո՞ր եկեղեցին:

Թուղերի փողոցի երիցական եկեղեցին:

Գիտեի:

Կիրակի առավոտ ինն անց կեսին պարոն Սոգուը քեզ կսպասի:

Հասկացա, որ ինձ պատին էին դեմ տվել:

Կիրակի Պանդրոն ինձ հետ եկեղեցի եկավ, բայց երգչախմբի տղաների հետ բեմին կանգնած երգել հրաժարվեց: Վերջին շարքում նստած՝ նայում էր ու լսում: Իսկ ես երգում էի, բայց կյանքումս ինձ ավելի թշվառ չէի զգացել:

Ել վե՛րջ, ասացի Պանդրոյին, երբ դուրս եկանք:

Հաջորդ կիրակի, իհարկե, չգնացինք, բայց ի՞նչ օգուտ, օրիորդ Բալեյֆալը մեզ նորից իր տուն տարավ:

Երգեհոն էր նվագում, երգում էր, փորձում մեզ երգեցնել, աղոթում էր, ու պարզ էր, որ վճռել է ինձ տղաների երգչախմբից բաց շթողնել: Ես կտրականապես հրաժարվեցի, ու որոշեց հարցին ուրիշ կողմից մոտենալ:

Անսման ձայն ունես, ասաց: Հավատքը քո ձայնի կարիքն ունի: Դեռ ինքդ էլ չգիտես, բայց իսկական հավատացյալ ես: Դրա համար էլ ուզում եմ խնդրել, որ ամեն կիրակի ինձ համար երգես: Քեզ կվճարե՞մ:

Ինչքա՞ն, հարցոեց Պանդրոն:

Հիսուն սենթ, ասաց օրիորդ Բալեյֆալը:

Սովորաբար չորս կամ հինգ երգ էինք երգում: Ընդամենը կես ժամ էր տևում, բայց դեռ մի ժամ էլ վրայից պիտի մնայինք, մինչև քահանան քարոզը կարդար: Մի խոսքով, չարժեր:

Սա էր պատճառը, որ չպատասխանեցի:

Յոթանասունինգ, ասաց օրիորդ Բալեյֆալը:

Եկեղեցում տոթ էր, քարոզները՝ ձանձրալի, ու դժվար էր դիմանալ:

Մի դոլար, ասաց օրիորդ Բալեյֆալը, ոչ ավել, ոչ պակաս:

Մի դոլար ու քսանինգ սենթ, առաջարկեց Պանդրոն:

Չէ, մեկից ոչ մի սենթ ավելի, առարկեց օրիորդ Բալեյֆալը:

Երգչախմբի ամենալավ ձայնն է, ասաց Պանդրոն: Մի դոլա՞ր: Էդ տեսակ ձայնին ցանկացած կրոն երկուսը կտա:

Խոսքս ասացի, պատասխանեց օրիորդ Բալեյֆալը:

Ուրիշ հավատքներ էլ կան, ասաց Պանդրոն:

Սրանից, խոստովանեմ, օրիորդ Բալեյֆալը հուզվեց:

Սրա ձայնը, ասաց դառնացած, քրիստոնյայի, ավելին՝ երիցականի՝ ձայն է:

Բապտիստներն ուրախությամբ էս ձայնին երկու դոլար կտան, ասաց Պանդրոն:

Բապտիստները, նետեց օրիորդ Բալեյֆալը, ամա-չում եմ ասել՝ մի տեսակ արհամարհանքով:

Ինչո՞վ են երիցականներից տարբեր, ասաց Պանդ-րոն:

Մի դոլար՝, ընդհատեց օրիորդ Բալեյֆալը, ու անունդ կգրանցենք:

Այսր երգել չեմ սիրում, օրիորդ Բալեյֆալ, ասացի:

Լավ էլ սիրում ես: Քեզ թվում է, թե չես սիրում: Որ երգելիս դեմքդ տեսնեիր... ո՞նց ասեմ...

Հրեշտակի ձայն ունի, ասաց Պանդրոն:

Ձեռիցս չե՞ս պրծնի, ասացի հայերեն:

Բա սա մի դոլարանոց ձա՞յն է, շարունակեց Պանդ-րոն:

Լավ, տղանե՞ր, մեկ ու տասնհինգ սենթ: Ավել չեմ տա:

Մեկ ու քսանհինգ, համառեց Պանդրոն, թե չէ բապ-տիստների մոտ ենք գնում:

Լավ, լավ, տեղի տվեց օրիորդ Բալեյֆալը: Ասեմ, որ շա՛տ համար սակարկող եք:

Մի րոպե՛, ասացի, ես երգել չե՞մ սիրում: Ինչքան էլ տաք, մեկ է՛ չե՞մ երգի:

Պայմանը պայման է, ասաց օրիորդ Բալեյֆալը:

Ես ոչ մի պայման չեմ կապել, ասացի, Պանդրոն է կապել:

Ինքը երգել չի կարող, առարկեց օրիորդ Բալեյֆալը:

Իմը աշխարհի ամենավատ ձայնն է, հպարտորեն հայտարարեց Պանդրոն:

Նրա ձայնին տասը սենթ էլ չեն տա, համաձայնվեց օրիորդ Բալեյֆալը:

Հինգ էլ չեն տա, ասաց Պանդրոն:

Չեմ երգի, ու վե՛րջ, ասացի, ո՛չ մի դոլար քսանիինգ սենթով, ո՛չ ուրիշ գումարով: Ինձ ոչ մի փող էլ պետք չի:

Բայց պայման կապեցինք, ասաց օրիորդ Բալեյֆալը: Ճիշտ է ասում, հաստատեց Պանդրոն:

Հենց էդտեղ էլ օրիորդ Բալեյֆալի հյուրասենյակում, վրա հասա Պանդրոյին, ու սկսեցինք կռվել: Տարեց հավատացյալ կինը փորձեց բաժանել, բայց կռվողների մեջ հրեշտակի ձայնովին տարբերելը դժվար էր, ու փոխարենն աղոթել սկսեց: Էնքան կռվեցինք, մինչև սենյակի կահույքը, երգեհոնից բացի, ցաքուցրիվ էինք արել: Կռիվը ոչ-ոքի ավարտվեց, հակառակորդները՝ հոգնած ու սպառված, հատակին:

Օրիորդ Բալեյֆալն աղոթքը վերջացրեց ու ասաց՝ ուրեմն կիրակի, մի դոլար քսանիինգ սենթով:

Ժամանակ էր պետք, որ շունչս տեղը բերեի:

Օրիորդ Բալեյֆալ, ասացի, կերգեմ, բայց մի պայմանով, որ Պանդրոն էլ հետո երգի:

Ախր հե՛չ ձայն չունի:

Ի՞նձ ինչ: Եթե երգելու եմ, թող ինքն է՛լ երգի:

Ախր երգչախումբը խայտառակ կլինի:

Կամ ամեն կիրակի հետո կգա, կամ երգողը չեմ:

Լավ, սպասիր տեսնեմ, ասաց օրիորդ Բալեյֆալը:

Ու սկսեց մտորել:

Իսկ որ գա, երգչախմբում կանգնի, բայց չերգի՛, հարցրեց օրիորդ Բալեյֆալը: Որ ուղղակի ձև անի, թե երգու՞մ է:

Մեկ է: Մենակ թե գա ու հետո կանգնի:

Իմ շա՞հը որն է, հարցրեց Պանդրոն:

Հո չե՞ս կարծում, թե քեզ էլ պիտի վճարեմ, ասաց օրիորդ Բալեյֆալը:

Եթե գալու եմ, առարկեց Պանդրոն, ուրեմն պիտի վարձատրվեմ:

Լավ, ասաց օրիորդ Բալեյֆալը: Մի դոլարը՝ երգողին, քանի հինգ սենթը՝ չերգողին:

Իմը աշխարհի ամենավատ ձայնն է, հիշեցրեց Պանդրոն:

Արդա՞ր լինենք, ասաց օրիորդ Բալեյֆալը: Էսպես թե էնապես՝ չես երգելու: Մենակ պիտի մյուս տղաների հետքեմին կանգնես:

Քսանի հինգ սենթը քիչ է, ասաց Պանդրոն:

Գետնից վեր կացանք ու սկսեցինք կահույքը տեղը դնել:

Դե լավ, ասաց օրիորդ Բալեյֆալը, մի դոլար՝ երգողին, երեսունի հինգ սենթ՝ չերգողին:

Չե, հիսուն, ասաց Պանդրոն:

Եղավ: Մի դոլար՝ քեզ: Հիսուն սենթ՝ քեզ:

Մյուս կիրակի՝ ենք սկսում, հարցրեց Պանդրոն:

Հա, ասաց օրիորդ Բալեյֆալը: Կվճարեմ էստեղ՝ ժամերգությունից հետո: Երգչախմբի տղաներից ոչ մեկին ոչ մի խոսք:

Ոչ ոքի ոչ մի խոսք չենք ասի, հավաստիացրեց Պանդրոն:

Էսպես, կարելի է ասել, տասնմեկ տարեկանում երիցական դարձա: Համենայն դեպս՝ կիրակի առավոտները: Բանն էստեղ փողը չէր: Ուղղակի պայման էինք կապել, օրիորդ Բալեյֆալն էլ ամեն գնով ուզում էր, որ իր եկեղեցում երգեմ:

Բայց ինչպես մի վեց-յոթ րոպե առաջ սկսել էի պատմել, մեր երկրի ուշագրավ բաներից է, թե բոլորս կամ գոնե իմ շրջապատում ի՞նչ հեշտությամբ ենք կրոնը փոխում՝ առանց որևէ մեկիս համար որևէ նկատելի վնասի: Հենց որ տասներեք տարեկան դարձա, ինձ հայկական կաթողիկ եկեղեցում մկրտեցին, չնայած դեռ երիցականների համար երգում էի, ու չնայած

կրոնի ավանդական ընկալմանը մի տեսակ թերահավատ էի սկսում վերաբերվել ու ձգտում էի ամեն գնով սեփական ընկալումն ձեռք բերել և Ամենազորություն ասածի ի՞մ մեկնությունը գտնել: Անգամ մկրտվելուց հետո սրտում մի տեսակ խոր անբավարարվածություն էի զգում:

Մկրտվելուց երկու ամիս անց ձայնս փոխվեց, և օրիորդ Բալեյֆալի հետ կապած պայմանը չեղարկվեց: Սա ինձ համար մեծ թեթևություն էր, նրա համար՝ ծանր հարված:

Ինչ վերաբերում է Վենտուրա պողոտայի կաթոլիկ եկեղեցուն, Էստեղ միայն Զատկին ու Սուրբ Ծնունդին էի հայտնվում: Մնացած ամբողջ ժամանակ մի կրոնից մյուսին էի դառնում, ինչից, ի վերջո, հետ էլ չտուժեցի: Ու հիմա ամերիկացիների մեծ մասի պես հավատս կայանում է բոլոր կրոններին (իմը ներառյալ) հավատալու մեջ առանց, հավատալ-չհավատալուց անկախ, մեկնումեկի հանդեպ չարանալու. մարդու մարդու լինի:

## ԿՐԿԵՍԸ

Ամեն անգամ, որ մեր քաղաքը կրկես էր գալիս, ինձ ու իմ լավ ընկերոջը՝ Զոհ Էմերյանին է՛լ բան պետք չէր. սկսում էինք, ինչպես ասում են, մեզ կորցրած տրտինգ տալ: Հերիք էր, որ ցանկապատին կամ դատարկ ցուցափեղկերում հայտարարությունը տեսնեինք, խելքներս թոցնում էինք, ել ի՞նչ դպրոց, ինչ բան: Կրկեսն է գալիս: Էսքանը բավական էր, որ ես ու Զոհին սկսեինք կասկածել. դպրոցն ու՞մ է երբևէ ինչ-որ բան տվել:

Իսկ որ չեղ էր հասնում, ուղղակի գժվում էինք: Առավոտից գնում էինք կայարան ու նայում, թե ոնց են կենդանիներին ցած բերում, հետո՝ թե ոնց են ոսկեզօծ վանդակները դրած վագրերին ու առյուծներին Վենտուրա պողոտայով տանում, հետո՝ կրկեսի տարածքում, ոտքի տակ էինք ընկնում, որ գազան վարժեցնողների, մարզիկների ու ծաղրածուների ուշադրությունը գրավեինք:

Մեզ համար կրկեսն ամեն ինչ էր. կրկեսին ոչ մի բան չէր հասնի: Կրկեսն արկած էր, ճամփորդություն էր, վտանգ էր, հմտություն, նազանք, երազանք, զվարճություն, քացրավենիք, ադի-բուտի, օշարակ ու ծամոն: Փղերին ջուր էինք տանում ու մնում կանգնած, որ տպավորություն ստեղծեինք, իբր մենք էլ ենք ինչ-որ ձևով կապված ես հեքիաթային իրարանցման՝ հսկայական վրանը տեղադրելու, պատրաստություն տեսնելու

և բանիմաց տեսքով գրապանի փողը ծախսելու եկող մարդկանց սպասելու հետ:

Մի օր Զոհն տասը րոպե ուշացած՝ շունչը կտրելով, Էմերառնի դպրոցի մեր հինգերորդ դասարանը ներս ընկավ ու գլխարկը չհանած՝ բղավեց՝ հե՛յ, Արա՛մ, ի՞նչ ես տեղդ նստել: Կրկեսը եկե՛լ է:

Հա, էլի, մոռացել էի: Տեղից վեր թռա ու առանց խեղճ օրիորդ Ֆլիբեթի բղավոցը՝ «Արա՛մ Ղարօղլանյան, չհամարձակվե՛ս դուրս գալ, ու՞մ եմ ասում» բանի տեղ դնելու, դասարանից դուրս վազեցի:

Իհարկե լսեցի ու գիտեի, թե վերջս ինչ է լինելու: Վերջս են էր լինելու, որ ծերուկ Դոստնից էլի մի լավ ծեն ուտեի: Բայց ի՞նչ անեի, կրկեսի համար ուշքս գնում էր:

Մեռա քեզ փնտրելով, ասաց Զոհն: Ու՞ր էիր կորել:

Մոռացել էի: Գիտեի, որ գալիս են, բայց որ էսօր են գալիս, մտքից թռել էր: Ու՞ր են հասել:

Ժամը հինգից կայարանում էի, ժամը յոթից՝ կրկեսի տարածքում: Հետները նախաճաշեցի:

Ո՞նց են:

Հոյակապ, ոնց որ միշտ: Ասեցին՝ մի երկու տարուց ինձ էլ հետները կտանեն:

Կտանեն, որ ի՞նչ: Որ առյուծ վարժեցնե՞ս, դրա պես մի բա՞ն:

Չէ, դժվար, որ առյուծ վարժեցնեմ, ասաց Զոհն: Ավելի շուտ, որ բանվորություն անեմ, մինչև ծաղրածու կամ մի ուրիշ բան դառնամ: Վայ թե միանգամից առյուծների հետ գործ ունենալ չկարենամ:

Վենտուրա պողոտայով հիվանդանոցից հյուսիս՝ տոնավաճառի կողմն էինք գնում, կրկեսի տարածքը:

Որ իմանաս՝ ի՞նչ նախաճաշ էր, ասաց Զոհն: Տաքտաք կարկանդակնե՛ր, ապուխտով ձվածե՛ղ, երշի՛կ, սու՛րճ: Ըստի՛ր էր:

Բա ինչի՞ ինձ չկանչեցիր:

Գիտեի, թե գիտես: Գիտեի, թե անցյալ տարվա պես  
կայարան կգաս: Իմանայի՝ մոռացել ես, կկանչեի: Ո՞նց  
էիր մոռացել: Հո բան չէ՞ր պատահել:

Չգիտեմ: Չէ, բան չէր պատահել:

Էդ պահին ինքս էլ չէի հասկանում, որ ճիշտ չեմ  
ասում: Էնքան էլ չէի մոռացել: Հակառակը՝ լավ էլ հիշում  
էի: Հենց էլ հիշում էի, թե անցյալ տարի կրկեսի պատ-  
ճառով բացակայելու համար Դոսոնից ի՞նչ ծեծ էի կերել:  
Հենց էդ պատճառով էլ առավոտ չորսն անց կեսին  
քնած էի մնացել, փոխանակ զարթնեի, հագնվեի ու  
կայարան գնայի: Ծերուկ Դոսոնի ծեծի հիշողությունն  
էր պատճառը, բայց էդ պահին ինքս էլ դեռ չէի հաս-  
կանում: Մենք՝ ես ու Զոհին, ծեծը ոնց որ բնական բան  
համարեինք: Հանուն արդարության. հոգաբարձունե-  
րի խորհուրդը թոյլ չէր տալիս դպրոցից բացակայել,  
եթե հիվանդ չես, ու եթե դրա համար ծեծ էր հասնում,  
ուրեմն էլ ի՞նչ, մեղավոր էինք, ու հոգաբարձուների  
խորհուրդը, ոնց գիտեր, պիտի արդարություն հաստա-  
տեր: Ծեծով էլ հաստատում էին: Սպառնում էին, թե ինձ  
ու Զոհին ուղղիչ տուն կուղարկեն, բայց չին ուղարկում:

Կրկե՞սն է եկել, ասում էր ծերուկ Դոսոնը: Դե կոացիր  
տեսնեմ, տղա:

Մենք էլ կոանում էինք, ու ծերուկ Դոսոնը, գոտին  
առած, ձեռքի մկաններն էր մարզում, իսկ մենք աշխա-  
տում էինք չգոռալ: Հինգ-վեց զարկի լուռ դիմա-  
նում էինք, բայց դրանից հետո էնպես էինք ձայններս  
գլուխներս գցում, ոնց որ հնդկացիներ հարձակվելիս  
լինեին: Գոռգոռոցը դպրոցն էր բռնում: Երբ մեր ծեծը  
պարբերական էր դարձել, ծերուկ Դոսոնը քաղաքա-  
վարությամբ հորդորեց, որ քիչ աղմկենք, ասելով, թե  
դպրոց է. մարդիկ պարապելու են եկել:

Մյուսներն ի՞նչ մեղք ունեն, ասաց: Ուզում են բան սովորել:

Մեզնից անկախ է ստացվում, պատասխանեց Զոհին: Ցավում է:

Գիտեմ, բայց իրեն զսպել ասածը կա: Ուրիշների մասին չմտածող տղաները մեկ-մեկ դիտմամբ ձայնը գլուխն են գցում: Փորձեք ձեր ռոնցը մի քիչ զսպել: Գիտեմ, որ կարող եք:

Հետո Զոհին քան զարկ տվեց, ու Զոհին ամեն կերպ աշխատեց կամաց գոռալ: Ծեծի վերջում Զոհի դեմքը կաս-կարմիր էր, ծերուկ Դոսոնը՝ ուժասպառ:

Հը, ո՞նց էր, հարցրեց Զոհին:

Շա՞տ վայելուչ:

Զանք թափեցի:

Ապրես, ասաց ծերուկ Դոսոնը:

Հոգնել էր, ու շունչը կտրվում էր: Ես մոտեցա աթոռին, որ էս դեպքերում հատուկ դնում էր մեզ մեր տառապանքը քաշելուն օգնելու համար: Դիրքս գրավեցի, ու ասաց՝ Արա՞մ, համբերիր՝ մարդ շունչը տեղը բերի: Քսաներեք տարեկան չեմ, վաթառուներեք եմ: Թող հանգստանամ:

Լավ, բայց շատ եմ ուզում, որ շուտ վերջանա:

Ես էլ, բայց աշխատիր կամաց գոռալ: Փողոցի անցորդները կմտածեն, թե մարդ ենք խոշտանգում: Էդ-քան շա՞տ է ցավում:

Զոհին հարցրեք:

Հը, Զո՞ի, ճիշտն ասա, մի քիչ չափազանցում եք, չէ՞: Երևի ուզում եք դասարանցիների վրա տպավորություն թողնել: Ասենք՝ աղջիկներից մեկի, ի՞՞:

Մենք տպավորության համար չենք գոռում, պարո՞ն Դոսոն: Գոռալուց մի բան էլ ամաչում ենք, չէ՞՝ Արա՞մ:

Էսպես գոռալուց հետո դասարան գնալը շա՞տ ամոթ է: Որ դիմանալ լիներ, շատ կուզեինք չգոռալ:

Լավ, անհնարին բան չեմ պահանջի: Ուղղակի կխնդրեմ, որ մի քիչ ձեզ զսպեք:

Կաշխատեմ, պարո՞ն Դոստն: Շունչը տեղը բերեցի՞ք:

Հիմա, մի քիչ էլ դիմացիր:

Հենց որ շոնչը տեղը բերեց, քսան զարկս ստացա: Ես Զոհից մի քիչ բարձր էի գոռում: Հետո դասարան գնացինք: Շատ ամոթ էր: Բոլորը մեզ էին նայում:

Հը՛, ասաց Զոհին, բա ի՞նչ էիք կարծում: Դուք քսան հարված ուտեիք՝ տեղում կմնայիք: Զէիք գոռզոռա, կմեռնեիք:

Հերիք է, սաստեց օրիորդ Ֆլիբեթին:

Ճիշտ եմ ասում, չհանդարտվեց Զոհին: Վախկոտի մե՛կն են: Կրկեսը քաղաք է եկել, իսկ սրանք սուսուփուս դպրոցում նստել են:

Հերիք է:

Բա իրենց ու՞մ տեղն են դրել, որ աչքները պլշել են:

Օրիորդ Ֆլիբեթին ձեռքը բարձրացրեց, որ Զոհիին լոեցնի:

Հիմա էի կրկեսը եկել էր: Մի տարի էր անցել, ապրիլ ամիսն էր, ու մենք կրկեսի կողմն էինք գնում: Բայց ես անգամ վիճակներս ավելի վատ էր, որովհետև դպրոցում երևացել էինք, ու բոլորը գիտեին, որ կրկես ենք գնում:

Ի՞նչ ես կարծում, Սթաֆորդին հետևներից կուղարկե՞ն:

Սթաֆորդն աշակերտների հաճախելիությանը հետևողն էր:

Հետ չինի՛ կփախչենք, ասաց Զոհին: Դու մի կողմ կգնաս, ես՝ մյուս: Չի կարենա երկուսիս հետևից ընկնել:

Կրկես հասանք: Փոքր վրաններից մի երկուսն արդեն կանգնեցրել էին ու հիմա գլխավորն էին կանգնեցնում:

Տեղներս մեխված՝ սկսեցինք նայել: Շատ տպավորիչ էին աշխատում: Շրջմոլիկի տեսքով մի բուռ տղաներ, մարդ կասեր, հարյուր հոգու գործ էին անում: Էն էլ հմտորեն:

Հանկարծ մարդկանցից մեկը, որին բոլորը Կարմիր էին կանչում, բղավելով ինձ ու Զոհին կանչեց:

Հեյ, թուկից փախածներ, եկեք օգնեք:

Ես ու Զոհին նրա կողմը վազեցինք:

Հա, սը՞ր, ասացի:

Փոքր-մոքր, լայնաթիկունք ու ահռելի մեծ ձեռքերով մարդ էր: Տեսքից փոքր չէիր ասի, որովհետև շատ ուժեղ էր թվում, գլխին էլ խիտ-խիտ աճած շիկակարմիր մազեր ուներ: Տեսքից կասեիր՝ աժդահա է:

Նա ինձ ու Զոհին մի ճոպան տվեց: Ճոպանի ծայրը գետնին ընկած կտավի էր ամրացած:

Դժվար բան չի, ասաց Կարմիրը: Քանի տղաները այունն են կանգնեցնում, դուք էլ ճոպանը ձգեք, որ կտավը այս հետ բարձրանա:

Հա, սը՞ր, ասաց Զոհին:

Գործի թունդ պահին մեկ էլ Սթաֆորդին տեսանք:

Հիմա ո՞նց փախչենք, ասի:

Ոչինչ, թող գա, ասաց Զոհին: Կարմիրին ասել ենք, որ կօգնենք, ուրեմն պիտի օգնենք:

Կասենք, որ կտավը կձգենք ու հետը կգնանք: Հետո կփախչենք:

Լավ, ասաց Զոհին:

Սթաֆորդը կարմիր երեսով ու գործնական կոստյումով խոշոր մարդ էր: Տեսքից ավելի շուտ կկարծեիր, թե փաստարան է կամ դրա պես մի բան: Մոտեցավ ու ասաց. «Հերիք է, անպիտաներ, գնացի՞նք»:

Կարմիրին խոսք ենք տվել, որ կօգնենք, ասաց Զոհին: Հենց որ կտավը ձգենք, կգանք:

Ամբողջ ուժով՝ սայթաքելով ու ընկնելով, ձգում էինք: Բոլորը քրտինք էին թափում: Կարմիրը գոռգոռալով հրամաններ էր տալիս: Հետո գործը վերջացավ, մենք էլ մեր բաժինն արեցինք:

Ժամանակ չկար, որ գոնե տեսնեինք, թե Կարմիրը մեզ ինչ կասի՝ իրենց հետ ճաշելու կիրավիրի՝, թե ինչ:

Զոյն տեղից պոկվեց ու փախավ: Ես հակառակ կողմը վագեցի, որ Սթաֆորդն իմ հետևից ընկավ: Ականջիս հասավ կրկեսի աշխատողների հոհոալն ու Կարմիրի բղավոցը. «Փախիր, տղա՛, փախիր: Թեզ բռնողը չի՛, ուժը չի՛ պատի: Արա՛գ վագիր, թող մկանները մարզի»:

Սթաֆորդի ձայնն էլ ականջիս հասավ: Կատաղած էր ու հայիոյում էր:

Ինչ որ է, հաջողեցրի փախչել ու ծպտված մնացի, մինչև տեսա, որ մեքենան նստեց ու հեռացավ: Հետո հետ եկա ու վրանի մոտ Զոյին գտա:

Էս անգամ վերջներս եկավ, ասաց:

Վայ թե ուղղիչ տուն ուղարկեն:

Չէ, վայ թե մտրակի երեսուն հարված ուտենք: Դաժան բան է, ինչքան էլ վաթսուներեք տարեկան լինի: Երեսու՞ն: Լաց չեմ զսպի:

Երևի ես էլ, ասաց Զոյին: Տասից հետո լացդ գալիս է, բայց մի կերպ դիմանում ես մինչև տասնմեկը, հետո մինչև տասներկուսը, ու գոռում ես, որ հանկարծ չլացես, ու մտածում ես, որ այ, մյուսին լացելու ես, բայց էլի ես դիմանում: Մինչև հիմա դիմացել ենք: Բայց երեսունին վայ թե չդիմանանք:

Ե՛հ, վաղվանը վաղվան թողնենք:

Կարմիրը մեզ էլի ինչ-որ մանր-մունր գործեր տվեց, հետո թողեց, որ ճաշին կողքին նստենք: Մսով լրի էր՝ ուտելի: Ինչ-որ իսպանացի մարզիկների ու ձիեր վարժեցնող իտալացի մի ընտանիքի հետ զրուցեցինք:

Երկու ներկայացումն էլ նայեցինք՝ ցերեկայինն ու երե-  
կոյանը, իետո օգնեցինք, որ կրկեսը հավաքեն: Հետո  
կայարան գնացինք, Էնտեղից՝ տուն: Մինչև տուն  
հասա, շատ ուշ էր: Առավոտ դպրոց գնալիս քունս  
տանում էր:

Դպրոցում մեզ էին սպասում: Օրիորդ Ֆլիբեթին թույլ  
չտվեց անգամ ներկա-բացակային մասնակցել: Ասաց,  
որ տնօրենի սենյակը գնանք: Ծերուկ Դոսոնը կազմ ու  
պատրաստ մեզ էր սպասում: Մթափորդն էլ էր Էնտեղ  
ու շատ բարկացած էր:

Մտածեցի՝ այ, իիմա ուղղիչ տուն կուղարկեն:

Հրե՛ս, Մթափորդին ասաց Դոսոնը, կուզե՞ւ տա՛ր:

Պարզ էր, որ մեր գալուց առաջ խոսել էին ու համա-  
ձայնության չեին եկել:

Է՞ս դպրոցում, ասաց ծերուկ Դոսոնը, եթե մեկին  
պատիժ է հասնում, պատժողը ե՞ս եմ: Ուրիշ ոչ ոք: Բայց  
ուղղիչ տուն տանելն արգելել չեմ կարող:

Մթափորդը ձայն շիանեց: Ուղղակի խոր արհամար-  
հանքով Դոսոնին նայեց ու սենյակից դուրս եկավ:

Հը՛, տղանե՛ր, հարցրեց Դոսոնը, ո՞նց էր:

Հետները ճաշեցինք, ասաց Զոհին:

Լավ է: Հիմա գործին դառնանք: Քանի՞ անգամ եք  
կարգը խախտել տասնվեց, թե՞ տասնյոթ:

Էդքան շատ չի, ասաց Զոհին: Երևի տասնմեկ կամ  
տասներկու:

Լավ, բայց մի բան հաստատ գիտեմ. Էս անգամ երե-  
սուն հարված եք ստանալու:

Իմ կարծիքով երեսունը հաջորդ անգամ պիտի լինի,  
ասաց Զոհին:

Չէ, հաշիվը կորցրել ենք, բայց վստահ եմ, որ երե-  
սունի հերթը հասել է: Ո՞ր մեկիցդ սկսեմ:

Ինձնից:

Հավ, Արամ: Աթոռը պինդ բռնիր, պատրաստվիր ու  
աշխատիր գոռոցներդ զապել:

Հա, սը՛ր, կաշխատեմ, բայց երեսունը շատ-շատ է:

Զարմանալի բան պատահեց: Հենց էլ երեսուն հար-  
ված տվեց, ու ես հենց էլ գոռացի, բայց գոռոցս մի  
դեսակ զուսպ էր: Որովհետև էս ծեծը կերածներիցս  
ամենաթեթևնն էր: Մտրակի հարվածները հաշվում էի.  
մինչև երեսունը հաշվեցի, բայց չեր ցավում, ու ես լաց  
չեղա, չնայած վախենում էի, թե կլացեմ:

Նոյնը՝ Զոհին: Երկուսով կանգնել, սպասում էինք, որ  
մեզ ազատ արձակի:

Շա’տ ապրեք, տղանե՛ր, որ էս անգամ ձեզ էսքան  
լավ զսպեցիք, ասաց ծերուկ Դոսոնը: Չեի ուզի, որ մար-  
դիկ կարծեն, թե ձեզ խոշտանգում եմ:

Մենք էլ էինք ուզում շնորհակալություն ասել, որ էս  
անգամ ծեծը թեթև էր, էն էլ չգիտեինք՝ ոնց: Բայց իմ  
կարծիքով նա հասկացել էր, թե ինչ ենք զգում, որով-  
հետև երբ ասաց, որ դասարան գնանք, մի տեսակ քթի  
տակ ծիծաղեց:

Էդ պահին երկուսս էլ հպարտ ու երջանիկ էինք,  
որովհետև գիտեինք, որ մինչև սեպտեմբեր՝ մինչև  
տոնավաճառի բացվելը, ամեն ինչ լավ կլինի:

## **ԵՐԵՔ ՀՈՂՈՐԴՆԵՐԻ ՈՒ ԿՐԹՎԱԾ ՆՊԱՐԱՎԱՃԱՌԸ**

Տարվա մեծ մասն առուները ցամաք էին, բայց երբ ցամաք չէին, ջուրը շոնդալից էր հորդում: Հենց որ Սիեռա Լսադայի ձյունը հալվում էր, առուները սկսում էին շոնդալ, ու չգիտես ոնց, Աստված գիտի որտեղից, գորտեր, կրիաներ, ջրային օձեր ու ձկներ էին հայտնվում:

Գարնանը ջրի շառաջն արագանում էր, ինչպես և սրտի զարկերը: Բայց բնության՝ կանաչից գորշավունի, ծաղկից պտղի, ջերմությունից տապի անցման հետ առուները սկսում էի ծծլալ, սիրտը՝ ծովանալ: Սար ու բլրից վազող առաջին գետակները սառն էին, հորդառատ ու սպառնալի: Էնքան սառն ու արագահոս, որ ոչ մի տղայի մերկ մարմին չէին հրապուրի:

Մենակ լիներ թե ընկերովի, տղան ափին կկանգներ ու երկա՞ր ջրին կնայեր, հետո, կարծես ուզենալով ինչոր բան ապացուցել, շորերը դեն կգցեր, թափ կառներ, գլխիվայր կսուզվեր, շնչահեղձ՝ գլուխը ջրից կհաներ ու դիմացի ափը կլողար: Եթե առաջին սուզվողը ինքն էր, շուտով մյուսներն էլ կհետևեին, որ ամոթով չմնային: Բանը մենակ սառնությունը չէր. ջուրը ոնց որ տղաներին մարտահրավեր նետեր: Գարնան ջուրը տղաների հավեսը չուներ:

Ապրիլյան մի օր Մուրադ զարմիկիս ու նրա ընկերներից մեկի հետ Թոմսոնի խրավանդը գնացինք: Ընկերը՝ Զո Բեթենքորթը, պորտուգալացի էր, որն աշխարհում

ամենից շատ չորս պատից դուրս ազատությունն էր սիրում: Դասարանի պատերը Զոյին բթացնում էին. չգիտեր՝ իրեն ոնց պահեր: Բավական էր դպրոցի տարածքից հեռանար, դառնում էր խելացի, բարեհամբույր, անկաշկանդ, անկեղծ ու բոլորից ջերմ: Մուրադի ասելով՝ Զոն բթամիտ չէր, ուղղակի կրթության համար չէր ստեղծված:

Օրը շաբաթ էր ու պայծառ: Երկուական երշիկով բրդուճ ունեինք ու տասը սենթ փող՝ երեքիս: Որոշել էինք ոտքով գնալ, որ կեսօրվա կողմը հասնեինք, ու օդը հասցներ տաքանալ: Երկաթգծով մինչև Քալվա քայլեցինք, հետո խճուղով՝ մինչև Մալագա, Էնտեղից՝ խաղողի այգիներով արևելք, մինչև խրավանդը: Թոմսոնի խրավանդ ասելով՝ շատ որոշակի տեղ նկատի ունեինք. խճուղիների խաչմերուկում՝ սահանադրան ու փայտե կամրջի մոտ: Լողալու տեղը կամրջից հարավ էր: Խրավանդից արևմուտք մեծ ցանկապատած տարածք էր կովերի ու ձիերի արածելու համար: Արևելքից խճուղին էր: Խճուղին ու խրավանդը մղոններով կողք կողքի էին ընթանում: Զուրը հարավ էր հոսում, ու հաջորդ կամուրջը երկու մղոն էն կողմ էր: Թե ուզում էիր, որ ամառային լողը տեղը տեղին լիներ, պիտի հոսանքն ի վար լողալով երկրորդ կամրջին հասնեիր, արոտի տարածքում շունչ առնեիր, հետո հոսանքին հակառակ հետ դառնայիր, ինչը լուրջ ջանք էր պահանջում:

Մինչև Թոմսոնի խրավանդ հասանք, պայծառ օրը մոայլվել էր ու որոշակիորեն ցրտել: Ոնց որ փոթորիկ գուժեր: Զուրը շռնդում էր, երկինքը մթնել էր, օդը՝ սառել ու անհրապույր դարձել: Զորս կողմն ամայի ու լքված տեսք ուներ:

Զո Բեթենքորթն ասաց. «Էսքան ճանապարհ եմ կտրել, որ լողանամ: Անձրև գա-չգա՝ լողանալու եմ»:

Ես էլ:

Դու համբերիր, ասաց Մուրադ զարմիկս, ես ու Զոն տեսնենք ոնց է: Որ լավ լինի, դու էլ կմտնես: Կարգին լողալ գիտե՞՞ս:

Ո՞՛ֆ, քիչ խոսիր:

Հենց ինձ թվում էր, թե անտեղի վիրավորել են, միշտ ես պատասխանն էի տալիս:

Լավ, ասաց Զո Բեթենքորթը, բայց գիտե՞՞ս:

Ո՞նց չգիտեմ:

Դրան հարցնես, ասաց Մուրադ զարմիկս, ամեն ինչ էլ գիտի: Բոլորից լավ:

Բայց ոչ մեկը, ոչ մյուսը չգիտեին, թե ինչքան անվատահ էի, որ ուժս կիերիքեր սառը հորդացող ջուրը նետվել ու կտրել-անցնել: Որ ճիշտն ասեմ՝ մութ, շռնդալից ջուրն ինձ վախեցրեց, սպառնալի թվաց ու մի տեսակ վիրավորեց:

Ո՞՛ֆ, քիչ խոսիր, ասացի ջրին:

Ես բրդուճներիցս մեկը հանեցի՝ թերանս տարա: Մուրադը ձեռքիս խփեց, ու քիչ էր մնում ջուրը գցեր:

Ուտելը լողանալուց հետո, ասաց: Թե՞ ուզում ես փորդ ցավի:

Մտքիցս լրիվ թռել էր: Սպառնալիքի ու սարսափի պատճառով:

Մի բրդուճից չի՛ ցավի, ասի:

Լողանալուց հետո ավելի ախորժակով կուտես, ասաց Զոն:

Շատ բարի տղա էր: Գիտեր, որ վախենում եմ, ու գիտեր, որ ձև եմ անում: Ես գիտեի, որ ինքն էլ է վախենում, բայց վախս ինձնից խելոք է փորձում հաղթահարել:

Էսպե՞ս կանենք, ասաց, կլողանք, մյուս ափին կհանգստանանք, հետ կգանք, կհագնվենք, ու թե

Եղանակը չբացվի, տուն կգնանք: Որ բացվեց, մի քիչ էլ կլողանք:

Էս եղանակը բացվողը չի, ասաց Մուրադ զարմիկս: Թե լողալ ենք ուզում, պիտի ժամանակ չկորցնենք:

Զո՞ն արդեն սկսել էր շորերը հանել: Մուրադն էլ սկսեց: Ես էլ: Խրավանդի ափին մերկ կանգնած՝ անհրապոյր ջրին էինք նայում: Գլխիվայր սուզվելու չեր տրամադրում, բայց ջուրը մտնելու ուրիշ արժանապատիվ ձև չկար: Թե կամաց-կամաց մտնեիր, ել ի՞նչ լողորդ: Թե ուղղակի ցատկեիր, շատ ամոթ չեր լինի, բայց նրբագեղ էլ չեր լինի: Մյուս կողմից ջուրը հե՛չ չեր հրապուրում, շա՛տ անբարյացակամ էր, վանող ու սպառնալից: Արագ հոսքի պատճառով հակառակ ափն ավելի հեռու էր թվում, քան կար:

Առանց մի խոսքի Զո՞ն ջուրը սուզվեց: Առանց մի խոսքի Մուրադ զարմիկս ջուրը սուզվեց: Մի չլմփոցից մյուսը տևած մեկ-երկու վայրկյանն ինձ ձմռան երկար գիշերվա երկար երազ թվացին, քանի որ վախը մի կողմ՝ համ էլ թունդ մրսում էի: Խռովված մտքում՝ մի հատոր չարտասանված խոսքեր, ես էլ սուզվեցի:

Հաջորդն էն եմ հիշում (երեք վայրկյան չանցած), որ Զո՞ն գոռում է, Մուրադ զարմիկս գոռում է, ու ես գոռում եմ: Էնպես էր պատահել, որ երեքս էլ համարյա մինչև արմունկները տիղմն էինք խրվել, հազիվ մի կերպ ազատվել էինք ու դուրս պրծել՝ գժված, թե մյուս երկուսին հանկարծ բան պատահած չլինի: Երեքով մնացել էինք մինչև ծնկներս տիղմի մեջ՝ սառը ջրում կանգնած:

Լավ էր, որ կանգնած տեղից էինք սուզվել: Եթե թափ առնելով սուզված լինեինք՝ գլխիվայր, մինչև կրունկներս տիղմն էինք խրվելու ու էղպես մինչև ամառ կամ ավելի մնայինք:

Մի կողմից մի քիչ վախեցած էինք, մյուս կողմից՝ ուրախ, որ կենդանի ենք մնացել:

Էսպես տիղմի մեջ կանգնած՝ փոթորիկը սկսվեց:

Դե որ մեկ է՝ անձրևից թռչվելու ենք, ասաց Զո՞ն, կարելի է մի քիչ էլ ջրում մնալ:

Երեքս էլ դողում էինք, բայց խելքին մոտ էր թվում, որ լողալու առիթը բաց չթողնենք: Զուրը հազիվ երեք ոտնաշափ լիներ: Ինչ որ է, Զոյին հաջողվեց տիղմից դուրս պրծնել, դիմացի ափը լողալ ու հետ գալ:

Մեր կարծիքով երկար լողացինք, բայց երևի հազիվ տասը րոպե լիներ: Հետո ջրից ու տիղմից դուրս եկանք, հագնվեցինք ու, ծառի տակ կանգնած՝ բրդուճներս կերանք:

Անձրևը, փոխանակ կտրվեր, տեղատարափ դարձավ, ու որոշեցինք, քանի շուտ է՝ տուն գնալ:

Մեկ էլ տեսար՝ մեքենա պատահեց, ասաց Զո՞ն:

Մինչև Մալագա ճանապարհին ոչ մի շունչ չկար: Մալագայում մի խանութ մտանք, վառարանի մոտ տաքացանք, հետո երեքով մի տուփ լորու պահածու ու մի բռնոն հաց առանք: Խանութի տերը Դարկուս ազգանունով մարդ էր, թեև օտարերկրացի չէր: Մեզ համար պահածոն բացեց, լորին երեք մասի բաժանեց՝ թղթե ափսեների մեջ լցրեց, մեկական փայտե պատառաքաղ տվեց ու հացը կտրտեց: Ծերուկ էր, բայց մի տեսակ ջահել ու զվարթ էր թվում:

Որտեղից եք գալիս, տղանե՛ր, հարցրեց:

Լողալու էինք գնացել, ասաց Զո՞ն:

Լողալու՞:

Ըի՞՛, ասաց Զո՞ն: Որ գետն իր տեղն իմանա:

Ցաքանվե՛մ ես, զարմացավ նպարավաճառը: Հետո՞, ո՞նց էր:

Հազիվ երեք ոտնաշափի:

Սա՞ռն էր: *թվայիշտեց և 1915-ամյա հոյթ*  
Սառույց:

Տնկի՝ դառնամ: Հետո՝, հավես էր:

Հավես էր, Մուրադ զարմիկիս հարցրեց Զոն:

Ինքն էլ չգիտեր՝ հավես էր, թե ինչ էր:

Չգիտեմ, ասաց Մուրադը: Սուզվեցինք ու մինչև արմունկներս տիղմը խրվեցինք:

Ցեխից ազատվելը հեշտ չէր, ասաց Զոն:

Մկրանտն էտի, ասաց նպարավաճառը:

Հետո մի տուփ լորի էլ բացեց, մի մեծ բաժին բերանը տարավ, մնացածը մեր ափսեները լցրեց:

Էլ փող չունենք, ասի:

Հիմա պատմեք, թե պատճառն ինչ էր:

Ոչ մի բանը, բերանը լիքը հաց ու լորի՝ կարճ ասաց Զոն. ոնց որ հոգնել էր ամեն վայրկյան պատճառներ բացատրելուց:

Կիտվեմ վառվեմ, ասաց նպարավաճառը: Հիմա ասեք տեսնեմ՝ որտեղացի՝ եք: Կալիֆոռնիացի՝, թե՞ եկվոր:

Երեքս էլ կալիֆոռնիացի ենք, ասաց Զոն: Ես Ֆրեզնոյի 7-րդ փողոցում եմ ծնվել, Մուրադը՝ կարծեմ հարավային երկաթգծի կողմերը, զարմիկն է՝ մոտերքում մի տեղ:

Ոռոգվեմ ես: Հիմա ասեք՝ ի՞նչ կրթություն եք ստացել:

Ոչ մի, ասաց Զոն:

Ծառից քաղվեմ՝ արկղն ընկնեմ: Լավ, ասեք տեսնեմ՝ ի՞նչ լեզուներ գիտեք:

Ես՝ պորտուգալերեն, ասաց Զոն:

Բա ասում ես՝ կրթություն չունես: Ես համալսարան եմ ավարտել, բայց պորտուգալերեն չգիտեմ: Իսկ դու՛, տղա՞ն, դու՛ ինչ գիտես:

Հայերեն գիտեմ, ասաց Մուրադ զարմիկս:

Վազից պոկվեմ, հատիկ-հատիկ ջահել աղջկա  
ատամների բաժի՞ն դառնամ: 1892-ին քոլեջ եմ ավար-  
տել, բայց հայերեն մի բառ չգիտեմ: Հիմա քե՛զ տես-  
նենք, տղա, քո՞ անունն ինչ է:

Արամ Ղարօղլանյան:

Փորձեմ. Ղարօղ-լան-յան: Ճի՞շտ էր:

Ճիշտ էր:

Արամ:

Հա, սը՛ր:

Իսկ դու՞ ինչ անծանոթ օտար լեզու գիտես:

Ես էլ հայերեն գիտեմ: Ինքը զարմիկս Է՝ Մուրադ  
Ղարօղլանյանը:

Թող ցաքանվե՛մ, տնկվե՛մ, էտվե՛մ, կիտվեմ՝ վառվեմ,  
ծառից քաղվեմ... Է՞լ ինչ էր... արկղը նետվեմ, հատիկ-  
հատիկ պոկվեմ ուտվեմ: Հա՛, էս բոլորը լինեմ, թե սրա  
նման պատմություն լսած կամ: Սողուններ պատահե-  
ցի՞ն:

Ի՞նչ սողուններ, հարցրեց Զոն:

Օձեր:

Չտեսանք: Զուրը սև էր:

Զուրը սև էր: Իսկ ձկնե՞ր:

Չէ, չտեսանք, ասաց Զոն:

Խանութի դռանը մի ֆորդ կանգնեց, միջից ծերունի  
դուրս եկավ ու փայտե շեմը հատեց, մտավ խանութ:

Մի շիշ կրացե՞ն, Ա՛բոթ, ասաց նպարավաճառին:

Դատավոր Հա՛րմոն, պատասխանեց նպարավա-  
ճառը, թույլ տվեք ձեզ ներկայացնել պանծալի Կալի-  
ֆոռնիա նահանգի երեք ամենահերոսական պատա-  
նիներին:

Նա մատը Զոյի կողմը տնկեց, ու Զոն ասաց՝ Զո  
Բեթենքորթ: Պորտուգալերեն գիտեմ:

Ես է՛ մի քիչ ֆրանսերեն, ասաց Մթիվեն Լ. Հարմոնը՝ դատավորը:

Նպարավաճառը մատը Մուրադ զարմիկիս կողմը տնկեց ու ասաց՝ Մուրադ: Մուրադ Ղարօղյան:

Դու՞ ինչերեն գիտես, հարցրեց դատավորը:

Հայերեն, պատասխանեց Մուրադ զարմիկս:

Նպարավաճառը բացած շիշը դատավորին տվեց, սա շիշը բերանը տարավ, երեք կում արեց, ձեռքը կրծքին զարկեց ու ասաց՝ հպարտ եմ հայերեն իմացող կալիֆոռնիացու հետ ծանոթանալու համար:

Նպարավաճառը մատն իմ կողմը տնկեց:

Արամ Ղարօղյանյան, ներկայացա ես:

Եղբայրող է, հարցրեց դատավորը:

Զարմիկս:

Նույն բանն է: Եթե դժվար չէ, ինձ կասե՞ս, Ա՛բոթ, թե ես խրախճանքի ու հուզական տրամադրությանդ պատճառն ի՞նչ է, եթե հարբածությունը բացառենք:

Տղաները հենց նոր գետին իր տեղն են ցույց տվել, ասաց նպարավաճառը:

Դատավորը երեք կում էլ արեց, երեք անգամ կամաց ձեռքը կրծքին զարկեց ու հարցրեց՝ հենց նոր ինչ են արե՞լ:

Հենց նոր գետում լողացել են:

Զերմություն չունե՞ք, հարցրեց դատավորը:

Զերմությու՞ն, ասաց Զոն: Չէ, հիվանդ չենք:

Նպարավաճառը քահ-քահ ծիծաղեց:

Հիվա՞նդ, անաց: Դատավո՞ր, ես տղաները մորեմերկ ձմռան մութ ու սառը ջուրն են նետվել ու ամառվա կայտառությամբ դուրս եկել:

Հացն ու լոբին կերանք վերջացրինք: Ծարավ էինք, բայց չգիտեինք՝ կարելի՞ էր մեջ ընկնել ու ջուր խնդրել: Այսինքն՝ ես չգիտեի, բայց Զոն չվարանեց:

Պարո՞ն Աբոթ, ասաց, կարելի՞ է խմելու ջուր խնդրել: Ջու՞ր, կրկնեց նպարավաճառը: Ջուրը լողալու համար է, տղա՞ս:

Հետո երեք թղթե բաժակ առավ, ծորակով տակառիկին մոտեցավ ու բաժակներն ինչ-որ ոսկեգոյն հեղուկ լցրեց:

Առե՛ք, տղաներ: Խմե՛ք: Ոսկի խնձորի անարատ ոսկի հյութ է:

Դատավորն իր շշից նրան էլ մի բաժակ լցրեց ու շիշը բերանը տանելով՝ ասաց. ձեր կենացը, պարոնայք:

Հա, սը՛ր, ասաց Զո՞ն:

Բոլորս խմեցինք:

Դատավորը շիշը փակեց, հետևի գրանը դրեց ու հերթով, ուշադիր երեքիս նայեց, կարծես ուզում էր լավ հիշել, որ երբեք չմոռանա: Հետո ասաց՝ բարով մնաք, պարոնայք: Կես ժամից դատը կակսվի: Մեկին պիտի դատեմ, որ պնդում է, թե ձին չի գողացել, փոխ է առել, ու մեքսիկերեն է խոսում: Գողովթյան համար մեղադրողը՝ իտալերեն: Մնաք բարո՞վ:

Գնաք բարո՞վ, ասացինք:

Մեր շորերն արդեն համարյա չորացել էին, բայց անձրւը չէր կտրվել:

Պարո՞ն Աբոթ, ասաց Զո՞ն, շա՞տ շնորհակալ ենք, բայց պիտի տուն գնանք:

Չարժի, ասաց նպարավաճառը: Ես էլ ձեզ եմ շնորհակալ:

Քիչ առաջ զվարճախոս զրուցաեր նմարդը, չգիտես ինչու, լրակյաց էր դարձել: Մենք կամաց դուրս եկանք ու ճանապարհով քայլեցինք: Անձրւը թույլ մաղում էր՝ համարյա աննկատ էր դարձել: Ես չգիտեի՛ ինչ մտածեմ: Առաջինը Զո՞ն խոսեց:

Ես պարո՞ն Աբոթը, ասաց, մի բան արժի:

Ցուցանակին Դարկուս էր գրված, ասացի: Աբոթը  
անունն է:

Անուն-ազգանունը չգիտեմ, բայց մի բան արժի:

Դատավորն էլ պակաս չէր, ասաց Մուրադը:

Կրթված էր, ասաց Զոն: Ես էլ ֆրանսերեն կոսվորեի,  
բայց որ ու՞մ հետ խոսեմ:

Լուս քայլում էինք ճանապարհով: Մի քանի րոպեից  
սև ամպերը բացվեցին, արև դուրս եկավ, ու հեռվում՝  
դեպի արևելք, Սիեռա Նևադայի վրա ծիածան տեսանք:

Բայց գետին լավ տեղը դրինք, ասաց Զոն: Էդ մարդը  
խե՞նթ էր, ի՞նչ էր:

Չգիտեմ, ասաց Մուրադ զարմիկս:

Դեռ մի կես ժամ քայլեցինք, մինչև տուն հասանք:  
Բոլորս էն երկուսի մասին էինք մտածում, ու թե նպա-  
րավաճառն իրո՞ք խենթ էր:

Ես գնացի՛, ասաց Զոն:

Ու փողոցով ցած քայլեց:

Հիսուն յարդ անցավ, կանգնեց ու քթի տակ մի բան  
ասաց:

Հը՛, գոռաց Մուրադ զարմիկս:

Հա՛, գոռաց Զոն:

Ի՞նչը հա, գոռացի ես:

Խե՞նթ էր:

Ինչի՞ց իմացար:

Բա էլ ո՞վ վազից կպոկվի ու հատիկ-հատիկ ջահել  
աղջկա ատամների բաժին կդառնա:

Ասենք՝ խենթ էր, ասաց Մուրադ զարմիկս, հետո՞ ինչ:

Զոն ձեռքը կզակին դրեց ու մտածեց: Արևը պայծառ  
շողում էր ու չորս կողմը լուսով էր ողողել:

Չէ, երևի խենթ չէր, գոռաց Զոն:

Ու շարունակեց փողոցն ի վար քայլել:

Լավ էլ խե՞նթ էր, ասաց Մուրադ զարմիկս:

Երևի, ասացի, մեկ-մեկ է խենթանում:

Որոշեցինք է՛լ չմտածել, մինչև մյուս անգամ լողալու գնանք ու հետո խանութը մտնենք, տեսնենք՝ ինչն ինչոց է:

Մի ամսից՝ խրավանդում լողալուց հետո, նորից խանութ գնացինք: Էս անգամ մեզ պարոն Աբոթ Դարկուսից շատ ավելի երիտասարդ մեկը դիմավորեց: Սա էլ օտարերկրացի չեր:

Ի՞նչ կուգեիք, հարցրեց:

Հինգ սենթի երշիկ, ասաց Զոն, ու կես բոքոն հաց:

Բա պարոն Դարկուսն ու՞ր է, հարցրեց Մուրադ զարմիկս:

Տուն է գնացել:

Տունը որտե՞ղ է:

Կարծեմ՝ Կոնեկտիկուտում մի տեղ:

Մենք երշիկը հացի մեջ դրինք ու սկսեցինք ուտել:

Վերջապես Զոն բոլորիս հուզող հարցը տվեց:

Խե՞նթ էր:

Դժվար է ասել, պատասխանեց նպարավաճառը: Սկզբում ես էլ էի կարծում, թե խենթ է: Հետո մտածեցի, որ չէ: Խանութից դատելով՝ խենթ էր: Ավելի շատ բաժանում էր, քան վաճառում: Թե չէ նորմալ էր:

Ծնորհակալ ենք, ասաց Զոն:

Խանութում կարգուկանոն էր ու ահավոր տաղտկալի: Դուրս եկանք ու դեպի տուն քայլեցինք:

Խե՞նթ էր, ասաց Զոն:

Ո՞վ, հարցրի:

Նոր նպարավաճառը, ասաց Զոն:

Էն ջահել մա՞րդը:

Հա, էս մեկը, որ կրթություն չունի:

Երևի ճիշտ ես ասում, համաձայնվեց Մուրադ զարմիկս:

Ամբողջ ճանապարհին կրթված նպարավաճառին էինք հիշում:

Ցաքանվե՞մ ես, ասաց Զոն ու փողոցն ի վար քայլեց:

Ծառից քաղվեմ, ա՛րկոն ընկնեմ, ասաց Մուրադ զարմիկս:

Վազից պոկվեմ, հատիկ-հատիկ շահել աղջկա ատամների բաժի՞ն դառնամ, ասացի:

Էդ մարդն իսկապես մի բան արժեր: Քսան տարի անց որոշեցի, որ բանաստեղծ կլիներ ու Էն կորած գյուղի նպարավաճառի խանութն էլ մուսաների հորդորով էր բացել, ոչ թե խղճուկ շահի համար:

## ՇՈԳԵՔԱՐԾ 38 ԱՆՈՒՆՈՎ ՕԶԻՐՎԱՆ

Մի օր էշ նստած մի մարդ մեր քաղաք Եկավ ու սկսեց գրադարանում պտտվել, որտեղ էն օրերին ես ել էի ժամանակիս մեծ մասն անցկացնում: Օջիբվա ցեղի մի բարձրահասակ ջահել հնդկացի էր: Ասաց՝ անունը Շոգեքարշ 38 է: Քաղաքում բոլորը համոզված էին, որ գժանոցից է փախել:

Գալուց վեց օր անց նրա խեղճ կենդանին Թուլերիում տրամվայի տակ ընկավ ու ծանր վիրավորվեց: Մյուս օրը Մարիպոզա ու Ֆուլթոն փողոցների անկյունում հոգին ավանդեց, հավանաբար ներքին վնասվածքներից: Գետին տապալվեց, ընկավ տիրոջ ոտքերին, տնքաց ու սատկեց: Հնդկացին ոտքը տակից հանեց, բարձրացավ ու անկյան խանութ-սրճարանից միջքաղաքայինով զանգ տվեց: Օքլահոմայում ապրող եղբորն էր զանգել: Զանգը թանկ արժեր. փողը, ինչպես ասել էին, հանգիստ ճեղքը գցեց, կարծես սովոր էր ամեն օր եղախսի զանգեր տալ:

Ես ել էի սրճարանում. եկել էի բանան-ընկույզով սիրածս քացրավենին ուտելու: Գազաջրի սարքի մոտ նստած՝ վայելում էի:

Ողջույն, Ուիլի, ասաց:

Գիտեր, որ անունս Ուիլի չի, բայց դուրը գալիս էր ինձ եղախս կոչել: Ոտքը քարշ տալով՝ ծամոնի բաժնին մոտեցավ, երեք տուփի մրգի ծամոն գնեց, հետո

կաղալով հետ եկավ ու հարցրեց՝ եդ ի՞նչ ես ուտում։ Դուրեկան տեսք ունի։

Բանան-ընկույզով քաղցրավենի։

Հնդկացին կողքիս բարձր աթոռակին բազմեց։

Ինձ էլ նոյնից տվեք, ասաց ջրեր վաճառող աղջկան։

Եշի համար շատ եմ ցավում, ասացի։

Ես աշխարհում էշն է՛լ տեղ չունի։ Ի՞նչ մեքենա առնեմ։

Ուզում եք մեքենա՝ առնել։

Արդեն մի քանի րոպե կլինի։

Չգիտեի, որ փող ունեք։ Կարծում էի՝ աղքատ եք։

Մարդիկ եղան են մտածում։ Համ էլ մտածում են, որ գիծ եմ։

Չէ, ես չեի մտածում, թե գիծ եք, բայց ոչ էլ մտածում էի, թե հարուստ եք։

Ե՛հ, հարուստ եմ։

Երանի ես էլ լինեի։

Ինչի՞դ է պետք։

Երեք տարի է՝ ուզում եմ Մենդոթայում ձուկ բռնելու գնալ, բայց ոչ կարթեր ունեմ, ոչ էլ մեքենա, որ գնամ։

Մեքենա քշել գիտե՞ս։

Ամեն ինչ քշել էլ գիտեմ։

Բայց քշած կա՞ս։

Դեռ չէ։ Չեմ ունեցել, որ քշեմ, իսկ գողանալը մեր ընտանիքը չի հանդուրժում։

Ուզում ես ասել՝ կարծում ես, թե հենց մեքենա նստես, կքշե՞ս։

Հա, սը՞ր։

Հիշու՞մ ես, քեզ գրադարանի մոտ անցյալ օրն ինչ ասացի։

Մեքենաների դարի մասի՞ն։

Հա։

Հիշում եմ:

Ապրե՞ս: Հնդկացիների բնազդը հեծնելն է, թիավարելը, որսալն ու լողալը: Ամերիկացիների բնազդը խելքը սարքերին տալն է:

Ես ամերիկացի չե՞մ:

Գիտեմ, հայ ես: Հիշում եմ: Հարցրի՝ ասեցիր: Ամերիկայում ծնված հայ ես: Տասնչորս տարեկան ես ու արդեն չես էլ կասկածում, որ հենց մեքենա նստես՝ կքշես: Բա ի՞նչ ես, որ ամերիկացի չես: Շատ էլ թե մաշկո իմի պես թուխ է:

Ավտո քշելն ի՞նչ մեծ բան է: Հեք էլ դժվար չի: Եշ հեծնելոց հեշտ է:

Լավ, թող քո ասածը լինի: Հիմա որ դուրս գանք, ու մեքենա առնեմ, ինձ համար կքշե՞ս:

Իհա՞րկե:

Ինչքա՞ն փող կուզես:

Ուզում եք ասել՝ ինձ փող եք տալու մեքենա քշելու համար:

Իհա՞րկե:

Շատ բարի եք, բայց մեքենա քշելու համար փող չեմ վերցնի:

Բա որ հեռու՞ գնանք:

Ինչքան հեռու՝ էնքան լավ:

Տեղդ նստել չե՞ս սիրում:

Ծնված օրից ես հին փոքրիկ քաղաքում եմ ապրում:

Դուրդ չի՞ գալիս:

Սարեր եմ սիրում, գետեր ու լճեր եմ սիրում:

Սարերում եղած կա՞ս:

Դեռ չէ, բայց մի օր կգնամ:

Պարզ է: Ի՞նչ ես կարծում, ի՞նչ մեքենա առնեմ:

Երկտեղանի ֆորդը լավ չի:

Ամենալա՞վն է:

Ամենալա՞վն եք ուզում:

Լավ չի՝ ամենալավն առնեմ:

Չգիտեմ: Ամենալավը շատ թանկ է:

Բայց ո՞րն է:

Մարդիկ կան՝ կարծում են, որ կադիլակն է: Մարդիկ էլ կան՝ փաքարդն ավելի են հավանում: Երկուսն էլ լավն են: Չգիտեմ՝ որն է որից լավ: Շանապարհին որ փաքարդ ես տեսնում, չես ուզում աչքդ կտրել. Էնքա՞ն սիրուն է: Նոյնն էլ՝ կադիլակը: Շատ եմ նայել, թե ոնց են խճուղով սլանում:

Փաքարդն ի՞նչ արժի:

Մի երեք հազար դոլար: Կամ մի քիչ ավելի:

Աթոռիցու իջա: Խենթի պես էր խոսում, բայց գիտեի, որ խենթ չի:

Պարո՞ն Շոգեքարշ, իսկապե՞ն ուզում եք հենց հիմա փաքարդ առնել:

Գիտես, որ էշո քիչ առաջ սատկեց:

Հա, տեսա: Ուր որ է կգան, ձեզ կձերբակալեն:

Չեն ձերբակալի:

Եթե օրենք կա, որ փողոցում սատկած կենդանի թողնել չի կարելի, կձերբակալե՞ն:

Չե՞ն ձերբակալի:

Ինչո՞ւ որ:

Էս երկրում մարդիկ փող ասածը շատ են հարգում, իսկ ես լիքը փող ունեմ:

Չէ, երևի գիծ է, մտածեցի:

Բա էդքան փողը ձեզ որտեղի՞ց:

Օկլահոմայում մի քիչ հող ունեմ: Մի հիսուն հազար ակր:

Շա՞տ թանկ արժի:

Չէ, քսան ակրից բացի, մնացածը ոչինչ չարժի: Էս քսան ակր հողում նավթահորեր ունենք: Ես ու եղբայրու:

Բայց դուք օջիբվա եք, չէ՞ ո՞նց եք Օկլահոմա հասել: Գիտեի, թե օջիբվաները հյուսիսում՝ Մեծ լճերի մոտերքն են ապրում:

Ճիշտ գիտեիր: Մենք էլ ենք եղ կողմերից, բայց պապս վերաբնակ էր. մյուսների հետ արևմուտք է գաղթել:

Դե լավ, ուրեմն սատկած էշի համար ձեզ բան չեն անի:

Ինձ ոչ մի բանի համար էլ ոչ մի բան չեն անի: Ոչ թե որ շատ փող ունեմ, այլ որ կարծում են, թե գիծ եմ: Էս քաղաքում, քեզնից բացի, ոչ ոք չգիտի, որ փող ունեմ: Գիտե՞՞ մեքենա որտեղից առնենք:

Փաքարդի սրահը Բրոդվեյում է՝ գրադարանից երկու փողոց վերև:

Դե որ ասեցիր՝ ինձ համար կքշես, գնանք, առնենք: Վառ գույնի: Թե կարմիրն ունենան՝ կարմիր: Նախ ու՞ր կուզես գնալ:

Մենդոթա չգնա՞նք՝ ձուկ բռնելու:

Գնա՞նք: Կնայեմ, թե ոնց ես ձուկ բռնում: Կարթերը որտե՞ղ են ծախում:

Անկյան հետևը՝ Հոմանի խանութում:

Գնացինք Հոմանի խանութը, ու ինդկացին ինձ համար քսանյոթ դոլարի ձկնորսական պարագաներ գնեց: Հետո Բրոդվեյ գնացինք՝ փաքարդի սրահը: Կարմիր մեքենա չունեին, բայց փոխարենը սիրուն կանաչն ունեին: Բաց կանաչ էր՝ թարմ խոտի գույնի: 1922 թվականն էր: Մեքենան գեղեցիկ էր՝ սպորտային տեսակի:

Իրո՞ք կարծում ես, որ էս մեծ հսկա մեքենան կկարողանաս քշել:

Գիտեմ, որ կարողանամ:

Ուտիկանները մեզ սրահում բռնեցրին. ուզում էին սատկած էշին փողոցում թողնելու համար ինդկացուն

ձերբակալել: Սա մի քանի թուղթ ցույց տվեց, որից հետո ներողություն խնդրեցին՝ ասելով, թե կենդանուն արդեն տարել են, ու շատ են ցավում նեղություն տալու համար:

Ի՞նչ նեղություն, ասաց հնդկացին:

Ապա փաքարդի սրահի կառավարչին դարձավ՝ Զիմ Լուիսին, որը հենց քաղաքապետի ընտրություն լիներ, ամեն անգամ իր թեկնածությունն էր առաջադրում:

Մեքենան վերցնում եմ, ասաց:

Էս րոպեիս փաստաթղթերը կպատրաստեմ, պատասխանեց Զիմը:

Ի՞նչ փաստաթղթեր: Միանգամից վճարելու եմ:

Ուզում եք ասել, որ երեք հազար երկու հարյուր տասնյոթ դոլար վաթսունինգ սենթը կանխի՞կ եք վճարելու:

Հա: Կվճարեմ: Քշելու պատրաստ է, չէ՞:

Իհարկե: Տղաներին ասեմ՝ լաթով սրբեն, նստած փոշին մաքրեն: Ու շարժիչը ստուգեն, վառելիք լցնեն: Տասը րոպեից ավել չի տևի: Խնդրեմ, գրասենյակս գնանք, առուվաճառքն ավարտենք:

Զիմն ու հնդկացին Զիմի աշխատասենյակն անցան:

Երեք րոպե չեր անցել՝ Զիմը ինձ մոտեցավ, ու երևում էր, որ մինչև հոգու խորքը ցնցված է:

Արա՞մ, ասաց, Էս մարդն ո՞վ է: Կարծեցի՝ գիծ է: Չոնիին խնդրեցի, որ բանկ զանգի, ասեցին՝ Օկլահոմայից փոխանցում են անում: Ասեցին՝ հաշվին միլիոնից ավելի փող կա: Ես էլ կարծում էի՝ գիծ է: Շանաչու՞մ ես սրան:

Ասում է՝ Շոգեքարշ-38 է անունը, պատասխանեցի: Էղպիսի անուն կլինի՞:

Հնդկացու անուն է՝ թարգմանած, ասաց Զիմը: Իսկական անունը պայմանագրում կա: Բայց ճանաչու՞մ ես:

Ինչ էշին հեծած մեր քաղաք է եկել, ամեն օր խոսել ենք: Էշն էսօր սատկեց: Բայց չգիտեի, որ փող ունի:

Ասում է՝ մեքենան դու ես քշելու: Էդ մեծ հսկա մեքենան քշել կկարողանա՞ս, տղա՞ս:

Սպասեք, պարո՞ն Լուիս: Չլինի՞ ուզում եք կյանքիս էս մեծ հնարավորությունից գրկել: Ձեր մեծ փաքարդը քաղաքում ոչ մեկից պակաս չեմ քշի:

Ոչ մի բանից էլ չեմ ուզում գրկել: Ուղղակի չէի ուզի, որ էստեղից դուրս գաս, վեց-յոթ անմեղ մարդ տակը գցես ու հետև էլ մեքենան ջարդուիշուր անես: Նստիր դեկին՝ մի քանի խորհուրդ տամ: Փոխանցման տուփից ի՞նչ գիտես:

Դեռ ոչ մի բանից էլ ոչ մի բան չգիտեմ, բայց շուտով կիմանամ:

Շա՞տ լավ: Արի քեզ օգնե՞մ:

Ես մեքենան մտա ու նստեցի դեկին: Զիմը կողքիս նստեց:

Հիմա, տղա՞ս, ասաց, ուզում եմ, որ ինձ ամենանվիրված ընկերու համարես: Ուզում եմ ասել՝ շնորհակալ եմ, որ էս բարի հնդկացի պարոնին իմ սրահը բերեցիր:

Գիտե՞ք, գժվելու չափ միշտ փաքարդ քշել եմ ուզել: Հիմա ի՞նչ անեմ:

Արի տեսնենք:

Նա ոտքերիս նայեց:

Տեր Աստված, տղա՞ս, ոտքերու ոտնակներին չեն իասնում:

Ոչինչ, դուք փոխանցման տուփը բացատրեք:

Մինչ տղաները մեքենայի փոշին էին սրբում, շարժիչը ստուգում ու վառելիք լցնում, Զիմն ամեն ինչ բացատրեց: Երբ հնդկացին եկավ ու իմ հորդորով հետևի նստարանին նստեց, շարժիչն արդեն միացրել էի:

Ասում է՝ քշել գիտի, Զիմ Լուիսին ասաց հնդկացին: Բնագդով՝ ասածին հավատում եմ:

Արամի համար չմտահոգվեք, պատասխանեց Զիմը:  
Լավ էլ գիտի: Ճամփա տվեք, տղանե՞ր: Տարածքն ազա-  
տե՞ք:

Հսկա մեքենան դանդաղ շրջեցի, արագությունը  
փոխեցի ու ժամում հիսուն մղոն արագությամբ սրա-  
հից դուրս սլացա: Զիմ Լուիսը, հետևից ընկած, բղա-  
վում էր՝ կամաց, տղան, համբերիր, մինչև խճուղի  
հասնես: Քաղաքում քսանիինք մղոնից արագ քշել չի  
կարելի:

Հնդկացին միանգամայն հանգիստ էր, չնայած լավ  
էլ թափ էի տալիս:

Իհարկե դիտմամբ չէի անում: Ուղղակի մեքենա քշե-  
լու նրբությունները դեռ լավ չգիտեի:

Գերազանց վարորդ ես, Ուիլի, ասաց: Ճիշտ էի  
ասում: Իսկական ամերիկացի ես՝ սրա պես սարքերի  
հետ վարվելու բնազդ ունես:

Տասնիինք րոպեից Մենդոթա կիասնենք, ասացի: Ա՛  
թե ձուկ կրոնենք:

Հեռու՞ է:

Մի երեսուն մղոն:

Երեսուն մղոնը տասնիինք րոպեում անցնել չի լինի:  
Քեզ մի ժամ եմ տալիս: Սիրուն տեսարաններ են, թող  
կարգին տեսնեմ:

Ոնց ասեք, բայց չեմ համբերում, որ հասնենք, ու ձուկ  
բռնեմ:

Լավ, ասաց հնդկացին: Էս անգամ թող քո ուզածը  
լինի, բայց մյուս անգամ կուզեմ՝ մի քիչ դանդաղ  
քշես, որ կարենամ տեսարանները կարգին տեսնել:  
Թե չէ չեմ հասցնում: Իսկի նշանները չեմ հասցնում  
կարդալ:

Որ ուզեք՝ հիմա էլ դանդաղ կքշեմ:

Չէ: Թող սուրա: Թող ինչքան կարող է՝ արագ սուրա:

Մի խոսքով, կես ժամում Մենդոթա հասանք: Ավելի շուտ էլ կիասնեինք, եթե ճանապարհի մեծ կտորը խորդուրորդ չիներ:

Մեքենան ուղիղ գետի ափ քշեցի: Հնդկացին հարցրեց՝ մեքենայի ծածկն իջեցնելու ձևը գիտե՞՞մ: Ուզում էր ձուկ բռնելս բաց օդին նստած նայել: Չգիտեի, բայց կարողացա իջեցնել: Քսան րոպե տևեց:

Երեք ժամ ձկնորսություն արեցի, երկու անգամ գետն ընկա ու վերջը մի փոքրիկ ձուկ բռնեցի:

Զուկ բռնելուց բան չես հասկանում, ասաց հնդկացին:

Ի՞նչն եմ սխալ անում:

Ամեն ինչը: Առաջ ձուկ բռնած կա՞ս:

Չէ:

Էդաես էլ գիտեի:

Ի՞նչն եմ սխալ անում:

Առանձնապես ոչինչը, մենակ թե մեքենա քշելու պես արագ ես անում:

Սխա՞լ է:

Ոչ էնքան սխալ է, ինչքան չի թողնում, որ կարգին բան բռնես, հետն էլ անընդհատ գետն ես ընկնում:

Ե՞ս չեմ ընկնում: Քաշում են: Գիտե՞՞ք՝ ինչ ուժեղ են քաշում: Խոտն էլ ահավոր սոթիկ է: Ու բան չկա, թե բռնվեմ:

Մի պատիկ ձուկ էլ բռնեցի, հետո հարցրի, թե կուզի՞ տուն գնանք: Ասաց՝ կուզի, եթե ես էլ ուզեմ, և ես ձկնորսական պարագաներս հավաքեցի, ձկներս առա, մեքենան նստեցի ու նորից քաղաք քշեցի:

Էս մեծ փաքարդը Շոգեքարշ-38 անունով օջիբվա հնդկացու համար քշեցի, քանի Ֆրեզնոյում էր, այսինքն՝ ամբողջ ամառ: Էս ընթացքում ինքը հյուրանոցում էր ապրում: Փորձեցի համոզել, որ քշել

սովորի, բայց ասում էր, որ դրա մասին խոսք լինել չի կարող: Էղ ամառ փաքարդը Սան Խոակին հովտով մեկ ուր ասես քշեցի, մինչ հնդկացին, հետևի նստարանին բազմած, հասցնում էր ութ-ինը ծամոն ծամել: Ասում էր՝ քշեմ, ուր կուզեմ, ես էլ կամ ձկնորսության էի տանում, կամ որսի: Պնդում էր, որ ոչ ձուկ բռնելուց, ոչ որսից բան չեմ հասկանում, բայց ուրախ էր, որ փորձում եմ: Ես ամբողջ ընթացքում երբեք չծիծաղեց. մենակ մի անգամ: Երբ 12 տրամաչափի կոտորակով, որ սարսափելի հետհարված ուներ, նապաստակի նշան առա ու ագռավ սպանեցի: Անընդհատ փորձում էր ինձ հասկացնել, որ իմն էր է, որ նապաստակի վրա կրակեմ ու ագռավ սպանեմ: Ամերիկացի ես, ասում էր: Տես, թե ես մեծ մեքենայից ո՞նց ես գլուխ հանում:

Մի օր, նոյեմբերն էր, եղբայրը եկավ: Մյուս օրը, երբ հյուրանոց գնացի, ասացին, որ եղբոր հետ Օկլահոմա է վերադարձել:

Բա փաքա՞րդը:

Հետները տարան, ասաց հյուրանոցի սպասավորը:

Ո՞վ էր քշում:

Հնդկացին:

Երկուսն էլ հնդկացի են: Մեքենան ո՞ր մեկն էր քշում:

Մեզ մոտ ապրողը:

Չե՞ք սիալվում:

Ի՞նչ ասեմ: Տեսա, որ դեկին նստեց, ու գնացին: Եղբան բան:

Ուզում եք ասել, որ գիտեր, թե արագությունը ո՞նց փոխի:

Երևում էր՝ գիտի, ասաց սպասավորը: Իսկական հմուտ վարորդ էր երևում:

Շնորհակալ եմ:

Տուն էի գնում ու մտածում. ուղղակի ուզել էր, որ կարծեի, թե քշել չգիտի: Որ ես քշեմ ու հաճույք ստանամ: Ուղղակի մի երիտասարդ, ձանձրույթից, թե ինչից, քաղաք էր եկել ու առիթն օգտագործել, որ իր պես մահու չափ ձանձրացող տեղացի մի տղա իրեն զբաղեցնի:

Սա գլխումս ծագած հարցերի միակ խելքին մոտ պատասխանն էր: Եթե գիծ լինելու տարածված տեսությունը բացառենք:

## **ԱՇԽԱՐՀ ՏԵՍԱԾ ՄԱՐԴՈՒ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ ՃԱՄՓՈՐԴՈՒ ԱՄԵՐԻԿԱՑՈՒՆ**

Մի տարի Մելիք հորեղբայրս պետք է ֆրեզնոյից Նյու Յորք ճամփորդեր: Ճամփա գնալուց առաջ նրա հորեղբայրը՝ Կարոն, այցելության եկավ, որ ճամփորդության վտանգների մասին զգուշացնի:

Երբ գնացք նստես, ասաց ծեր մարդը, մի լավ տեղ ընտրիր, նստիր ու շուրջդ չնայես:

Լավ, սը՞ր, պատասխանեց հորեղբայրս:

Գնացքը շարժվելուց րոպեներ հետո, ասաց ծեր մարդը, համազգեստ հազած երկու մարդ կմոտենան ու կխնդրեն, որ տոմսդ ցույց տաս: Բանի տեղ չդնես: Խարդախներ են:

Ո՞նց իմանամ:

Կիմանաս: Երեխա չես:

Լավ, հորեղբայր:

Հազիվ քսան մղոն անցած՝ մի բարեհամբույր երիտասարդ կմոտենա ու ծխախոտ կառաջարկի: Կասես, որ չես ծխում: Ծխախոտին թմրիր է խառնել:

Լավ, հորեղբայր:

Ճաշարան գնալիս մի գեղեցիկ ջահել կին դիտմամբ քեզ կդիաչի ու համարյա գիրկոդ կընկնի: Վախ-վուխ կանի, հազար ներողություն կխնդրի, ու սիրտդ կասի, որ հետն ընկերանաս: Սիրտդ մի կողմ կթողնես ու ճաշիդ կգնաս: Էդ կինն արկածախնդիր է:

Ի՞նչ է, չհասկացավ հորեղբայրս:

Պոռնի՞կ, բղավեց ծեր մարդը: Շաշի՞դ կգնաս: Ամենալավ կերակուրը կպատվիրես, ու եթե ճաշարանը լիքը լինի, սիրուն ջահել կինն էլ գա՝ սեղանիդ նստի, աչքերին չնայե՞ս: Որ խոսեց՝ ձև կանես, թե խոլ ես:

Լավ, հորեղբայր:

Ձև կանես, թե խոլ ես, ասաց ծեր մարդը: Գլուխու ազատելու ուրիշ ձև չկա՞:

Ինչի՞ց ազատելու:

Եղ անսամոթ պատմությունից: Շամփորդե՛լ եմ, գիտեմ՝ ինչ եմ ասում:

Լավ, հորեղբայր:

Ե՛լ չխոսե՞նք:

Լավ, հորեղբայր:

Էլ էս բաներից չենք խոսի: Պրծավ, գնաց: Յոթ զավակ ունեմ: Լեցուն ու արդար կյանք եմ ապրել: Է՛լ մտքից հանիր: Հող ունեմ, խաղողի այգի ունեմ, ծառեր, անասուններ, փող ունեմ: Մարդ ամեն ինչ չի ունենա. թե պատահի էլ հազվադեպ, ու երկար չի տևի:

Լավ, հորեղբայր:

Ճաշարանից հետ գալիս ծխարանով ես անցնելու: Թղթախաղի նստած մարդկանց կտեսնես՝ միջին տարիքի երեք տղամարդ, մատուերին՝ թանկ մատանի: Սիրալիր գլխով կանեն, ու մեկը կառաջարկի, որ խաղին միանաս: Կասես՝ անգլերեն չխոսե՛լ:

Լավ, հորեղբայր:

Էսքան բան:

Ծնորհակալ եմ, ասաց հորեղբայրս:

Հա՛, մի բան էլ, իիշեց ծեր մարդը: Գիշերը որ քնելու լինես, փողդ գրպանից կհանես, կոշիկդ կդնես: Կոշիկդ բարձի տակ կդնես, գլուխդ՝ վրան: Ու դես, հա՛, չքնե՞ս:

Լավ, հորեղբայր:

Հիմա՝ վե՛րօ:

Ծեր մարդը գնաց, իսկ մյուս օրը Մելիք հորեղբայրս գնացք նստեց, որ Ամերիկայի մյուս ծայրը՝ Նյու Յորք հասնի: Համազգեստով երկու մարդիկ ոչ մի խարդախ էլ չէին եղել: Թմրիր խառնած ծխախոտով ոչ մի երիտասարդ չէր հայտնվել: Ճաշարանում ոչ մի սիրուն կին հետը սեղան չէր նստել: Իսկ ծխարանում ոչ ոք թուղթ չէր խաղում: Հորեղբայրս փողը կոշիկը դրել, կոշիկը բարձի տակ դրել, գլուխը բարձին դրել ու ամբողջ առաջին գիշերն աչք չէր կացրել: Երկրորդ գիշերը որոշել էր ձեռ քաշել:

Երկրորդ օրն ինքն էր մի երիտասարդի ծխախոտ հյուրասիրել, ու սա վերցրել էր: Ճաշարանում ամեն ինչ արել էր, որ մի սիրուն կնոց հետ սեղան նստի: Ծխարանում ինքն էր առաջարկել թուղթ խաղալ, և դեռ Նյու Յորքին չմոտեցած՝ գնացքում բոլորին ճանաչում էր: Բոլորն էլ նրան էին ճանաչում: Օհայոյով անցնելիս հորեղբայրս, ծխախոտ վերցրած երիտասարդն ու Վասար ուղևորվող երկու օշիկել աղջիկներ քառյակ էին կազմել ու սկսել սիրված երգեր երգել:

Շա'ն հաճելի ճամփորդություն էր:

Երբ Մելիք հորեղբայրս Նյու Յորքից տուն եկավ, մեծ հորեղբայր Կարոն էլի այցելեց:

Տեսքդ լավ է, ասաց: Խորհուրդներիս ականց դրեցի՞ր:

Հա, սը՛ր, ասաց հորեղբայրս:

Ծեր մարդը հայացքը հեռուն հառեց:

Ուրախ եմ, որ փորձս գոնե մեկին պետք եկավ, ասաց:

## ԽԵՂՁՈՒԿՐԱԿ ԱՐԱԲԸ

Խոսրով քեռիս, ինքը՝ վայրագ ու կսկիծը սրտում, մի տարի մի փոքրամարմին գաղթականի հետ էր ընկերացել, տեսքից՝ քարի պես կարծր, որ հոգու թախիծն անտեսանելի փոշու հատիկը վրայից թափ տալով կարտահայտեր ու երբեք չէր խոսի:

Էս մարդը Խալիլ անունով մի արաք էր: Ութ տարեկան տղայի հասակ ուներ ու Խոսրով քեռուս պես թավ բեղ: Երևի վաթսունն անց կլիներ: Չնայած բեղին, կկարծեիր, թե ներքուստ ավելի շուտ փոքրիկ տղա է, քան հասուն տղամարդ: Աչքերը երեխայի աչքեր էին, բայց ոնց որ տարիների հիշողությամբ լեցուն, երկար տարիների բաժանումով էն ամենից, ինչ հոգով-սրտով սիրել էր, ասենք՝ հայրենի երկրից, հորից, մորից, եղբորից, հավատարիմ ձիուց կամ նման բաներից: Զահելի պես սև, փափուկ ու խիտ մազեր ուներ՝ ձախ սանրած, ինչպես հին աշխարհից Ամերիկա գաղթած բոլոր ծնողներն էին տղաներին սովորեցնում սանրել: Բեղը չլիներ՝ գլուխն ավելի շուտ դպրոցականի գլուխ էր. մարմինը՝ նոյնպես, թեաբետ լայնաթիկունք էր: Անգլերեն չգիտեր, միայն մի քիչ թուրքերեն, մի քիչ քրդերեն ու հազիվ մի քանի բառ հայերեն, բայց, էսպես թե էնպես, համարյա չէր խոսում: Որ խոսեր էլ, կթվար, թե ձայնը ոչ էնքան իր միջից է գալիս, որքան հեռու թողած հայրենիքից: Խոսելիս կթվար, թե ափսոսում է, որ ստիպված է խոսել, կարծես ողորմելի բան համարեր անարտահայտելին

խոսքով արտահայտել փորձելը: Կարծես խոսքերը ներսի մորմոքն ընդամենը պիտի սաստկացնեին:

Եղան էլ ոչ մեկս չհասկացավ, թե ո՞նց էր Խոսրով քեռուս հարգանքին արժանացել՝ մի մարդու, որ ուրիշ բան չէ՝ գոնե միշտ ինչ-որ ասելիք ուներ: Շարունակ խոսող մարդը, էլ չասած՝ բոլորովին չխոսողը, շատ բան չի ասում, եթե չհաշվենք Խոսրով քեռուս պես հայ-հոյելն ու պահանջելը, որ խոսողը ձայնը կտրի: Քեռիս արաբին երևի «Արաք» սրճարանում էր հանդիպել:

Նա ընկերներին էլ, թշնամիներին էլ ըստ թավլի կամ ինչպես ուրիշներն են ասում, նարդի խաղալու ձևի էր ընտրում: Սովորաբար ամեն խաղ նեղն ընկած մարդու վարքի քննություն է: Խոսրով քեռիս, որ երևի ինքն աշխարհի ամենաըմբռստ պարտվողն էր, արհամարհում էր պարտության հետ հաշտվել չկարողացողներին:

Ի՞նչ ես դարդ անում, կգոռար էսպիսի մարդու վրա: Եղածը խաղ չի՞: Հո կյանքդ էլ տանով չե՞ս տվել:

Ինքն անձամբ խաղի հետ կյանքը տանով տվողներից էր, բայց չէր հասկանում, որ ուրիշ մեկը խաղն էդքան սրտին մոտ ընդուներ: Իրեն հարցնեիր՝ մյուս բոլորի համար խաղը խաղ էր, կ ի՞նչ: Բայց որ բանն իրեն հասներ, խաղը կդառնար առջևը՝ սեղանին փոված կյանքի ու մահու հարց, դիմացինը՝ զառը թափ տվող ու հետը թուրքերն խոսող, հորորորող, շշնչացող, գոռացող ու այլնայլ ձևերով ինքն իրեն խայտառակ անող չնչին մեկը:

Մինչեռ Խոսրով քեռիս զառն արհամարհողներից էր, իր անձնական թշնամին համարողներից ու երբեք զառի հետ չէր խոսի: Պատուիանից դուրս կամ սենյակի ծայրը կշպրտեր ու տախտակը գետնով կտար:

Շա՞ն որդիներ, կգոռար:

Հետո, մատը հակառակորդի կողմը տնկած, կգոռար. դու՛, իմ երկրացի՞ն, գետինը չե՞ս մտնում: Զարի առջև ստորանուն ես: Առջևն աղոյթք ես ասում: Ամոթքեզ: Թքե՛լ եմ քեզ պես շանորդիների վրա:

Բնական է, որ Խոսրով քեռուս հետ երկրորդ անգամ ոչ ոք թավլի չէր խաղում:

Արաքս սրճարանը ժամանակին նշանակալից տեղ էր ու մեծ համբավ ուներ: Հիմա էլ, չնայած քսան տարի առաջվա այցելուներից շատերն է՛լ չկան:

Այցելուները հիմնականում հայեր էին, բայց ուրիշներն էլ էին գալիս: Հին երկիրը կարոտած մարդիկ: Հին երկիրը սիրողները: Հին երկրուս թավլի ու թղթախաղ՝ սքամքիլ խաղացածները: Հին երկրի կերակուրների, գինու, արադի ու կեսօրից հետո մատնոցի չափ գավաթներով սուրճի սիրահարները: Երգերն ու պատմությունները կարոտած մարդիկ: Բոլորը, որ տնից բյուր մղոն հեռու՝ ծանոթ բոյրերին էին կարոտ:

Խոսրով քեռիս սովորաբար երեքի կողմն էր գալիս: Մի պահ կանգնում, նստածներին էր նայում, հետո գնում, անկյունում մենակ նստում էր: Էսպես, առանց շարժվելու, մի ժամ կնստեր, ու թեև ոչ ոք նրան ոչ մի բառ չէր ասել, բարկացած կիեռանար:

Խեղճուկրակնե՛ր, կասեր: Խե՛նճ որբուկներ: Կամ բառացի՝ խե՛նճ մորմոքված, որբացած սրտեր:

Խեղճուկրակը ո՞նց թարգմանես: Բայց կյանքում ու աշխարհում խեղճից ու կրակն ընկածից տիսուր բան չկա:

Ամենայն հավանականությամբ Խոսրով քեռիս մի օր «Արաքս» սրճարանում նստած էլ նկատել էր էս փոքրամարմին արաբին ու հասկացել, որ արժանավոր մարդ է: Երևի արաբը, նստած, թավլի խաղալիս էր եղել ուսերը կախ՝ սեղանին կռացած, տղայի գլուխը խոժոռ՝

ըմբռնումով ու ափսոսանքով լեցուն, հետո երևի վեր էր կացել, ու Խոսրով քեռիս տղայի փոքր մարմինն էր տեսել:

Կամ երևի արաբը սրճարան էր եկել ու հորեղբորս ծանոթ չլինելով՝ հետը թավի էր խաղացել, պարզվել էր, բայց չէր բողոքել: Կամ ո՞վ իմանա, առանց ասելու հասկացել էր, թե Խոսրով քեռիս ինչ մարդ է: Կամ էլ արաբը զարին աղոթք ասողներից չէր եղել:

Ինչ որ է, ինչ բերումով էլ որ ընկերացած լինեին, ինչ էլ լիներ նրանց հոգեհարազատության պատճառը, ինչ ընդհանրություն էլ ունենային, համենայն դեպս մեկմեկ մեր տանը հանդիպում էին ու միշտ սպասված հյուր էին:

\*\*\*

Երբ Խոսրով քեռիս արաբին մեր տուն բերեց, նեղություն չքաշեց, որ մեզ ներկայացնի: Մայրս որոշեց, որ մեր հայրենակիցը կլինի, ո՞վ իմանա՝ հեռավոր ազգականներից, չնայած մեր ցեղից սերող մյուսների համեմատ ավելի թուի ու փորձամարմին էր: Սա, իհարկե, դեր չուներ. մարդկանց համուհոտն էր՝ տարատեսակությունը, մի հատկանիշ, որ մարդուն մարդ է դարձնում ու գոյատևելու արժանի:

Էս առաջին օրը մայրս մի քանի անգամ խնդրեց, որ չքաշվի, իրեն տանը զգա, ու նոր սրանից հետո արաբը նստեց:

Խու՞լ է, ի՞նչ է, մտածեց մայրս:

Չէ, պարզ էր, որ խուլ չի. շատ կլանված էր լսում:

Երևի մեր բարբառը չգիտեր: Մայրս հարցրեց, թե որ քաղաքից է: Չպատասխանեց, միայն բաճկոնի թևքից փոշին թափ տվեց ու վերջ: Հետո մայրս թուրքերեն հարցրեց՝ հա՞յ եք: Էս մեկը հասկացավ: Թուրքերեն պատասխանեց, որ արաք է:

Խեղճուկրակ որբուկ է, կամացուկ ասաց Խոսրով քեռիս:

Մորս մի պահ թվաց, թե արարը խոսել կուզի, բայց շուտով պարզ դարձավ, որ Խոսրով քեռուս պես ոչչից էնքան չէր նեղվում, որքան խոսելուց: Կարող էր, եթե պետք լիներ, բայց ճիշտն ասած, ուղղակի ասելիք չկար:

Մայրս տղամարդկանց ծխախոտ ու սուրճ հրամցրեց ու ինձ նշան արեց, որ թողնեմ գնամ:

Խոսել կուզեն, ասաց:

Խոսե՞լ, հարցրի:

Կուզեն մենակ մնալ:

Ճաշասենյակի սեղանին նստեցի ու սկսեցի անցյալ տարվա լրագիրը թերթել, որն անգիր էի արել, մանավանդ նկարները. դոնդողը՝ շա՛տ տպավորիչ, մեքենաները՝ շուրջը պերճաշուք մարդիկ, մութը ցրող լապտերներ, ախորժելի բացված սեղաններ, զուգված երիտասարդներ ու սրանց նման այլայլ պատկերներ:

Երևի լրագիրն աղմուկով էի թերթել:

Կամաց, այ տղա, բղավեց Խոսրով քեռիս:

Շրջվեցի ու արարի՝ ծնկից փոշին թափ տալը տեսա:

Երկուսով մի ժամի չափ հյուրասենյակում նստեցին, հետո արարը խոր հոգոց հանեց ու հեռացավ:

Ես հյուրասենյակ գնացի ու նրա տեղը նստեցի:

Անունն ի՞նչ է, հարցրի:

Կամաց, ասաց Խոսրով քեռիս:

Լավ, անունն ի՞նչ է, նորից հարցրի:

Խոսրով քեռիս էնքան բարկացած էր, որ չգիտեր՝ ինչ աներ: Մորս անունը բղավեց, կարծես մեկը մեզ մորթել էր ուզում:

Մարիամ, գոռաց: Մարիամ:

Մայրս իսկույն հյուրասենյակ եկավ:

Ի՞նչ, հարցրեց:

Սրան դուրս տար, ի՞նչ կլինի, ասաց Խոսրով քեռիս:  
Ինչո՞ւ, ի՞նչ է եղել:

Արարի անունն է ուզում իմանալ:

Լավ, ի՞նչ կա որ: Երեխա է: Հետաքրքրվում է: Ասա:

Պարզ է, տնքաց Խոսրով քեռիս: Դու' էլ: Հարազատ  
քոյրս: Հարազատ խեղճուկրակ քոյրս:

Վերջը արարի անունն ի՞նչ էր:

Չե՛մ ասելու: Հերիք է: Չե՛մ ասելու:

Նա վեր կացավ ու տնից գնաց:

Էդ մարդու անունն ինքն էլ չգիտի, բացատրեց մայրս:  
Ի՞նչ ես զուր տեղը բարկացնում:

Երեք օրից, որ Խոսրով քեռիս ու արաբը մեր տուն  
եկան, ես հյուրասենյակում էի:

Խոսրով քեռիս հենց միանգամից ինձ մոտեցավ ու  
ասաց՝ Խալիլ է անունը: Դե դու՛րս գնա:

Ես դուրս եկա ու բակում սկսեցի սպասել, որ զար-  
միկներից մեկնումեկը մեր տուն գա: Տասը րոպե  
սպասեցի, ոչ ոք չեկավ, ես էլ զարմիկ Մուրադենց տուն  
գնացի ու մի ժամ մնացի: Վիճում էինք, թե հինգ տարուց  
մեզնից ով ավելի ուժեղ կլինի: Երեք անգամ կռվեցինք,  
երեք անգամ էլ պարտվեցի, չնայած մի անգամ քիչ էր  
մնում հաղթեի:

Որ տուն հասա, տղամարդիկ արդեն գնացել էին:  
Հետնաբակից ուղիղ հյուրասենյակ վագեցի, բայց  
էստեղ չեին: Սենյակում մենակ նրանց ու իրենց քաշած  
ծխախոտի հոտն էր մնացել:

Ինչի՞ց էին խոսում, հարցրի մայրիկիս:

Չեմ լսել:

Բայց խոսում էին, չ՞:

Չգիտեմ: Բան չեին ասում:

Մարդ կա, թե ասելիք ունի՝ խոսքով է ասում, ասաց  
մայրիկս, մարդ էլ կա՝ խոսքով չի ասում:

թագավորություն 5 1915. հունվար

Բայց առանց ասելու խոսել կլինի՞:

Կլինի: Միշտ էլ առանց խոսքի խոսում ենք:

Էղ դեպքում բառերից ի՞նչ օգուտ:

Մեծ մասամբ՝ ոչ մի: Մեծ մասամբ օգուտն էն է, որ կարենաս իրական ասելիքդ կամ մտքիդ գաղտնիքը չաել:

Իրենք էլ են խոսում:

Կասեի՝ հա՛: Նստում, սուրճ են խմում ու ծխում: Բերանները չեն բացում, բայց շարունակ խոսում են: Իրարևակ են հասկանում. բերան բացելու կարիք չունեն: Իրարից գաղտնիք չունեն:

Բայց հաստա՞տ գիտեն՝ ինչ են ասում:

Հաստա՞տ:

Ի՞նչ, հարցրի:

Քեզ ո՞նց պատմեմ, ասաց մայրս, եթե բառեր չեն ասել: Բայց իրենք գիտեն:

\*\*\*

Խոսրով քեռիս ու արաբն ամբողջ տարի մերթ-մերթ մեր տուն էին գալիս ու հյուրասենյակում նստում: Մեկ-մեկ՝ մի ժամ, մեկ-մեկ՝ երկու:

Անգամներից մեկը Խոսրով քեռիս հանկարծ բղավեց՝ քեզ ասում եմ՝ բանի փեղ մի՛ դիր, թեն արաբը ոչ մի բան չէր ասել:

Բայց մեծ մասամբ ոչ մի խոսք չէին ասում, մինչև հեռանալու պահը գար: Են ժամանակ Խոսրով քեռիս կամացուկ կասեր՝ խեղճուկրա՛կ որբուկներ, իսկ արաբը ծնկից անտեսանելի փոշու հատիկը թափ կտար:

Մի օր էլ, երբ Խոսրով քեռիս մեր տուն մենակ եկավ, հասկացա, որ կլիներ մի քանի ամիս՝ արաբը մեզ հյուր չէր եկել:

Արաբն ու՞ր է, ասի:

Ի՞նչ արաբ, հարցրեց Խոսրով քեռիս:

Խեղճուկրակ փոքրամարմին արաբը, որ քեզ հետ  
մեր տուն էր գալիս: Ու՞ր է:

Մարիամ, գոռաց Խոսրով քեռիս: Սարսափած կանգ-  
նած էր:

Վայ-վայ, մտածեցի: Հիմա՝ ինչ եմ արել:

Մարիամ, Մարիամ:

Մայրս հյուրասենյակ եկավ:

Ի՞նչ պատահեց, ասաց:

Խնդրում եմ, ասաց Խոսրով քեռիս: Տղա՛դ է: Դու էլ  
փոքր քոյրս ես: Ի՞նչ կլինի, ասա, թող գնա: Հոգով-  
սրտով սիրում եմ դրան: Ամերիկացի՝ է, էստեղ է ծնվել:  
Կասկած չունեմ՝ մի օր անոն կհանի: Բայց ի՞նչ կլինի,  
ասա՝ թող գնա:

Ինչո՞ւ, ի՞նչ պատահեց:

Ինչ պարահե՞ց: Խոսուն է, հարցե՛ր է տալիս: Ես  
սիրում եմ էս տղային:

Արամ, ասաց մայրս:

Ես էլ էի մնացել կանգնած, ու թե Խոսրով քեռիս  
բարկացած էր վրաս, ես է՛լ ավելի բարկացած էի:

Արաբն ու՞ր է, գոռացի:

Խոսրով քեռիս, հուսահատ, ձեռքն իմ կողմն արեց,  
որ մայրս տեսնի: Ըհը՛, կարծես ուզեր ասել, տղա՛դ, իմ  
քրոջորդին: Իմ միսն ու արյունը: Տեսար, չէ՞՛: Բոլորս  
խեղճուկրակ որբուկներ ենք, իրենից բացի:

Արամ, ասաց մայրս:

Բա ի՞նչ անեմ, որ առանց խոսքի խոսք չեմ հասկա-  
նում: Արաբն ու՞ր է:

Խոսրով քեռիս առանց մի բառ ասելու թողեց գնաց:

Մահացել է, ասաց մայրս:

Քեզ ե՞րբ է ասել:

Չի ասել:

Բա ո՞նց իմացար:

Չգիտեմ: Մենակ գիտեմ, որ մահացել է:

Խոսրով քեռիս Երկար ժամանակ մեր տուն չեր գալիս: Մտքովս անցավ, որ Երևի էլ երբեք չգա: Հետո մի օր եկավ: Գլխարկը գլխին՝ հյուրասենյակում կանգնեց ու ասաց՝ արարը մահացավ: Օտար Երկրում որբացած մեռավ՝ հայրենիքից վեց հազար մղոն հեռու: Ուզում էր տուն գնալ, նոր մեռնել: Ուզում էր տղաներին տեսնել: Ուզում էր էլի հետները խոսել: Ուզում էր նրանց հոտն առնել: Շունչը զգալ: Փո՞ղ չուներ: Մենակ նրանց մասին էր մտածում: Հիմա թող, գնա: Սիրում եմ քեզ:

Ես դեռ հարցեր էի ուզում տալ, մանավանդ արաբի տղաների մասին. քանի՞ն էին, ինչքա՞ն ժամանակ նրանց չեր տեսել ու նման բաներ, բայց հետո որոշեցի, որ ավելի լավ է Մուրադ զարմիկիս մոտ գնամ, տեսնեմ, թե էս անգամ կկարենա՞մ մեջքը գետնով տալ: Ու առանց մի խոսք ասելու թողեցի գնացի, ինչը հավանաբար խոսրով քեռուս սրտով էր: Երևի մտածեց, որ էնքան էլ անհույս չեմ:

## ԽՈՍՔ ԹԵՐԱՎԱՎԱՏՆԵՐԻՆ

Ռինոյից ավտոբուսով կամ անապատը կտրող որևէ այլ միջոցով Սոլյա Լեյք Սիթի գնալիս, չոր տապից բացի, ուրիշ բան չես տեսնի, մանավանդ օգոստոս ամսին։ Անապատը չորս կողմը տարածված ավագ է, տեսակ-տեսակ կակտումներ ու արև։ Ավազը մեկ-մեկ սպիտակ է, մեկ-մեկ գորշ, իսկ մայրամուտից առաջ գույնը սպիտակից կամ գորշից դեղնավոն է դառնում, հետո սևանում։ Հետո էլ գիշեր է գալիս. գիշերն անապատը ամենից լավն է։ Երբ անապատն ու գիշերը մեկ են դառնում, վերածվում են լոռվթյան։

Սա հիշողությանդ մեջ կմնա:

Հիշողության, որ աշխարհի անշշուկ խորհուրդներով է լեցուն։

Էս բոլորը գիտեմ, որովհետև մի անգամ՝ Նյու Յորքի ճանապարհին, ավտոբուսով Ռինոյից Սոլյա Լեյք Սիթի եմ գնացել։

Գիքո հորեղբայրս ասել էր, որ Նյու Յորք գնամ։ Ասել էր՝ էս փոքր քաղաքում մի՛ մնա։ Նյու Յորք գնա։ Քեզ բան եմ ասում, Արա՛մ, էստեղ մնալը խենթություն է, այո՛ու։

Էս էր պատճառը, որ Ռինոյից ավտոբուսով Սոլյա Լեյք Սիթի գնացի։

Միա նման տեղ երբևէ ոչ տեսած, ոչ նոյնիսկ պատկերացրած կայի։ Անծայր ու չոր, ոչնչով լեցուն ամայություն էր։ Օր ու գիշեր աչքերս բաց նայում էի։ Չէի ուզում

Էսպիսի տեղանքով անցնել առանց հնարավոր ամեն ինչ պարզելու:

Ավտոբուսը Ռինոյից կեսգիշերը մի փոքր անց էր մեկնել: Ռինոն Ամերիկայի էն քաղաքներից է, որ մարդկանց ախտերից է սնվում: Միակ ապրուստը դրամախաղն ու պոռնկությունն են:

Բնականաբար պայծառ լուսավորություն ունի:

Հիշում եմ, մի խաղատուն մտա ու շեմից սրահի հեռու ծայրում փոքերի սեղանին թուղթ բաժանողի քթից տնկված երեք սև մազը պարզ տեսա: Էդքան լուսավոր էր:

Հետո ավտոբուսը Ռինոյից մեկնեց ու անապատ գլորվեց: Ահոելի, սար ու ձորի տարբերություն էր՝ մեկ Ռինոյի վառ լուսերն ու խաղատները, մեկ անապատի մութ գիշերը: Սինչև առավոտ էս վառ լուսերն ու անապատն էի համեմատում ու էդպես էլ չկարողացա տպավորությունս նկարագրող գոնե երեք բառից կազմված մի կարճ նախադասություն գտնել:

Առավոտյան մենակ հորանջելս էր գալիս: Երբ ավտոբուսը կանգնեց, դուրս եկա ու մի լավ շուրջն այեցի: Ի՞նչ ասեմ, միայն հոդ ու երկինք էր, մեկ էլ ծագող արևը: Երեք բառ էլ չգտա, թե տեսածս նկարագրեմ: Ոչինչ էր: Հենց ոչինչ: Ոչ մի բան: Ոչ փողոց, ոչ տներ, ոչ անկյուններ, ոչ բակեր, ոչ դռներ, ոչ լուսամուտներ, ոչ նշաններ, ոչի՞նչ:

Գիքոն հորեղբայրս ասել էր, որ հանկարծ մեր քաղաքի պես փոքր քաղաքում չմնամ, ու հիմա հազիվ էի համբերում, թե երբ ենք անապատից դուրս գալու, որ մեծ քաղաք հասնենք, ու գլուխս էլի սկսի աշխատել: Մտքովս անցավ, թե Գիքոն հորեղբորս չէր խանգարի, որ ինքն էլ մեր փոքրիկ քաղաքից գա ու անապատով անցնի: Մտածեցի, որ եթե օր ու գիշեր անապատում՝

չարագույժ լրության մեջ անցկացնի, Էլ ամեն ինչին էդքան հեշտ չի հավատա: Հորեղբայրս ինձ պես շատ ու խելացի գրքեր չեր կարդացել, քանի որ ավելի դանդաղ ու դժվար էր կարդում: Բայց ինչ կարդացել էր՝ ուշադիր էր կարդացել ու հատորներով անգիր էր արել Եվրոպայում սրանից մինչև երկու հարյուր տարի առաջ ապրած գրողների երկերը: Իր կոտրած անգլերենին ազատություն տալով, սիրում էր հայոցել մեկ էլ կսկեր մարդկանց «ոչխար» ասել ու պնդել, որ այ, ինքը ոչխար չի: Ես հորեղբորիցս պակաս խելք չունեի, թեև կոտրած անգլերեն չէի խոսում: Գիքո հորեղբայրս ասել էր՝ Ես քաղաքը թող, Եյու Յորք գնա:

Հիմա մտածում էի, որ Գիքո հորեղբորս չեր խանգարի էս անապատը գալ, որ տեսնի, թե ինքն ինչ կզգա: Մտածում էի, որ Էսպիսի դատարկության մեջ մտածելս էլ չի գալիս: Ինձ հե՛չ խելքը չէի զգում: Հետո էլ միայնակ էի զգում: Դրա համար էլ, չնայած քաղաքավարի գրուցի փորձ չունեի, փորձեցի ավտորուսի միակ օրիորդ ուղևորի հետ գրուցի բռնվել:

Էս տեղն անուն ունի՞, հարցրի օրիորդին:

Ամենաքիչը երեսունհինգն անց էր ու շատ տգեղ:

Ո՞ր տեղը:

Էս ամբողջ տարածությունը:

Չգիտեմ, ասաց օրիորդը:

Մեր գրուցը սրանից էն կողմ չանցավ, գոնե մինչև հաջորդ կեսօր, երբ օրիորդը հարցրեց, թե Ժամը քանիսն է, ես էլ պատասխանեցի, որ չգիտեմ:

Իսկի շաբաթվա օրը չգիտեի: Կամաց-կամաց սկսում էի պարզել, որ մենակ էն գիտեի, որ ոչինչ չգիտեմ, ու միակ ուզածն էն էր, որ ինարավորինս շուտ Սոլյա Լեյք Սիթի հասնեմ ու նորից սկսեմ փողոցներ ու տարբեր տեղեր ու գնացող-եկող մարդկանց

տեսնելու, մեկ էլ տեսար, գրքերից սովորածս ահոելի պաշարը, որ էս անապատում բանի պետք չէր, նորից հետ գա:

Ի՞նչ կլինի, մենակ թե նորից քաղաք հասնեմ, մտածում էի, ու նորից մյուսների պես խելքս տեղը գա: Կամ մյուսներից շատ: Մենակ թե էս ամայությունից դուրս արձնեմ. կտեսնեք, թե աջ ու ձախ ի՞նչ սրամիտ մտքեր կակսեմ շաղ տալ:

Պարզվեց՝ սխալվում էի: Սոլյա Լեյք Սիթի հասնելով՝ ինձ է՛լ ավելի կորցրի: Ոչ մի կերպ հիսուն սենթով վարձու սենյակ չգտա, ոչ էլ ռեստորան, որ տասնհինգ սենթով կարգին կերակրեր: Հալից ընկել էի, քաղցած էի, քունս տանում էր, փողոցի մարդիկ ու շենքերը ջղերիս ազդում էին, ու երանի էի տալիս, թե տանը մնացած լինեի:

Մի հին հյուրանոցում մի դոլարով փոքրիկ սենյակ վարձեցի: Պարզվեց, որ սենյակում ուրվականներ կային: Ամենասարսափելի սենյակն էր, ուր երբեք փորձել էի ապրել, բայց են օրերին շատ համառ էի ու մնացի, մինչև աշխարհի ստեղծումից ի վեր գոյություն ունեցող բոլոր չարքերը սկսեցին աչքիս երևալ, ու ականջիս գիտնականների պնդումով երբեք գոյություն չունեցած ամեն տեսակի զարհուրելի ձայններ լսվեցին: Վախից փայտացել էի: Երկու ժամ սենյակի կենտրոնի ճոճաթոռից չշարժվեցի, որովհետև համոզված էի, որ մի բան ինձ կճանկի ու նախքան դռնից կամ պատուհանից ճողովրել հասցնելը կխեղի: Մենյակը չարքերով էր լցված: Ինքս էլ չգիտեմ, թե ոնց ողջ մնացի, բայց մնացի:

Սոլյա Լեյք Սիթիի փողոցներով քայլեցի ու մի ռեստորան գտա, ուր քառորդ դոլարով կարելի էր համբուրգեր գնել:

Ուտելուց հետո նոյն փոքրիկ հյուրանոցի նոյն փոքրիկ սենյակը գնացի ու առանց հանվելու, առանց անգամ կոշիկներս ու գլխարկս հանելու անկողին մտա: Ուզում էի խժդության, հրդեհի, երկրաշարժի, հեղեղի, ժանտախտի կամ այլ արհավիրքի դեպքում ճողովրելու պատրաստ լինել: Լոյսը հանգցնելուց առաջ մահճակալից վեր թռչելու ու դրանը հասնելու մի քանի փորձ արեցի: Սովորեցի մի ցատկով դրանը հասնել:

Առավոտ հինգին արթնացա, որ ինն անց կեսին քաղաքից մեկնող ավտոբուսը բաց չթողնեմ:

Ինն անց տասնինգին ավտոբուսի կայանի առաջ կանգնած՝ հինգ սենթանոց սիգար էի ծխում ու փորձում ջահել անհավատիս նախկին կեցվածքը հետ թերել, որ նորից ինձ երջանիկ զգամ: Մեկ էլ բանվրական վերնահագուստով, հիսունին մոտ մի շատ երկարահասակ ու թախծոտ տեսքով մարդ մոտեցավ, ձեռքս փոքրիկ գրքոյն դրեց ու հարցրեց՝ հավատու՞մ ես, տղա՛ս:

Առաջին անգամ էի սրա նման թախծոտ մարդ տեսնում: Հասակը՝ վեց ոտնաչափ երկու-երեք մատնաշափ, քաշը հազիվ մի հիսունինգ կիլո, չսափրված ու խոր հավատացյալ: Ինձ թվաց, թե հիմա պիտի փող մուրա, որովհետև ավելի շատ քաղցած շրջմոլիկի էր նման, քան բարեպաշտի, բայց ուղղակի կրոնական գրքոյնը ձեռքս դրեց ու հարցրեց, թե հավատու՞մ եմ: Գրքոյնի վերնագիրը «Խոսք թերահավատներին» էր, և մարդը ճիշտ հասցեով էր եկել: Չգիտեի: Էդ պահին պատկերացում չունեի: Ինքս ինձ կորցրել էի: Աշխարհ տեսած մարդու կեցվածքով սիգարը թերանս տարա ու ասացի՝ չէ, չեմ կարծում, թե հավատում եմ, բայց համակիր եմ:

Եղբայր, ասաց բարեպաշտը, Բրայամ Յանգի ավետարանով կարող եմ հոգիդ փրկել:

Տասնինգ րոպեից մեկնում եմ:

Ոչի՞նչ: Մի անգամ մեկին չորս րոպեում եմ փրկել:

Ի՞նչ պիտի անեմ:

Ոչ մի բան էլ չպիտի անես, տղան: Որ իմանաս, թե հոգու փրկությունը ուզածդ մարդուն ի՞նչ մոտ է: Ուզածդ մարդուն: Ինքս էլ եմ ժամանակին պորտաբռոյծի մեկը եղել: Պճնվող, խմող, ծխող, թուղթ ու զառ խաղացող, ձի սիրող ու ման եկող: Էս ամենը եղել եմ: Մի գիշերվա մեջ փոխվեցի:

Ո՞նց:

Բախտս չբերեց, քունս փախավ: Սկսեցի մտածել ու հասկացա, որ ճշմարտությանը դեմ գնալն իմս չէ:

Ո՞ր ճշմարտությանը:

Աստծու սուրբ խոսքին: Ոչ մեկն էլ հոգու խորքում ճշմարտությանը դեմ չէ: Էդ բոլոր հիմարություններն էլ անում են, որովհետև չգիտեն՝ ուզածներն ինչ է:

Լավ, ուզածներն ի՞նչ է:

Ճշմարտությունը: Ամեն խաղամոլ, ամեն կնամոլ, բանկ թալանող, հարբեցող, աշխարհը ոտնատակ տվող ուզում է ճշմարտությունը գտնել: Ու՞ր ես գնում:

Ուզում եմ լյու Յորք գնալ:

Չէ, էնտեղ ճշմարտություն չես գտնի: Էս վերջին երեսուն տարում վեց անգամ եղել եմ էնտեղ: Ուզում ես՝ աշխարհը ոտնատակ տուր, մեկ է՝ բան չես գտնի, որովհետև էդպես բան չեն գտնում: Ուղղակի պետք է վերաբերմունքդ փոխես:

Պիտի որ դժվար չլինի:

Ավելի հեշտ բան չկա:

Համաձայն եմ: Կորցնելու բան չունեմ: Ո՞նց եմ վերաբերմունքս փոխելու:

Ուղղակի, ասաց բարեպաշտը, պիտի պատասխան-ներ փնտրելով թողնես ու հավապաս:

Հավատա՞մ: Ինչի՞ն:

Ո՞նց ինչին: Ամեն ինչին: Ինչ մտքովդ անցնի. ծա-խին, աջին, իյուսիսին, արևելքին, հարավին, արև-մուտքին, վերելքին, վայրէջքին, չորս կողմին, ներսին, դրսին, տեսանելի-անտեսանելիին, լավին ու վատին, ոչ մեկին ու երկուսին: Գաղտնիքն էս է: Հիսուն տարի տևեց, մինչև հասկացա:

Էդքան բա՞ն:

Էդքան բան, տղա՞ս:

Է, լա՞վ: Հավապո՞մ ես:

Տղա՞ս, ասաց բարեպաշտը, հոգիդ փրկված է: Հիմա կուզես՝ Նյու Յորք գնա, կուզես՝ ուրիշ տեղ, ամեն ինչ լավ է լինելու:

Երանի:

Մ' կտեսնես:

Հսկա ավտոբուսը մայթեզրին մոտեցավ, ու ես բարձրացա: Երկարահասակ նիհար բարեպաշտը, հպարտորեն ժպտալով, լուսամուտին մոտեցավ:

Փրկածս հիսունյոթերորդ հոգին ես, ասաց:

Դե, բարո՞վ մնաս: Խորհրդիդ համար շնորհակալ եմ:

Ես էլ եմ շնորհակալ: Չմոռանաս: Ուղղակի հավա-տա:

Չեմ մոռանա: Կիավատամ:

Ամեն ինչին, ասաց:

Վարորդը շարժիչը միացրեց:

Ինչ լինի, ասացի:

Ավտոբուսը ծխի քուլա հազար ու կամաց մեկնեց:

Կարծում էի, թե սոլթեյքսիթցի բարեպաշտին խաբելու եմ ու իմ նախկին՝ կարդացած ու անհավատ կեցվածքը հետ բերեմ, բայց չարաշար սխալվում էի,

որովհետև ինձնից անկախ՝ հոգիս *հենց* էլ փրկվել էր:  
Մեկնելուց տասը րոպե չանցած՝ ամեն ինչին հավատում էի, ինչպես բարեպաշտն էր ասել՝ աջին ու ձախին:  
Էն օրվանից մինչև օրս:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գեղեցիկ սպիտակ ձիու ամառը.....	3
Մեր՝ Հանֆորդ գնալու պատմությունը .....	12
Նոնենիները .....	21
Մեր ապագա պոետներից մեկը՝ կասեի.....	34
Հիսուն յարդ վագքը .....	38
Իսկական հնառճ սիրավեպ սիրային քառյակներով ու մյուս բաներով .....	48
Իմ զարմիկ հոետոր Տիգրանը .....	58
Երիցական երգչախմբի երգիչները .....	66
Կրկեսը .....	79
Երեք լողորդներն ու կրթված նպարավաճառը .....	88
Շոգեքարշ 38 անունով օջիբվան.....	100
Աշխարհ տեսած մարդու խորհուրդները ճամփորդող ամերիկացուն.....	111
Խեղճուկրակ արաբը .....	114
Խոսք թերահավատներին .....	123

Ուիլյամ Սարոյան  
ԱՆՈՒՆ ԱՐԱՄ Է

William Saroyan

**MY NAME IS ARAM**

Թարգմանիչ՝ Նունե Թորոսյան

Խմբագիր՝	Զավեն Բոյաջյան
Հրատ. խմբագիր՝	Արքմենիկ Նիկողոսյան
Տեխն. խմբագիր՝	Արարատ Թովմասյան
Էջադրող՝	Նարինե Հովհաննիսյան
Սրբագրիչ՝	Անժելա Ավագյան
Կազմը՝	Վիտալի Ասրինի

Շապիկի դիմերեսին օգտագործված է  
Սարոյանի հեղինակած նկարը

թվայնուց 5 1915. օմօ Տաճար



Անտարես

«Անտարես» հրատարակչառուն  
ՀՀ, Երևան-0009, Մաշտոցի պ. 50ա/1  
Հեռ.՝ (+374 10) 58 10 59, 58 76 69  
antares@antares.am  
www.antares.am